

Բ. ԹԱՇԵԱՆ

ՀԱՅԿԱՐԱՆ

Բ. ԳԻՐՔ

Ժ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

425.217
p19.01
2-AP
1980


Բ. Թ Ա Շ Ե Ա Ն

ՀԱՅԿԱՐԱՆ

Բ. ԳԻՐԳ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԳԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY

Ժ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

 ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1980

ՊԵՑՐՈՒԹ



1. ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՋ

1

Ձյուշութեամբ եւ յուզումով բարձրացայ դպրոցին սանդուխներէն: Տեսուչին ձայնը կը լսուէր հանդիպակաց դասարանէն: Կանգ առի դրան առջեւ եւ խոր շունչ քաշեցի: Մտնե՞լ թէ չմտնել:

Վերջապէս որոշումս տուի. հրեցի դուռը եւ մտայ ներս: Տեսուչը վայրկեան մը դարձաւ իմ կողմս եւ շարունակեց դասը: Կը բացատրէր արեւու, երկրի եւ յուանի փոխադարձ յարաբերութիւնները, ձգողութեան օրէնքը:

— Ձաւակներս, — կ'ըսէր ան, — մեր երկիրը տափարակ չէ, ինչպէս կ'երեւայ մեզի: Կլոր դունդ մըն է եւ օր ու գիշեր կը դառնայ արեւուն շուրջը: Նախ՝ քսանըջորս ժամը անգամ մը կը դառնայ ինք իր վրայ, իսկ տարին մէկ անգամ կը պտըտի արեւուն բոլորտիքը: Լուսինն ալ, իր կարգին, ամէն շորս շարաթը անգամ մը կը դառնայ երկրին շուրջը:

— Պարոն տեսուչ, — լսուեցաւ յանկարծ ձայն մը,
— Հապա ո՞վ կը հրէ, որ երկիրը այդպէս կը դառնայ:

— Այո՛, ի հարկէ, ո՞վ կը հրէ, — վրայ բերաւ տեսուչը, — մէկը պէտք է հրէ, որ անշունչ առարկան շարժի: Բայց միայն երկիրը չէ, որ կը շարժի. արեւ, լուսին, մեծ ու փոքր աստղեր նոյնպէս կը շարժին, կը թաւալին եւ զիրար կը քաշեն անտեսանելի ուժերով: Աւետի՛ս, ձեռքդ ինձի տուր, — յանկարծ վարձաւ տեսուչը ինձի:

Պայուսակս վար դրի եւ ձեռքս երկարեցի առաջ:
— Քաշէ՛ բոլոր ուժովդ եւ աղատէ՛ ձեռքդ, եթէ կրնաս, — աւելցուց տեսուչը:

Քաշեցի բոլոր ուժովս եւ սկսայ հանդարտօրէն դառնալ տեսուչին բոլորաթիքը:

— Այսպէս, դաւա՛կներս, արեւը իրեն կը քաշէ մեր երկրի հսկայական գունդը, որ կամաց — կամաց կը դառնայ անոր շուրջ: Գնա՛ նստէ այնտեղ, տղա՛ս, — ըսաւ ապա ինձի՝ ցոյց տալով առաջին նստարանը:

Գացի նստայ երկիւղած ու երջանիկ: Սքանչացած կը նայէի տեսուչին, ինչպէս դաւակը կը նայի իր մասսաուն հօրը:

Քիչ ետք դասը վերջացաւ: Երազէ նոր արթնցածի պէս սկսայ շուրջս նայիլ:

Այնպէ՛ս երջանիկ էի...

ԱՌԱՄ. — Ականջը՛ երկու, լեզու՛ մէկ.
Երկու լսէ, մէկ խօսէ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տեսուչ. — Տնօրէն:

Զգոգութիւն. — Քաշողական գորութիւն. երկիրը ամէն բան իրեն քաշելու գորութիւն ունի:

Թաւալիլ. — Երջիլ, դառնալ, զլորիլ:

Բոլորաթիւ. — Եւրջը, չորս կողմը:

Սքանչացած. — Հիացած, զարմացած:

Իմաստուն. — Խելացի:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ինչի՞ մասին կը խօսէր տեսուչը դասարանին մէջ: — Ի՞նչ է ձգոգութեան օրէնքը: — Ո՞վ գտաւ այդ օրէնքը: — Մեր երկիրը ի՞նչ ձև ունի: — Կրնա՞ք մոլորակներու ամուններ տալ: — Տեսուչը ի՞նչպէս կը բացատրէր երկնային մարմիններու շարժումները: — Ինչո՞ւ երջանիկ կը զգար իմ հիմք այս գրուածքին հեղինակը: — Գու՞ք ալ մոյճ երջանկութիւնը կը զգա՞ք դասի ատեն:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Անուն կամ գոյական կը կոչուին այն բառերը, որոնք անձ, անասուն կամ իր կը ցուցնեն. օրինակ՝ տեսուչ, առիւծ, դպրոց:

Ի՞նչ կը ցուցնեն հետեւեալ բառերը. — մատիտ, լուսին, ոչխար, հայ, ուսուցիչ, տետրակ:

2. Ա Ռ Ա Ջ Ի Ն Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ը

1

Երբ Ադամ եւ Եւա դրախտէն արտաքսուեցան, բոլոր կենդանիները ցրուեցան հոս ու հոն: Օձը մորենիներու տակ սպրդեցաւ եւ աներեւոյթ եղաւ: Խոյրերը, ոչխարները, եղնիկը հեռացան սարսափահար:

Կատաղի ցուրը մոնչեց ու անցաւ դնաց: Ձին սկսաւ սրընթաց արշաւել: Առիւծը ետեւ դարձաւ եւ ահարկու նայուածք մը ձգեց մեղաւոր մարդուն վրայ:

Վագրը, գայլը, բոլոր վայրագ գազանները կանգ առին, սպառնալից գոչիւններ արձակեցին, յետոյ գացին ուրիշ որսերու վրայ յարձակելու:

Արծիւն ու անդրը աղաւնիներ կը հալածէին:

Այն ատեն՝ Ադամ, սիրտը դառնութեամբ լեցուն, ըսաւ. «Դեռ երէկ բոլոր այս կենդանիները կը հնազանդէին ինձի եւ կը սիրէին մեզ. հիմա շատեր ահարկեկ կը հեռանան մեզմէ, ուրիշներ կը համարձակին սպառնալ: Աստուծոյ ստեղծած այս էակները ուրեմն թշնամի դարձած են մեզի»:

2

Դեռ խօսքը չէր աւարտած, երբ զգաց որ մէկը իր ձեռքը կը լղէ, եւ շունը տեսաւ իր ոտքերուն առջեւ:

Հէզ կենդանին քայլ առ քայլ հետեւեր էր իրեն. կարծես ցաւակից էր իր տիրոջը:

Ադամ ձեռքը անոր գլխուն վրայ դրաւ, իսկ Եւա արցունքները սրբեց եւ սկսաւ զգուել հաւատարիմ կենդանին:

Շունը իր հնազանդութիւնն ու երախտագիտութիւնը յայտնեց պոչը շարժելով եւ իր տէրերու ոտքերուն քսուելով: Ապա ուրախութեամբ սկսաւ հաջել: Ադամ, յուզուած, ըսաւ.

— Աստուած ամէն բան չառաւ մեր ձեռքէն, քանի որ բարեկամ մը թողուց մեզի:

Այսպէս, առաջին օրէն, շունը բարեկամ եղաւ մարդուն:

ԱՌԱՄ.— Աստուծոյ դատաստանը ծուռ չ'ըլլար, սուր կ'ըլլայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտաքսուիլ.— Դուրս հանուիլ, վախտուիլ:

Մորեմի.— Տեսակ մը փշոտ թուփ, որ թութի պէս պտուղ ունի:

Սպրդիլ.— Կամաց մը մտնել (տեղէ մը ներս):

Խոյ.— Արու ոչխար:

Վայրագ.— Վայրենի, կատաղի, անգութ:

Ահարկու.— Սարսափելի, սոսկալի:

Ահարեկ.— Սաստիկ վախցած:

Հէզ.— Խեղճ, թշուառ: Կը գրուի նաև հէզ:


Յաւակից.— Ուրիշի ցաւին մասնակից:

Գգուել.— Փայփայել, շոյել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Գիտե՞ք Ադամի եւ Եւայի դրախտէն արտաքսուելու պատմութիւնը: — Ի՞նչ ըրին վայրի կենդանիները: — Այն ատեն ի՞նչ ըսաւ Ադամ ինձ իրեն: — Ի՞նչ պատահեցաւ այդ պահուն: — Բոլոր կենդանիներուն մէջ ո՞րն է ամենէն հաւատարիմը. ամենէն վայրագը, ամենէն զօրաւորը: — Ընտանի կենդանիներէն ո՞րը կը սիրէ՞ք ամենէն աւելի:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ — Անունը կամ գոյականը երկու տեսակ է, — յատուկ եւ հասարակ: Յատուկ կը կոչուին այն անունները, որոնք մասնաւոր անձ մը կամ տեղ մը կը ցուցնեն. օրինակ՝ Յակոբ, Հայաստան, Արաբս:

Դուք ալ գտէք հինգ յատուկ անուններ: Ըսէ՛ք ճան, թէ ի՞նչ կը ցուցնեն հետեւեալ անունները, — Լիբանան, Կիպրոս, Ատլանտեան, Մասիս, Սեւան, Արագած:



3. Թ Ռ Զ Ո Ի Ն Ի Մ Տ Ա Ծ Ո Ի Մ Ը

Ես ալ կ'ապրէի փոքրիկ տան մը մէջ,
Ազատ ու անփոյթ.

Աշխարհն ինձ համար կըլոր էր անվերջ,
Կեդուր՝ կապոյտ:

Բայց յետոյ աչքս երբ բացի յանկարծ,
Փոքրիկ բոյն մըն էր.

Ըսի՛ աշխարհը յարդէ է շինուած,
Ու մայրս է շիներ:

Օր մըն ալ, առտուն, գլուխըս հանած
Բոյնէն մայրական,

Տեսնեմ՝ աշխարհը տերեւէ շինուած,
Մեր տունն ալ՝ վըրան:



Հինա կը բռչիմ ես բեւատարած՝
Օդին մէջ վեր - վար,
Բայց թէ աշխարհը ինչէ՛ է շինուած,
Ա՛լ չեմ հասկընար...

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անփոյթ. — *Անհոգ:*

Թեւատարած. — *Քուկր տարածած:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Փոքրիկ բռնունը ի՞նչ կը մտածէր: — Ճախ ի՞նչպէս կ'երեւակայէր աշխարհը. յետո՞յ: — Ո՞րն է իր մտածումներուն մէջ ամենէն ճիշդը: — Ինչո՞ւ այլեւ չի գիտեր. թէ աշխարհը ինչէ՛ շինուած է. դուք գիտե՞ք:



4. Մ Ա Տ Ի Տ Ը

1

Այսօր իրագիտութեան դասի օրն է: Ուսուցիչը, դասի զանգը տրուելուն պէս, կը մտնէ դասարան, կը բարձրանայ իր ամպիոնը, կը բարեւէ մեզ եւ ձեռքը բռնած մատիտը ցոյց տալով, կը հարցնէ.

— Կրնա՞ք ըսել, թէ մատիտը քանի՞ մասէ կը բաղկանայ:

— Երկու մասէ, պարո՛ն. փայտի մաս եւ կապարի մաս, — կը պատասխանեն քանի մը տղաք:

— Հիմա լաւ ուշադրութիւն ըրէ՛ք ձեր մատիտներուն. նայեցէ՛ք, ի՞նչ կը տեսնէք փայտին մէջտեղը:

— Կապար, պարո՛ն, կը ըստ փայտին մէջտեղը կապար կայ:

— Կապար կ'ըսէք, բայց կապարի կը նմանի՞:

— Կը նմանի, պարո՛ն. կապարի գոյնն ալ այսպէս է:

— Պարո՛ն, — կ'աւելցնէ ուրիշ աշակերտ մը, — եթէ կապարն ալ թուղթի վրայ քսենք, ան ալ սեւ գիծեր կը գծէ:

— Իրաւունք ունիս, տղա՛ս. մատիտին մէջ զըտնուած մետաղը կապարի կը նմանի. բայց եթէ կապարը կրակին մօտեցնեմ, ի՞նչ կ'ըլլայ:

— Կը հալի, պարո՛ն, — պատասխանեցին տղաքը միարեան:

— Լա՛ւ, եթէ այս մատիտին մէջ զըտնուած մետաղն ալ կրակին մօտեցնենք, կը հալի՞ կ'ըսէք:

— Եթէ կապար է, անպատճառ կը հալի:

— Մօտեցնենք, տեսնենք կը հալի՞:

2

Ուսուցիչը լամբարի մը վառած պատրոյգին վրայ կը բռնէ մատիտին մէջի մետաղը. քիչ մը կը սպասէ, յետոյ կը հարցնէ.

— Կը հալի՞:

— Ո՛չ, պարո՛ն, չի հալիր:

— Քիչ մըն ալ սպասենք. հալեցա՞ւ:

— Ո՛չ, պարո՛ն:

— Եթէ կապար ըլլար, մինչեւ հիմա պիտի հալէր, բայց կը տեսնէք, որ չհալեցաւ: Ուրեմն կապար չէ եղեր: Սակայն ուշադրութիւն ըրէ՛ք, հիմա այս մետաղը կտաւով սրբենք (կը սրբէ). ի՞նչ կը տեսնէք:

— Օ՛ր, կտաւը ածուխի պէս սեւցաւ:

— Ըսել է կապար չէ, այլ ածուխի նման մետաղ մըն է, որուն «կրաֆիթ» կ'ըսեն: Այս մետաղը հողին տակէն կը հանեն, փոշիի կը վերածեն, յետոյ տեսակ մը խիստով կը շաղուեն եւ այս տեսակ ձողիկներ կը շինեն, վերջն ալ մատիտի փայտերուն մէջ կը դնեն: Հիմա տեսաք, որ այդ մետաղը կապար. չէ եղեր, այլ...

— «Կրաֆիթ» է, պարո՛ն, — վրայ բերին տղաքը ամէն կողմէ:

ԱՌԱՄ.— Ամէն բանի վայսնանն է գովելի:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամպիոն.— Բեմ, ուսուցչին նստած տեղը դասարանին մէջ:

Կապար.— Կապարի զարնոց կակուղ մետաղ մը:

Պատրոյգ.— Մոմի կամ կանթեղի մէջ զրուած բաժապէթ եւ, որ կը վառի:

Խիւս.— Ալիւրով կամ ուրիշ նիւթով պատրաստուած լափա:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ է այսօրուան դասին Յիւրը: — Ի՞նչ կը սորվիք իրագիտութեան դասին: — Քանի՞ մասէ կը բաղկանայ մատիտը. որո՞նք են: — Կապա՞ր է մատիտին մէջ դրուած մետաղը. հապա ի՞նչ է: — Ի՞նչ տեսակ մետաղ է «կրաֆիթ»ը, չէ՞ք գիտեր. սպասեցէք յաջորդ դասին:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հասարակ կը կոչուին այն անուանները, որոնք կրնան տրուիլ միեւնոյն տեսակէ ամէն անձի, անատունի կամ իրի. օրինակ՝ մարդ, վագր, ծով:

Գտէ՛ք տասը յատուկ եւ տասը հասարակ անուաներ: Յոյց տուէ՛ք ձեր դասին մէջ գտնուած յատուկ եւ հասարակ գոյականները:

5. Ի՞նչ ՊԵՍ ԿԸ ԳՐԷԻՆ ՀԻՆ ԱՏԵՆ

1

Մեր գործածած մատիտներուն ամենահին ձեւը կը կոչուէր «սթիլո», երկար եւ սուր մետաղ մը, որով հին ատեն կը գրէին հողէ շինուած կղմիտրներու վրայ:

Յետոյ գտնուեցաւ եւ երկար ատեն գործածուեցաւ կաւիճը: Աւելի ուշ, երբ թուղթը հնարուեցաւ, մարդիկ սկսան գրել փոքր վրձիններով, ապա նաեւ սաղի փետուրներով:

ԺՁ. դարուն, քանի մը վաճառականներ մտածեցին գործածել կապարը, որ յատկութիւնը ունի սեւ գի-

ծեր քաշելու թուղթին վրայ: Ապա սկսաւ «կրաֆիթ»ի օդտադործումը մատիտներու շինութեան համար:

«կրաֆիթ»ը հանքային կարծր մարմին մըն է, որ երբ թուղթին վրայ քսուի՝ սեւ հետք մը կը ձգէ առաւել կամ նուազ փայլով, հանքի տեսակին համեմատ:

Մատիտի համար գործածուած «կրաֆիթ»ը շատ մաքուր պէտք է ըլլայ, որպէսզի կարելի եղածին՝ չափ սեւ գիծ ձգէ թուղթին վրայ: Այս տեսակէտէն Պոհեմիոյ եւ Սիպերիոյ հանքերը լաւագոյններն են:

2

«կրաֆիթ»ը կ'արտահանուէր մեծ քանակութեամբ եւ, առանց որեւէ փոփոխութեան, կը կտրուէր սղոցի միջոցով ու կը վերածուէր մատիտի: Այս նախնական ձեւը գործնական չէր անշուշտ, քանի որ «կրաֆիթ»ի տաշուած եւ մաքուր կտորները չէին կրնար օդտադործուիլ:

Հետագային, անցեալ դարու սկիզբները, սկսան «կրաֆիթ»ի փոշին խառնել կաւի հետ եւ ամխացնելով վերածել կարծր մարմինի մը, որ շատ յարմար էր մատիտի շինութեան:

Այս դիւտին շնորհիւ կարելի կ'ըլլար օգտագործել «կրաֆիթ»ի մանր կտորները, որոնք բանի մը չէին ծառայիւր առաջ:

3

Ասկէ մօտ յիսուն տարի առաջ, Գերմանիոյ Նիւրնպերկ քաղաքին մէջ կը գտնուէին քսանէ աւելի մատիտի գործարաններ եւ կ'արտադրէին տարեկան երեք հարիւր միլիոն մատիտ:

Այդ գործարաններուն մէջ կ'աշխատէին մօտ եօթը
հազար բանուորներ, եւ կ'օգտագործուէին Սիպերիոյ
լուսադոյն հանքերը:

Մինչեւ հիմա մատիտի համար գործածուած է
«կրաֆիթ»ի ընդհանուր արտադրութեան 8 - 10 առ
հարիւրը միայն, ինչ որ կը նշանակէ, թէ դեռ շատ
դարեր կրնան օգտագործուիլ «կրաֆիթ»ի հանքերը:

ԱՌԱՄ.— ձրագն իր տակը լոյս չի տար:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտահանել.— Դուրս հանել:

Հետագային.— Աւելի ուշ, աւելի ետք:


ԺՋ.— Տասնըվեցերորդ:

Ածխացնել.— Ածուխի վերածել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ է «սփիւթ»ը: — Գրելու համար ինչե՞ր
կը գործածէին հին ատեն: — Ի՞նչ տեսակ համբ է «կրաֆիթ»ը: —
Ի՞նչպէս կը շինեն մատիտը: — Ո՞ւր կը գտնուին «կրաֆիթ»ի համ-
բերը: — Ո՞ր երկիրները մատիտ կ'արտադրեն ամենէն աւելի: —
Մատիտի տեղ հիմա ի՞նչ կը գործածեն մարդիկ:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Թիւր երկու է, եզակի եւ
յոզմակի: Անուն մը եզակի է, երբ ցոյց կու տայ մէկ
անձ, մէկ անասուն կամ մէկ իր. օրինակ՝ մանչ, ձուկ,
դասարան: Անուն մը յոզմակի է, երբ ցոյց կու տայ
մէկէ աւելի անձ, անասուն կամ իր. օրինակ՝ մանչեր,
ձուկեր, դասարաններ:

Ձեր այսօրուան դասին մէջ գտնուած եզակիները
յոզմակիի, իսկ յոզմակիները եզակիի վերածեցէ՛ք:



6. Ո՞Վ ՈՒՆԻ . . .

Իմ հայրենի երկրի պէս
Զքնաղ երկիր ո՞վ ունի.
Անոյ՞ բուրմունք ու պէս-պէս
Ծառ ու ծաղիկ ո՞վ ունի . . .

Իմ հայրենի երկրի պէս
Զուլալ ազբիւր ու գետակ,
Խոր-խոր ձորեր անյատակ,
Հպարտ լեռներ ո՞վ ունի . . .

Իմ հայրենի երկրի պէս
 Կապոյտ երկինք, ջինջ ու պարզ,
 Աստղեր պայծառ ու անհաս,
 Արեւ, լուսին ո՞վ ունի...

Իմ հայրենի երկրի պէս
 Քաջեր, սուրբեր անհամար,
 Տանար, գութեք ու կամար,
 Ամրոց ու բերդ ո՞վ ունի...

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զքնաղ.— Անեման, սքանչելի, փառաւոր:

Բուրմումք.— Անուշահատութիւն, քաղցր հոտ:

Զուլալ.— Վճիտ, յստակ, պայծառ:

Անյատակ.— Յատակ չունեցող, խորունկ:

Անհաս.— Անհասանելի, շատ բարձր:

Կամար.— Աղեղի մեւով շինուածք, փոխարերարար՝ եկեղեցի:

Ամրոց.— Բերդ, պատնէշ, պարիսպ, ամբուլթիւն:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Այս ստանաւորին հեղինակը ի՞նչ բաներ կը տեսնէ իր հայրենի երկրին մէջ: — Ուրիշ երկիրներու մէջ չկա՞ն իր տեսածները: — Մեզի համար ո՞րը աւելի քանկազին է, մեր ունեցա՞ծը քէ ուրիշին ունեցածը: — Կրնա՞ք ուրիշ բաներ աւելցնել այս ստանաւորին մէջ յիշուածներուն վրայ:



7. Փ Ո Ք Ր Ի Կ Հ Ո Վ Ի Ի Ը

1

Փոքրիկ հովիւ մը իր հոտը կ'արածէր բաց դաշտի մը մէջ: Ոչխարները կը ճարակէին քիչ անդին, իսկ ինք, արմուկը մահակին կոթնցուցած, երկա՛ր — երկա՛ր կը մտածէր:

Յանկարծ գլակը զետին դարկաւ ու գոչեց.
 — Լուծեցի՛, լուծեցի՛...:

Ճիշդ նոյն պահուն հոնկէ կ'անցնէր թաղաւորը, իր փառաւոր կառքին մէջ բաղմած: Ձիերը խրտչեցան. թաղաւորը նշան ըրաւ, որ կառքը կեցնեն, ապա հրամայեց իր մօտ բերել փոքրիկ հովիւը: Հրամանը կատարուեցաւ:

— Ինչո՞ւ վախցուցիր ձիերը, մանչո՛ւկ, — հարցուց թաղաւորը:

— Ես դանոնք վախցնել չուզեցի, տէ՛ր թաղաւոր, — պատասխանեց հովիւը: — Մտածեցի, մտածեցի եւ

հանելուկ մը լուծեցի: Եւ ա'յնքան ուրախացայ, որ
զգալս զետին զարկի:

— Ո՞րն է այդ հանելուկը:

— Ահաւասիկ — «Ի՞նչ է այն, որ մարդոցմէն բար-
ձրը է եւ հաւէն փոքր»:

Թագաւորը մօրուքը առաւ ափին մէջ եւ սկսաւ
մտածել, բայց չկրցաւ լուծել հանելուկը. հարցուց
պալատականներուն. անոնք նոյնպէս պատասխան մը
չգտան: Այն ատեն դարձաւ փոքրիկ հովիւին.

— Ըսէ՛ տեսնեմ, մանչո՛ւկ, ի՞նչ է այն, որ մար-
դոցմէ բարձր է եւ հաւէն փոքր:

— Գղա՛կը, տէ՛ր թագաւոր: Զէ՞, որ ան աւելի
փոքր է, քան հաւը, եւ մեզմէ աւելի բարձր է, երբ
զլուխնիս կը դնենք:

— Ճիշդ է, — խոստովանեցաւ թագաւորը: — Վաղը
պալատ եկուր, բան մը պիտի ըսեմ քեզի. եթէ յա-
ջողիս ըսածս ընել, մեծ պարգևներու պիտի արժա-
նանաս:

2

Յաջորդ օրը պալատ զնաց փոքրիկ հովիւը իր
հովուական հագուստներով: Թագաւորը, որ իրեն կը
սպասէր, ըսաւ անոր.

— Կ'ուզեմ, որ ինձի համար դոնես զառնուկ մը,
որ ո՛չ ճերմակ ըլլայ, ո՛չ սեւ, ո՛չ մոխրագոյն եւ ո՛չ
ալ ուրիշ որեւէ գոյն ունենայ:

— Շատ լաւ, տէ՛ր թագաւոր, — խոստացաւ փոք-
րիկ հովիւը եւ վերադարձաւ իր հօտին քով:

Յաջորդ առաւօտ կրկին զնաց պալատ:

— Գտա՞ր, — հարցուց թագաւորը:

— Գտայ, տէ՛ր թագաւոր, — պատասխան տուաւ
խելացի ու համարձակ հովիւը: — Փարախիս մէջ պա-

հեցի. կրնաս մէկը ղրկել ու բերել տալ, բայց ո՛չ Եր-
կուշարթի օր ղրկէ, ո՛չ Երեքշարթի, ո՛չ Չորեքշար-
թի, ո՛չ Հինգշարթի, ո՛չ Ուրբաթ, ո՛չ Շաբաթ, ո՛չ ալ
Կիրակի, այլ տարբեր օր մը:

Ժպտեցաւ թագաւորը, հաւնեցաւ այս խելացի
պատասխանին, կանչեց պալատականներէն մէկը ու
ըսաւ անոր.

— Ա՛ռ այս տղուն զգալը եւ զայն սակիով լեցուր:

ԱՌԱՄ. — Խելքը տարիքիմ մէջ չէ,
գլխում մէջ է:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճարակիլ. — Արածիլ, ուտել (խոտ):

Մահակ. — Հովիւի հաստ դաւազան:

Գղակ. — Գլխարկ, գլխանոց:

Պարգեւ. — Նուէր:

Փարախ. — Ոչխարներու գոմ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ինչի՞ մասին կը մտածէր փոքրիկ հովիւը:

— Ո՞վ անցաւ այդ պահում. ի՞նչ պատահեցաւ: — Ի՞նչ խօսակցու-
րիւմ տեղի ունեցաւ քաղաւորին եւ հովիւին միջեւ: — Յաջորդ
օրը քաղաւորը ի՞նչ առաջարկեց փոքրիկ հովիւին: — Ի՞նչ պա-
տասխանեց այս վերջինը: — Կը հաւանի՞ր պատասխանին: — Եր-
եւեկ պատահէր ինչ որ պատահեցաւ փոքրիկ հովիւին, ի՞նչ պիտի
ընէիք դուք:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Բառ մը յոգնակիի վերա-
ծելու համար ծայրը կը կամ ներ մասնիկը կ'աւելցը-
նեն: Եր կ'աւելցնեն, երբ բառը միավանկ է. օրինակ՝
մարդ — մարդեր, գիրք — գիրքեր, ջուր — ջուրեր: Ներ
կ'աւելցնեն, երբ բառը բազմավանկ է. օրինակ՝ մա-
տիտ — մատիտներ, դասարան — դասարաններ, գլուխ —
գլուխներ:

8. Խ Ո Ր Ա Մ Ա Ն Կ Գ Ա Յ Լ Ը

1

Գայլը կանգ առաւ ոչխարներու փարսխին առջեւ, ծակէ մը ներս նայեցաւ եւ ըսաւ հոն բանտարկուած դառնուկին.

— Անուշիկ դառնուկ, ի՞նչ բարակ ոտքեր ունիս. խատուտիկ մանոցի կը նմանին: Մտիկ ըրէ, տե՛ս, մըժեղը ի՞նչպէս կը նուազէ: Դուրս ելի՛ր, պար մը պարէ. մժեղը պիտի նուազէ, դուն պիտի պարես:

— Դուն խորամանկ ես, գայլ աղբար, — պատասխանեց դառնուկը ներսէն, — կ'ուզես ոտքս ուտել, անոր համար կը գոզես:

— Մի՛ վախնար, սիրունի՛կս. ես այլեւս դառնուկի միս չեմ ուտեր:

— Ինչո՞ւ:

— Բուսակեր դարձայ եւ հոգիս հանգիստ է: Ո՞հ, անուշիկ դառնուկ, ի՞նչ կակուղ բուրդ ունիս, մետաքսի պէս: Եթէ թոյլ տաս, որ անկէ մաղ մը փըրցընեմ, մեծ բարիք ըրած պիտի ըլլաս ինձի:

— Ի՞նչ պիտի ընես թել մը մաղը:

— Իմ հին բարեկամս՝ խոյը երէկ ուլունքի հատիկ մը նուէր զրկեց գայլիկիս համար: Ուլունքը կ'ուզեմ մաղէն անցընել եւ զարդարել ձագուկիս վիզը: Օ՛ն, դուրս ելի՛ր:

— Շատ խորամանկ ես, կնքահայր. միտքդ զիս ուտել է:

— Մի՛ վախնար, սիրունի՛կս. չէ՞ որ քեզի ըսի, թէ հիմա բուսակեր դարձած եմ ես:

2

Գայլը, տեսնելով որ չի կրնար հրապուրել փոքրիկ ոչխարը, ուրիշ միջոցի դիմեց:

— Քու ամէն ինչդ, — ըսաւ, — լաւ է, մինչեւ իսկ լաւագոյն է, միայն մէկ բանի չեմ հաւնիր:

— Ի՞նչ բանի, գայլ աղբար, — հարցուց ոչխարը:

— Պոչ չունիս:

— Ի՞նչպէս թէ չունիմ:



— Չունիս. չէ՞ որ ծակէն կը տեսնեմ ես: Ամէն ինչդ տեղին է, միայն պոչ չունիս:

Ոչխարը պոչը ծակէն դուրս հանեց եւ պոռաց.

— Տե՛ս գայլ աղբար, տե՛ս, պոչ ըսածդ ասիկա չէ՞:

Գայլը հոտոտեց ոչխարին պոչը եւ աւելցուց.

— Չէ՛, ասիկա պոչ չէ:

— Հապա ի՞նչ է:

— Մանածի թել:

— Ի՞նչպէս թէ մանածի թել, — մայնց ոչխարը,
ատջեւի ոտքերով հրեց փականքը եւ բացաւ դուռը:
Հիմա լաւ մը նայէ՛, մանա՞ծ է թէ պոչ է:

Գայլն ալ ասոր կը սպասէր. խոյացաւ փարախէն
ներս, յափշտակեց ոչխարը եւ փախաւ անտառ:

ԱՌԱՄ.— Գայլը բուրգը կը փոխէ,
բնոյթը չի փոխեր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խատուտիկ.— Գեղեցիկ, սիրուն:

Մանոց.— Ճախարակ:

Խոյ.— Արու ոչխար:

Հրապուրելի.— Հմայել, կախարդել, մոլորեցնել:

Փակամբ.— Կղպանք:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Գայլը խորամանկ կենդանի է: — Ի՞նչ էր
իր նպատակը, երբ սկսաւ գովել ու շողոքոքել գառնուկը: —
Հասկցա՞ւ գառնուկը, թէ ի՞նչ էր գայլին դիտաւորութիւնը: —
Հապա ի՞նչպէս եղաւ, որ խաբուեցաւ եւ դուրս ելաւ փարախէն:
— Գայլի եւ գառան մասին ուրիշ պատմութիւններ գիտե՞ք: —
Կրնա՞ք «խաղալ» ձեր այսօրուան դասը:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Երբ անձայն յ-ով վերջա-
ցող բառ մը յոգնակիի վերածենք, ծայրի յ-ն կը կոր-
սուի. օրինակ՝ քահանայ — քահանաներ, հաւաքա-
ծոյ — հաւաքածոներ:

Յոգնակիի վերածեցէ՛ք հետեւեալ բառերը.— դրօշ,
պաշտօնեայ, ձեռք, գրասեղան, տուն, բրածոյ, մե-
քենայ, հանք, կաղամար:



9. Ա Ն Ձ Ի Գ Ի Տ Ե Ր . . .

Փոքրիկ Արփիկէն, սիրուն, լեզուանի.
Որ նուրբ ու խաբաեաչ մագեր ալ ունի,
Կը հարցնէ ինձի միամբտաբար—
«Ինչո՞ւ ներսակ են մագերդ, հո՛րեղրայր»:

Մինչ այսպէս կննտաւ հարցումներ կ'ընէ,
հարեալդ մը տըխտը գիտ կը վրդովէ:
Ու ես, ախա՜նայ, իր բարձ աշտին հետ
Կը համեմատեմ խորշումներս վե՛տ — վե՛տ:

Ի՞նչ ակնածանճով քովիկըս, խոհեմ,
կը նստի երբոր կարդամ կամ գրեմ,
Անմեղ համոզմամբ կը մտածէ ան,
Թէ ներմակ մագն է շնորհ հիտուրեան:

Բայց ան չի գիտեր, ա՛հ, չի գիտեր, որ
Գիտութիւնս ամբողջ, երկերս ալ բոլոր
Սիրով կը գոհեմ, փոխան իր մատղաշ
Հասակին, փոխան մագերուն խարտեաշ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՏԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Խարտեաշ.— Գորշ գեղին, կարմիրի զարնոջ (մագ):
- Վրդովել.— Խոտվել, յուզել:
- Ակամայ.— Ատանց ուզելու. չուզելով:
- Խորշում.— Կնճիտ, փոթ, ծալք (գէմքի վրայ):
- Վէտ — վէտ.— Ալիք — ալիք, ալիքի պէս իրարու յաջորդող:
- Ակնածանճ.— Պաակատանք, խոր յարգանք:
- Հիտուրիւն.— Շատ բան գիտնալ, գիտութիւն:
- Երկ.— Գործ, զբօսածք, գիրք:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ տեսակ աղջիկ էր Արփիմէ: — Հօ-
րեղորը ի՞նչ հարցուց օր մը: — Ճերմակ մագերը, խորշումները
ի՞նչ բանի մշամ են: — Հօրեղրայրը ի՞նչ կը մտածէր Արփիմէի
մասին:

10. Թ Ո Ւ Ղ Թ Ը

1

Ուսուցիչը պատուիրած էր Ռուրիկին՝ թերթ մը
թուղթ առնել, աղէկ մը դիտել զայն և իրրեւ շարա-
դրութիւն զրի առնել իր դիտողութիւնները:

— Ա՛հ, — կ'ըսէր շուարած Ռուրիկը, — այս թուղ-
թը ճերմակ է, բայց ուրիշ բան չեմ գիտեր, որ զրեմ:
Դուն բան մը դիտե՞ս, Աննի՛կ, — հարցուց քրոջը:

— Կրնաս բռել, որ այդ թուղթին թերթը բարակ
է, — պատասխանեց քոյրը:

— Ատիկէ ի՞նչ կ'ելլէ, — յարեց Ռուրիկ, տեսնելով
որ դործը պիտի երկարի:

— Ատիկէ ան կ'ելլէ, որ հաստ թուղթեր ալ կան:
Նայէ սա բառարանիդ կողքը, ո՛րքան հաստ է:

— Աղէ՛կ, սա ալ զրենք: Ուրիշ բան գիտե՞ս:

— Ի՞նչ է պատճառը, որ բառարանիդ էջերը դի-
րութեամբ կը դառնան, առանց ծալուելու:

Ռուրիկ պահ մը մտածեց, ապա ըսաւ, թէ պատ-
ճառը չէր գիտեր:

— Որովհետեւ թուղթը ճկուն է և գիմացկուն, —
բացատրեց Աննիկ:

— Դիմացկո՞ւն բսիր. կեցիր որ ցուցնեմ քեզի, թէ
ո՛րչափ դիմացկուն է, — զոչեց Ռուրիկ և թերթը պա-
տընեց:

2

Աննիկ առաւ պատուած թերթը և սկսաւ ուշա-
դրութեամբ քննել:

— Նայէ՛, — ըսաւ երկար դիտելէ ետք, — թուղ-

թին ծայրը շատ բարակ թելեր կ'երեւին. ի՞նչ են ասոնք:

— Վա՛յ, իրա՛ւ է, — դռնէնց Ռուբիկ, որ սկսեր էր շահագրգռուիլ քրոջը տուած բացատրութիւններով: — ասոնք թելերը չե՞ն այն քուրջերուն, որոնք կը գործածուին թուղթ շինելու համար:

— Հաւանական է:

— Հիմա ես քեզի հարցնեմ, — ըսաւ Ռուբիկ, — տեսնեմ կրնա՞ս պատասխանել. ինչո՞ւ թուղթին վրայ գրելը դիւրին է, իսկ լաթին վրայ՝ դժուար:

Աննիկ այնպէս ձեւացուց, թէ չի կրնար պատասխանել: Այն ատեն Ռուբիկ, յաղթականի ձեւեր ատնելով, աւելցուց.

— Որովհետեւ թուղթը ողորկ է: Ասկէ զամ՝ շատ աժան է եւ ատոր համար ալ «շատ թուղթ մրոտել» կու տան մեզի:

Այս ըսելէ ետք գրիչը ձեռք առաւ եւ սկսաւ գրել հետեւեալ շարադրութիւնը.

«Այս թուղթը ճերմակ է եւ ողորկ: Նաեւ բարակ, ճկուն եւ զիմացկուն է: Թուղթ շինելու համար հասարակ քուրջ կը գործածուի, այս պատճառով ալ թուղթը աժան կը ծախուի»:

Ռուբիկ դեռ չէր գիտեր, թէ ուրիշ ի՞նչ բաներ կը գործածուին թուղթ շինելու համար:

ԱՌԱԾ.— Կէս գիտունը արհամարհոտ կ'ըլլայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճկուն.— Կակուղ:

Շահագրգռուիլ.— Հետաքրքրուիլ:

Հաւանական է.— Կարելի է, կրնայ ըլլալ:

Ողորկ.— Հարթ, հաւասար, շիտակ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Թուրիկ ինչի՞ մասին շարադրութիւն պիտի գրէր: — Ո՞վ օգնեց իրեն, ի՞նչ ձեւով: — Գու՞մ ալ կրնա՞ք շարադրութիւն մը գրել բուզրի մասին: — Ի՞նչ կը նշանակէ «բուզր մրոտել»: — Թուղթին բոլոր տեսակները նոյն գի՞ճը ունին: — Գուրչէն զատ ուրիշ ի՞նչ բաներ կը գործածուին բուզր շինելու համար:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Անունի մը կամ գոյականի մը վերջաւորութիւնը կը փոխուի. այս փոփոխութիւնը կը կոչուի հոլովում: Վեց տեսակ հոլով կայ — ուղղական, հայցական, սեռական, տրական, բացատական, գործիական: Ուղղականը կը պատասխանէ ո՞վ հարցման. օրինակ՝ մեր ուսուցիչը բարի է. ո՞վ բարի է. ուսուցիչը:

Այս օրինակին մէջ ուսուցիչը ուղղական հոլով է: Չեր այսօրուան դասին մէջ ուղղական հոլովներ կա՞ն. որո՞նք են:





11. ԿԵՆԿԱՆԻՆԵՐԸ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

1

Կենդանիները երաժշտութիւնը կը սիրէ՞ն :

Այո՛, մինչև իսկ կան այնպիսի կենդանիներ, որոնք շատ կը սիրեն նուազը և խորապէս կ'ազդուին անկէ :

Աւանդութեան մը համաձայն, յոյն նշանաւոր երաժշտապէս Արիօն, նաևոյ ճամբորդած ատեն, յանկարծ ծով նետուեցաւ, որովհետև նաւաստիները սպառնացին սպաննել զինք : Դրիին մը, որ, Արիօնի նուագարանին ձայնէն հրապուրուած, նաւուն կը հետևէր, զայն իր թիկունքին վրայ առաւ և ողջ-առողջ նաւահանդիստ տարաւ :

Փոկերն ալ կ'ազդուին նուազէն : Տեսնուած են փոկեր, որոնք ջուրին մէջ շարժումներ կ'ընեն և կը հետևին նուազի ելեւէջներուն, ճիշդ պարողներու պէս :

Սողունները արտաբուստ անտարբեր երեւոյթ մը ունին, բայց իրականին մէջ խիստ զգայուն են և նոյն-

պէս կ'ախորժին նուազէն : Օձերը, մասնաւորաբար բոժոժաւոր օձերը, նուազի միջոցով կը հնազանդին մարդոց :

2

Ամերիկացիք իրենց բնակարաններէն կը հեռացնեն սողունները, որևէ եղանակ նուազելով : Մէկ կողմէ կը նուազեն, միւս կողմէ ընդառաջ կ'երթան կենդանիին, որ նախ կը զրդուի և փնտսելու կը պատրաստուի, սակայն հետզհետէ կը հանդարտի նուազի ձայնէն, բարկութիւնը կը մեղմանայ և սողալով կը հետևի նուազածուին :

Եզիպտոսի, Հնդկաստանի և Արարիոյ մէջ սովորական արհեստի կարգ անցած է նուազի միջոցով հրապուրել օձերը և մինչև իսկ պարել տալ անոնց :

Սարդն ալ իր կարգին սիրահար է նուազի. կը մօտենայ նուազածուներուն, ուշադրութեամբ մտիկ կ'ընէ և կամաց — կամաց նոյնիսկ կ'ընտելանայ անոնց հետ :

Գրետրի, համբաւաւոր դաշնակահարը, ընտանի սարդ մը ունէր, որ իր դաշնակի սենեակին մէջ կը բռնակէր : Երբ Գրետրի նուազել սկսէր, սարդը ոտսայնի թևի մը միջոցով դաշնակին վրայ կ'իջնէր մտիկ ընելու համար, և երբ նուազը վերջանար, դարձեալ միևնոյն ճամբով կը բարձրանար իր տեղը :

Բոլոր այս ըսուածներէն կը հետևի, որ բազմաթիւ կենդանիներ ո'չ միայն կը սիրեն երաժշտութիւնը, այլև կը հրապուրուին անկէ :

ԱՌԱԾ — Ազէկ վարդը իր հողին վրայ կը բուսնի :

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արիոն.— Յոյն բանաստեղծ եւ երաժիշտ, որ կ'ապրէր Քրիստոսէ առաջ եօթներորդ դարուն:

Դլփիմ.— Չուկի տեսակ մը, երեք մեթր երկարութեամբ: Դլփիմները կ'ապրին խուճրով:

Թիկունք.— Կոնակ:

Փոկ.— Ստնաւոր կենդանի, որ կ'ապրի թէ՛ ծովու մէջ եւ թէ ցամաքի վրայ: Մովաշուն:

Ելեւէջ.— Ելլել եւ իջնել (մայնի):

Արտաբուստ.— Դուրսէն, երևութապէս:

Ախտըծիլ.— Հանոյք զգալ, սիրել:


Բոժոժաւոր.— Բոժոժ՝ փոքր զանգակ, բոժոժաւոր՝ փոքր զանգակ ունեցող:

Ընտելամալ.— Ընտանեկալ, վարժուիլ:

Գրետրի.— Ֆրանսացի երգահան եւ դաշնակահար: Մնած է 1741ին, մեռած՝ 1813ին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Կենդանիները երաժշտութիւն կը սիրե՞ն. ի՞նչ ապացոյցներ ունիք: — Կրնա՞ք պատմել Արիոնի պարագան: — Երաժշտութիւնը կ'ազդէ՞ նաեւ օձերուն վրայ. օրինա՞կ: — Ո՞ւր աւելի տարածուած է նուագի միջոցով օձերը երապուրելու արհեստը: — Ո՞վ է Գրետրի. ի՞նչ կը պատմուի իր մասին: — Այս դասէն ի՞նչ եզրակացութիւն կրնաք հանել:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հայցական հոլովը ուղղականին ձեւը ունի, բայց կը պատասխանէ զո՞վ հարցման. օրինակ՝ ուսուցիչս կը սիրեմ.— գո՞վ կը սիրեմ, ուսուցիչս: Սեռական հոլովը կը պատասխանէ որո՞ւն հարցման. օրինակ՝ ուսուցչիս աշակերտն եմ.— որո՞ւն աշակերտն եմ, ուսուցչիս:



12. Ճ Ե Ր Մ Ա Կ Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր

Ճերմակ ծաղիկներ ես կը սիրեմ շատ եւ գուրգուրանքով անոնց հետ կ'ապրիմ. Անոնք ալ հետքս կ'ըլլան մտերիմ, Ինձ տալով իրենց բուրումներն առատ:

Շուշանն ինձ կ'ըսէ. «Ես շքեղ եմ հոս. կը դիւքեմ դաշտերն ու աչքերն համակ. Բայց զիս իբրեւ գարդ ո՛չ մէկ աղջընակ իր կուրծքին վրայ կը կրէ, ախտո՛ս»:

Յասմիկն ալ կ'ըսէ. «Ես, ծաղիկ չընչին,
Չունիմ շուշանին պերն տեսն ու հասակ.
Բայց ամէն աղջիկ իմ փունջս հասարակ
Միշտ կը պահէ մօտն իր տախակ սրտին»:

Ա՛հ, կ'ըզձայի շատ, որ դուն, հա՛յ աղջիկ,
Ըլլայիր, փոյր չէ, անշուք, անըջան,
Ո՛չ քէ դաշտերու գարդ շքեղ շուշան,
Այլ սըրտերու մօտ քաղցրաբոյր յասմիկ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բուրում.— Բոյր, անոյշ հոտ:

Շքեղ.— Փառաւոր, գեղեցիկ, հոյակապ:

Դիւքել.— Կախարդել, հմայել, թովել:

Համակ.— Ամբողջ, ամբողջովին:

Պերն.— Չարդարուն, փառահեղ:

Ըզձայ.— Փափաքել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ տեսակ ծաղիկներ կը սիրէ այս ոտա-
նաւորին հեղինակը: — Շուշանը ի՞նչ կ'ըսէր անոր, յասմիկը:
— Իսկ ի՞նչ կ'ուզէր ան հայ աղջիկէն: — Կա՞յ մէկը, որ ծաղիկ
չսիրէ: — Քանի՞ տեսակ ծաղիկի անուն գիտէք դուք: — Անոնցմէ
ն՞որը ամենէն աւելի կը սիրէք. ինչո՞ւ:



7. Փ Ո Ք Ր Ի Կ Հ Ո Վ Ի Ի Ը

1

Փոքրիկ հովիւ մը իր հօտը կ'արածէր բաց դաշտի
մը մէջ: Ոչխարները կը ճարակէին քիչ անդին, իսկ
ինք, արմուկը մահակին կռթնցուցած, երկա՛ր — եր-
կա՛ր կը մտածէր:

Յանկարծ գդակը գետին դարկաւ ու գոչեց.

— Լուծեցի՛, լուծեցի՛... .

Ճիշդ նոյն պահուն հոնկէ կ'անցնէր թաղաւորը, իր
փառաւոր կառքին մէջ բաղմած: Չիկրը խրտչեցան.
Թաղաւորը նշան ըրաւ, որ կառքը կեցնեն, ապա հրա-
մայեց իր մօտ բերել փոքրիկ հովիւը: Հրամանը կա-
տարուեցաւ:

— Ինչո՞ւ վախցուցիր ձիերը, մանչո՛ւկ, — հար-
ցուց թաղաւորը:

— Ես զանոնք վախցնել չուզեցի, տէ՛ր թաղաւոր,
— պատասխանեց հովիւը: — Մտածեցի, մտածեցի եւ

հանելուկ մը լուծեցի: Եւ ա'յնքան ուրախացայ, որ դղակս դետին դարկի:

— Ո՞րն է այդ հանելուկը:

— Ահաւասիկ — «Ի՞նչ է այն, որ մարդոցմէն բարձր է եւ հաւէն փոքր»:

Թագաւորը մօրուքը առաւ ափին մէջ եւ սկսաւ մտածել, բայց չկրցաւ լուծել հանելուկը: Հարցուց պալատականներուն. անոնք նոյնպէս պատասխան մը չդտան: Այն ատեն դարձաւ փոքրիկ հովիւին.

— Ըսէ՛ տեսնեմ, մանչո՛ւկ, ի՞նչ է այն, որ մարդոցմէ բարձր է եւ հաւէն փոքր:

— Գդա՛կը, տէ՛ր թագաւոր: Չէ՞, որ ան աւելի փոքր է, քան հաւը, եւ մեղմէ աւելի բարձր է, երբ գլուխնիս կը դնենք:

— Ճիշդ է, — խոստովանեցաւ թագաւորը: — Վաղը պալատ եկուր, բան մը պիտի ըսեմ քեզի. եթէ յաջողիս ըսածս ընել, մեծ պարգևներու պիտի արժանանաս:

2

Յաջորդ օրը պալատ դնաց փոքրիկ հովիւը իր հովուական հազուսաներով: Թագաւորը, որ իրեն կը սպասէր, ըսաւ անոր.

— Կ'ուզեմ, որ ինձի համար դտնես գառնուկ մը, որ ո՛չ ճերմակ ըլլայ, ո՛չ սեւ, ո՛չ մոխրագոյն եւ ո՛չ ալ ուրիշ որեւէ գոյն ունենայ:

— Շատ լաւ, տէ՛ր թագաւոր, — խոստացաւ փոքրիկ հովիւը եւ վերադարձաւ իր հօտին քով:

Յաջորդ առաւօտ կրկին դնաց պալատ:

— Գտա՞ր, — հարցուց թագաւորը:

— Գտայ, տէ՛ր թագաւոր, — պատասխան տուաւ խելացի ու համարձակ հովիւը: — Փարախիս մէջ պա-

հեցի. կրնաս մէկը ղրկել ու բերել տալ, բայց ո՛չ Երկուշաբթի օր ղրկէ, ո՛չ Երեքշաբթի, ո՛չ Չորեքշաբթի, ո՛չ Հինգշաբթի, ո՛չ Ուրբաթ, ո՛չ Շաբաթ, ո՛չ ալ Կիրակի, այլ տարբեր օր մը:

Ժպտեցաւ թագաւորը, հաւենեցաւ այս խելացի պատասխանին, կանչեց պալատականներէն մէկը ու ըսաւ անոր.

— Ա՛ռ այս տղուն դղակը եւ զայն ոսկիով լեցուր:

ԱՌԱՄ. — Խելքը տարիքին մէջ չէ, գլխուն մէջ է:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճարակիլ. — Արածիլ, ուտել (խոտ):

Մահակ. — Հովիւի հաստ գաւազան:

Գդակ. — Գլխարկ, գլխանոց:

Պարգել. — Նուէր:

Փարախ. — Ոչխարներու գոմ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ինչի՞ մասին կը մտածէր փոքրիկ հովիւը:

— Ո՞վ անցաւ այդ պահու՞մ. ի՞նչ պատահեցաւ: — Ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ քագաւորին եւ հովիւին միջեւ: — Յաջորդ օրը քագաւորը ի՞նչ առաջարկեց փոքրիկ հովիւին: — Ի՞նչ պատասխանեց այս վերջինը: — Կը հաւնի՞ք իր պատասխանին: — Եթէ ձեզի պատահէր ինչ որ պատահեցաւ փոքրիկ հովիւին, ի՞նչ պիտի ընէիք դուք:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Բառ մը յոգնակիի վերածելու համար ծայրը եր կամ ներ մասնիկը կ'աւելցնեն: Եր կ'աւելցնեն, երբ բառը միավանկ է. օրինակ՝ մարդ — մարդեր, գիրք — գիրքեր, ջուր — ջուրեր: Ներ կ'աւելցնեն, երբ բառը բազմավանկ է. օրինակ՝ մատիտ — մատիտներ, դասարան — դասարաններ, գլուխ — գլուխներ:

8. Խ Ո Ր Ա Մ Ա Ն Կ Գ Ա Յ Լ Ը

1

Գայլը կանգ առաւ ոչխարներու փարախին առջեւ, ծակէ մը ներս նայեցաւ եւ ըսաւ հոն բանտարկուած դառնուկին.

— Անուշի՛կ դառնուկ, ի՞նչ բարակ ոտքեր ունիս. խատուտիկ մանոցի կը նմանին: Մտիկ ըրէ, տե՛ս, մըժեղը ի՞նչպէս կը նուագէ: Դուրս ելի՛ր, պար մը պարէ. մժեղը պիտի նուագէ, դուն պիտի պարես:

— Դուն խորամանկ ես, գայլ աղբար, — պատասխանեց դառը ներսէն, — կ'ուզես ոտքս ուտել, անոր համար կը գովես:

— Մի՛ վախնար, սիրունի՛կս. ես այլեւս դառնուկի միս չեմ ուտեր:

— Ինչո՞ւ:

— Բուսակեր դարձայ եւ հողիս հանգիստ է: Ո՞հ, անուշի՛կ դառնուկ, ի՞նչ կակուղ բուրդ ունիս, մետաքսի պէս: Եթէ թոյլ տաս, որ անկէ մազ մը փըրցընեմ, մեծ բարիք ըրած պիտի ըլլաս ինձի:

— Ի՞նչ պիտի ընես թեւ մը մազը:

— Իմ հին բարեկամս՝ խոյը երէկ ուլունքի հատիկ մը նուէր զրկեց գայլիկիս համար: Ուլունքը կ'ուզեմ մազէն անցընել եւ զարդարել ձագուկիս վիզը: Օ՛ն, դուրս ելի՛ր:

— Շատ խորամանկ ես, կնքահա՛յր. միտքդ զիս ուտել է:

— Մի՛ վախնար, սիրունի՛կս. չէ՞ որ քեզի ըսի, թէ հիմա բուսակեր դարձած եմ ես:

2

Գայլը, տեսնելով որ չի կրնար հրապուրել փոքրիկ ոչխարը, ուրիշ միջոցի գիմեց:

— Քու ամէն ինչդ, — ըսաւ, — լաւ է, մինչեւ իսկ լաւագոյն է, միայն մէկ բանի չեմ հաւնիր:

— Ի՞նչ բանի, գայլ աղբար, — հարցուց ոչխարը:

— Պոչ չունիս:

— Ի՞նչպէս թէ չունիմ:



— Չունիս. չէ՞ որ ծակէն կը տեսնեմ ես: Ամէն ինչդ տեղին է, միայն պոչ չունիս:

Ոչխարը պոչը ծակէն դուրս հանեց եւ պոռաց.

— Տե՛ս գայլ աղբար, տե՛ս, պոչ ըսածդ ասիկա չէ՞:

Գայլը հոտոտեց ոչխարին պոչը եւ աւելցուց.

— Չէ՛, ասիկա պոչ չէ:

— Հապա ի՞նչ է:

— Մանածի թեւ:

— Ի՞նչպէս թէ մանածի թեւ,— մայեց ոչխարը,
առջևի ոտքերով հրեց փականըը եւ բացաւ դուռը:
Հիմա լաւ մը նայէ՛, մանած է թէ պոչ է:

Գայլն ալ ասոր կը սպասէր. խոյացաւ փարախէն
ներս, յափշտակեց ոչխարը եւ փախաւ անտառ:

ԱՌԱՄ.— Գայլը բուրդը կը փոխէ,
բնոյթը չի փոխեր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խատուտիկ.— Գեղեցիկ, սիրուն:

Մանոց.— Ճախարակ:

Խոյ.— Արու ոչխար:

Հրապուրել.— Հմայել, կախարդել, մուրեկեցնել:

Փակամբ.— Կղպանք:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Գայլը խորամանկ կենդանի է: — Ի՞նչ էր
իր նպատակը, երբ սկսաւ գողել ու շողոքոքել գառնուկը: —
Հասկցա՞ւ գառնուկը, բէ ի՞նչ էր գայլին դիտարարութիւնը: —
Հապա ի՞նչպէս եղաւ, որ խարուեցաւ եւ դուրս ելաւ փարախէն:
— Գայլի եւ գառն մասին ուրիշ պատմութիւններ գիտէ՞ք: —
Կրնա՞ք «խաղալ» ձեր այսօրուան դասը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Երբ անձայն յ-ով վերջա-
ցող բառ մը յոգնակիի վերածենք, ծայրի յ-ն կը կար-
սուի. օրինակ՝ քահանայ — քահանաներ, հաւաքա-
ծոյ — հաւաքածոներ:

Յոգնակիի վերածեցէք հետեւեալ բառերը.— դրօշ,
պաշտօնեայ, ձեռք, գրասեղան, տուն, բրածոյ, մե-
քենայ, համբ, կազամար:



9. Ա Ն Չ Ի Գ Ի Տ Ե Ր . . .

Փոքրիկ Արփիկեն, սիրուն, լեզուանի,
Որ նուրբ ու խարտեաշ մազեր ալ ունի,
Կր հարցնէ ինձի միամրտաբար —
«Ինչո՞ւ ներմակ եմ մազերդ, հօ՛րեղբայր»:

Մինչ այսպէս կննտա հարցումներ կ'ընէ,
Խորհուրդ մը սրխուր գիւ կը վրդովէ —
Ու եւ, ախմայ, իր բարձր այտին ետ
Կր համեմատեմ խորշումներս վկա — վկա:

Ի՞նչ ակնածանքով բովիկըս, խոհեմ,
կը նստի երբոր կարդամ կամ գրեմ,
Անմեղ համոզմամբ կը մտածէ ան,
Թէ ներմակ մագն է շնորհ հմտութեան:

Բայց ան չի գիտեր, ա՞հ, չի գիտեր, որ
Գիտութիւնս ամբողջ, երկերս ալ բոլոր
Սիրով կը գոհեմ, փոխան իր մատղաշ
Հասակին, փոխան մագերուց խարտեաշ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹՒԻՒՆՆԵՐ

Խարտեաշ.— Գորշ գեղին, կարմիրի զարնոյ (մայ):

Վրդովել.— Խոզկէլ, յուզէլ:

Ակամայ.— Առանց ուզելու. չուզելով:

Խորշում.— Կնճիտ, փոթ, ծալք (գէճքի վրայ):

Վէտ — վէտ.— Ալիք — ալիք, ալիքի պէս իրարու յաջորդոյ:

Ակնածանք.— Պատկասանք, խոր յարգանք:

Հմտութիւն.— Շատ բան գիտնալ, գիտութիւն:

Երկ.— Գործ, գրուածք, գիրք:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ տեսակ աղջիկ էր Արփիճէ: — Հօ-
րեղբորը ի՞նչ հարցուց օր մը: — Ճերմակ մագերը, խորշումները
ի՞նչ բանի մշամ են: — Հօրեղբայրը ի՞նչ կը մտածէր Արփիճէի
մասին:

10. Թ Ո Ւ Ղ Թ Ը

1

Ուսուցիչը պատուիրած էր Ռուբիկին՝ թերթ մը
թուղթ առնել, աղէկ մը գիտել զայն և և իրրեւ շարա-
գրութիւն գրի առնել իր գիտողութիւնները:

— Ա՛հ, — կ'ըսէր շուարած Ռուբիկը, — այս թուղ-
թը ձերմակ է, բայց ուրիշ բան չեմ գիտեր, որ գրեմ:
Դուն բան մը գիտե՞ս, Աննի՛կ, — հարցուց քրոջը:

— Կրնաս ըսել, որ այդ թուղթին թերթը բարակ
է, — պատասխանեց քոյրը:

— Ատկէ ի՞նչ կ'ելլէ, — յարեց Ռուբիկ, տեսնելով
որ դործը պիտի երկարի:

— Ատկէ ան կ'ելլէ, որ հաստ թուղթեր ալ կան:
Նայէ սա բառարանիդ կողքը, ո՛րքան հաստ է:

— Աղէ՛կ, ատ ալ գրենք: Ուրիշ բան գիտե՞ս:

— Ի՞նչ է պատճառը, որ բառարանիդ էջերը գի-
րութեամբ կը դառնան, առանց ծալուելու:

Ռուբիկ պահ մը մտածեց, ապա ըսաւ, թէ պատ-
ճառը չէր գիտեր:

— Որովհետեւ թուղթը ձկուն է և և գիմացկուն, —
բացատրեց Աննիկ:

— Դիմացկո՞ւն ըսիր: Կեցիր որ ցուցնեմ քեզի, թէ
ո՛րչափ գիմացկուն է, — գոչեց Ռուբիկ և թերթը պա-
տրեց:

2

Աննիկ առաւ պատռուած թերթը և սկսաւ ուշա-
գրութեամբ քննել:

— Նայէ՛, — ըսաւ երկար գիտելէ ետք, — թուղ-

թին ծայրը շատ բարակ թելեր կ'երեւին. ի՞նչ են ասոնք:

— Վա՛յ, իրա՛ւ է, — զոչեց Ռուբիկ, որ սկսեր էր շահադրդուել ջրոջը տուած բացատրութիւններով — ասոնք թելերը չե՞ն այն քուրջերուն, որոնք կը դործածուին թուղթ շինելու համար:

— Հաւանական է:

— Հիմա ես քեզի հարցնեմ, — ըսաւ Ռուբիկ, — տեսնեմ կրնա՞ս պատասխանել. ինչո՞ւ թուղթին վրայ գրելը գիւրիւն է, իսկ լաթին վրայ՝ դժուար:

Աննիկ այնպէս ձեւացուց, թէ չի կրնար պատասխանել: Այն ատեն Ռուբիկ, յաղթականի ձեւեր առնելով, աւելցուց.

— Որովհետեւ թուղթը ողորկ է: Ասկէ դատ՝ շատ աժան է եւ ատոր համար ալ «շատ թուղթ մրտեղ» կու տան մեզի:

Այս ըսելէ ետք գրիչը ձեռք առաւ եւ սկսաւ գրել հետեւեալ շարադրութիւնը.

«Այս թուղթը ճերմակ է եւ ողորկ: Նաեւ բարակ, ճկուն եւ դիմացկուն է: Թուղթ շինելու համար հասարակ քուրջ կը դործածուի, այս պատճառով ալ թուղթը աժան կը ծախուի»:

Ռուբիկ դեռ չէր գիտեր, թէ ուրիշ ի՞նչ բաներ կը դործածուին թուղթ շինելու համար:

ԱՌԱՄ. — Կէս գիտունը արհամարհոտ կ'ըլլայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ձկուն. — Կակուղ:

Շահագրգռուի. — Հետաքրքրուի:

Հաւանական է. — Կարելի է, կրնայ ըլլալ:

Ողորկ. — Հարթ, հաւասար, շիտակ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Թուրիկ ինչի՞ մասին շարադրութիւն պիտի գրէր: — Ո՞վ օգնեց իրեն, ի՞նչ ձեռով: — Գու՞մ ալ կրնա՞ք շարադրութիւն մը գրել բուզքի մասին: — Ի՞նչ կը նշանակէ «բուզք մրտեղ»: — Թուղթին բոլոր տեսակները նոյն գի՞ծը ունին: — Գուրչէն գատ ուրիշ ի՞նչ բաներ կը գործածուին բուզք շինելու համար:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Անունի մը կամ գոյականի մը վերջաւորութիւնը կը փոխուի. այս փոփոխութիւնը կը կոչուի հոլովում: Վեց տեսակ հոլով կայ — ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական: Ուղղականը կը պատասխանէ ո՞վ հարցման. օրինակ՝ մեր ուսուցիչը բարի է. ո՞վ բարի է. ուսուցիչը:

Այս օրինակին մէջ ուսուցիչը ուղղական հոլով է: Չոր այսօրուան դասին մէջ ուղղական հոլովներ կա՞ն. որո՞նք են:



11. ԿԵՆՊԱՆԻՆԵՐԸ ԵՒ ԵՐԱՎՇՏՈՒԹԻՒՆԸ

1

Կենդանիները երաժշտութիւնը կը սիրե՞ն:

Այո՛, մինչև իսկ կան այնպիսի կենդանիներ, որոնք շատ կը սիրեն նուազը եւ խորապէս կ'ազդուին անկէ:

Աւանդութեան մը համաձայն, յոյն նշանաւոր երաժշտապէս Արիոն, նաւով ճամբորդած ատեն, յանկարծ ծով նետուեցաւ, որովհետեւ նաւաստիները սպառնացին սպաննել զինք: Դըլիին մը, որ, Արիոնի նուագարանին ձայնէն հրապուրուած, նաւուն կը հետեւէր, զայն իր թիկունքին վրայ առաւ եւ ողջ-առողջ նաւահանդիստ տարաւ:

Փոկերն ալ կ'ազդուին նուազէն: Տեսնուած են փոկեր, որոնք ջուրին մէջ շարժումներ կ'ընեն եւ կը հետեւին նուազի ելուէջներուն, ճիշդ պարողներու պէս:

Սողունները արտաքուստ անտարբեր երևոյթ մը ունին, բայց իրականին մէջ խիստ զգայուն են եւ նոյն-

պէս կ'ախորժին նուազէն: Օձերը, մասնաւորաբար բոժոժաւոր օձերը, նուազի միջոցով կը հնազանդին մարդոց:

2

Ամերիկացիք իրենց բնակարաններէն կը հեռացնեն սողունները, որեւէ եղանակ նուազելով: Մէկ կողմէ կը նուազեն, միւս կողմէ ընդառաջ կ'ներթան կենդանիին, որ նախ կը զրդուի եւ վնասելու կը պատրաստուի, սակայն հետզհետէ կը հանդարտի նուազի ձայնէն, բարկութիւնը կը մեղմանայ եւ սողալով կը հետեւի նուազածուին:

Նշիպատսի, Հնդկաստանի եւ Արարիոյ մէջ սովորական արհեստի կարգ անցած է նուազի միջոցով հրապուրել օձերը եւ մինչև իսկ պարել տալ անոնց:

Սարդն ալ իր կարգին սիրահար է նուազի. կը մօտենայ նուազածուներուն, ուշադրութեամբ մտիկ կ'ընէ եւ կամաց — կամաց նոյնիսկ կ'ընտելանայ անոնց հետ:

Գրետրի, համբաւաւոր դաշնակահարը, ընտանի սարդ մը ունէր, որ իր դաշնակի սենեակին մէջ կը բընակէր: Երբ Գրետրի նուազել սկսէր, սարդը ոտսայնի թևի մը միջոցով դաշնակին վրայ կ'իջնէր մտիկ ընելու համար, եւ երբ նուազը վերջանար, դարձեալ միւս նոյն ճամբով կը բարձրանար իր տեղը:

Բոլոր այս ըսուածներէն կը հետեւի, որ բազմաթիւ կենդանիներ ո'չ միայն կը սիրեն երաժշտութիւնը, այլև կը հրապուրուին անկէ:

ԱՌԱՄ — Աղէկ վարդը իր հողին վրայ կը բուսնի:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արիոն.— Յոյն բանաստեղծ է Էրատիլոս, որ կ'ապրէր Քրիստոսէ առաջ Եօթներորդ դարուն:

Դլիփիմ.— Ձուկի տեսակ մը, Էրեբ մեթր Երկարութեամբ: Դլիփինները կ'ապրին խուճրով:

Թիկումբ.— Կռնակ:

Փոկ.— Ստեանոր կենդանի, որ կ'ապրի թէ՛ ծովու մէջ և թէ ցամաքի վրայ: Մովաչուն:

Ելիւէջ.— Ելլի և իջնիլ (ձայնի):

Արտաֆուստ.— Դուրսէն, Էրեւութապէս:

Ախորժիլ.— Հանոյբ զգալ, սիրել:


Բոժոժաւոր.— Բոժոժ՝ փոքր զանգակ, բոժոժաւոր՝ փոքր զանգակ ունեցող:

Ընտելամալ.— Ընտանենալ, վարժուիլ:

Գրետրի.— Տրանսպի Երզնան և զաշնակահար: Մնած է 1741ին, մեռած՝ 1813ին:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Կենդանիները Երաժշտութիւն կը սիրեն. ի՞նչ ապացոյցներ ունիք: — Կրնա՞ք պատմել Արիոնի պարագան: — Երաժշտութիւնը կ'ազդէ՞ նաեւ օձերուն վրայ. օրինակ: — Ո՞ր աւելի տարածուած է նուագի միջոցով օձերը Երասպորեթու արհեստը: — Ո՞վ է Գրետրի. ի՞նչ կը պատմուի իր մասին: — Այս դասէն ի՞նչ եզրակացութիւն կրնաք հանել:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հայցական հոլովը ուղղականին ձեւը ունի, բայց կը պատասխանէ զո՞վ հարցման. օրինակ՝ ուսուցիչս կը սիրեմ.— գո՞վ կը սիրեմ, ուսուցիչս: Սեռական հոլովը կը պատասխանէ որո՞ւն հարցման. օրինակ՝ ուսուցչիս աշակերտն եմ.— որո՞ւն աշակերտն եմ, ուսուցչիս:



12. **Ճ Ե Ր Մ Ա Կ Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր**

Ճերմակ ծաղիկներ ես կը սիրեմ շատ
Եւ գուրգուրանքով անոնց հետ կ'ապրիմ.
Անոնք ալ հետըս կ'ըլլան մտերիմ,
Ինձ տալով իրենց բուրումներն առատ:

Շուշանն ինձ կ'ըսէ. «Ես շքեղ եմ հոս.
Կը դիւքեմ դաշտերն ու աչքերն համակ.
Բայց զիս իբրեւ գարդ ո՛չ մէկ ազջընակ
Իր կուրծքին վըրայ կը կրէ, ափսո՛ս»:

Յասմիկն ալ կ'ըսէ. «Ես, ծաղիկ չընչին,
Չունիմ շուշանին պերն տեսն ու հասակ.
Բայց ամէն աղջիկ իմ փունջս հասարակ
Միշտ կը պահէ մօտն իր տափուկ սրտին»:

Ա՛հ, կ'ըզձայի շատ, որ դուն, հա՛յ աղջիկ,
Ըլլայիր, փոյք չէ, անշուք, անըրշան,
Ո՛չ թէ դաշտերու գարդ շքեղ շուշան,
Այլ սըրտերու մօտ քաղցրաբոյր յասմիկ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Բուրում.— Բոյր, անոյշ հոտ:
- Շքեղ.— Փառաւոր, գեղեցիկ, հոյակապ:
- Դիւքեղ.— Կախարդել, հմայել, թովել:
- Համակ.— Ամբողջ, ամբողջովին:
- Պերն.— Ձարդարուն, փառահեղ:
- Ըզձայ.— Փափաքիլ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ տեսակ ծաղիկներ կը սիրէ այս ոտա-
նաւորին հեղինակը: — Շուշանը ի՞նչ կ'ըսէր անոր, յասմի՞կը:
— Իսկ ի՞նչ կ'ուզէր ան հայ աղջիկէն: — Կա՞յ մէկը, որ ծաղիկ
չսիրէ: — Քանի՞ տեսակ ծաղիկի անուն գիտէք դուք: — Անոնցմէ
ն՞որը ամենէն աւելի կը սիրէք. ինչն'է:

13. Բ Ա Ր Ե Կ Ր Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

1

Բարեկամներէս մէկը երիտասարդ մը ներկայա-
ցուց ինձի եւ խնդրեց, որ պաշտօն մը գտնեմ անոր հա-
մար:

Շատ ուշիմ եւ լուրջ երիտասարդ մըն էր: Երբ
քովս նստած իր յոյսերն ու յուսախարութիւնները կը
պատմէր ինձի, ես կը մտածէի, թէ իր դասակարգի
մարդոց մէջ տիպար մը կարելի էր նկատել զինք:

Ըսաւ, թէ քանի մը վաճառականներու դիմած էր,
որոնք քննած էին զինք եւ շատ դո՛ւ մնացած իր պա-
տասխաններէն: Եւ սակայն չէին հաճած պաշտօն մը
տալ իրեն:

Մեղքոյս զինք եւ որոշեցի օգտակար ըլլալ իրեն:

2

Կը ճանչնայի վաճառական մը, որուն դիմած,
բայց մերժուած էր: Երբ դացի հարցնելու, թէ ինչո՞ւ
չէր ուզած պաշտօն տալ այդ երիտասարդին.

— Ի՞նչպէս կ'ուզես, որ տետրակներուս խնամքը
յանձնեմ իրեն. ինք իր անձին խնամք տանիլ չի գիտեր,
— ըսաւ վաճառականը եւ աւելցուց. — աղքատութիւնը
ուրիշ բան է, մաքրութիւնը, բարեկրթութիւնը ուրիշ
բան:

Ձարմացած մտիկ կ'ընէի. վաճառականը շարունա-
կեց.

— Գրասենեակէս ներս մտած ասին բարեւ մը ան-
զամ շտուաւ: Գրաւոր կերպով քննեցի զինք. պատաս-
խանները լաւ էին, բայց տեսնելու էիր զբաժ թուղթին
աղտոտութիւնը: Ասանկ մարդու ձեռքը տետրակ կը
տրուի՞ . . . :

Փորձեցի պաշտպանել երիտասարդը, առաջ բերե-
լով անոր երկչոտութիւնն ու անփորձութիւնը: Ըսի
նաեւ, թէ հետզհետէ կը վարժուի:

— Եղբա՛յր, — զիտել տուաւ վաճառականը, — իմ
զրասենեակս վարժարա՞ն է: Կը հասկնամ, որ գործի
մէջ փորձառութիւն չունենայ, մաքրութիւնը հապա-
բարեկրթութիւնը հապա. . . : ասոնք սորվեցնելու հա-
մա՞ր բացած եմ ես զրասենեակս:

Անարդար չէին բարեկամիս զիտողութիւնները:
Ինձի կը մնար սրտանց ցաւիլ միայն:

ԱՌԱՄ.— Օձին կնածը կ'ողջննայ,
Լեգուին կնածը չ'ողջննար:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յուսախարութիւն.— Յոյսին մէջ խարուած:

Տիպար.— Օրինակ, օրինակելի (մարդ):

Երկչոտութիւն.— Վախ, վախկոտութիւն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ էր պատճառը, որ երիտասարդը չէր
կրնար գործ մը գտնել: — Ուշիմ, լուրջ եւ զարգացած մէկն էր.
Ի՞նչ բան կը պակսէր իրեն: — Վաճառականին դիտողութիւնները
արդար կը գտնէ՞ք. ինչո՞ւ: — Ուրեմն ի՞նչ կը փնտռեն մարդիկ
ամենէն աւելի: — Կը բաւէ՞ միայն բարեկիրք ըլլալ. ուրիշ ի՞նչ
առաւելութիւններ պէտք է ունենալ «տիպար մարդ» կոչուելու
համար:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Տրական հոլովը սեռակա-
նին ձեւը ունի, բայց կը պատասխանէ որո՞ւ հարցման.
օրինակ՝ ուսուցչիս կապուած եմ. որո՞ւ կապուած եմ,
ուսուցչիս: Բացառականը կը պատասխանէ որմէ՞
հարցման. օրինակ՝ ուսուցչէս կը վախնամ, որմէ՞ կը
վախնամ, ուսուցչէս: Գործիականը կը պատասխանէ
որո՞վ հարցման. օրինակ՝ ուսուցչովս կը հպարտա-
նամ, որո՞վ կը հպարտանամ, ուսուցչովս:

Բառի մը ի՞նչ հոլով ըլլալը գտնելու համար կը
գործածուին նաեւ ի՞նչ բան, ի՞նչ բանը, ի՞նչ բանին,
ի՞նչ բանի, ի՞նչ բանէ, ի՞նչ բանով հարցումները, երբ
խնդրոյ առարկան ո՛չ թէ անձ մը, այլ իր մըն է:

14. Ճ Ա Փ Ո Ն Ա Կ Ա Ն Ա Ն Օ Թ Ն Ե Ր Ը

1

Ատենօք միջատօ մը կար, որ իր արքունիքը զար-
դարած էր չնաչխարհիկ զեղօրներով, նկարներով եւ
յախճապակեայ թան անօթներով: Իր բովանդակ
կայսրութեան մէջ անոնց նմանը կարելի չէր գտնել,
ա՛յնքան հազուադիւտ էին անոնք:

Պատահեցաւ, որ իր զրանիկներէն մէկը, օր մը,
անզողու թեամբ կոտորէ այդ անօթներուն մէջ ամե-
նէն թանկարժէքը:

Միջատոն սաստիկ բարկացաւ եւ հրամայեց, որ
յանցաւորը մահուամբ պատժուի:

Հետեւեալ առտուն, երբ պատիժը պիտի գործադրուէր, միքատոյին ներկայացաւ ծեր պրահման մը, որ հազիւ կրնար քալել, իր ցուպին կռթնած:

— Տէր իմ, — ըսաւ պրահմանը, — ես դադանիք մը գիտեմ Ձեր Վեհափառութեան կոտորած անօթը նորոգելու համար: Առաջնորդեցէ՛ք զիս սրահը, ուր կը դանուի ձեր անօթներուն ճոխ հաւաքածոն:



2

Իր խնդրանքը կատարուեցաւ իսկոյն: Բայց հազիւ հասած էին հոն, ուր զետեղուած էին անմիաս մնացած տասնեւինը անօթները, պրահմանը ցուպի բուն հարուածով մը գետին տապալեց զանոնք, բոլորն ալ ցրել-ցրելս ընելով:

— Ի՞նչ ըրիր, թշուառակա՞ն, — գոչեց միքատոն զայրոյթէն կղպուած ահուաներուն մէջէն:

— Պարտքս կատարեցի, Վեհափա՛ռ Տէր, — պատասխանեց ալեւոր պրահմանը պաղարիւնութեամբ: Այս անօթներէն իւրաքանչիւրը կրնար ձեր հպատակներէն մէկուն կեանքը արժեւ. բաւականացէ՛ք իմ կեանքս միայն վերցնելով աշխարհէն:

Կայսրը ցնցուեցաւ այս խօսքերուն իմաստութեանէն եւ այն ազդու ձեւէն, որով արտասանուած էին անոնք:

— Ծերունի՛, — յարեց պահ մը մտածելէ ետք, — իրաւունք ունիս, իմ բոլոր ոսկեղօծ անօթներս աւելի քիչ կ'արժեն, քան մարդկային էակի մը կեանքը:

Ու ներում շնորհեց իսկոյն թէ՛ ձախաւեր զրանիկին եւ թէ՛ իմաստուն ու քաջարի պրահմանին:

ԱՌԱՆՄ.— Շիտակ խօսքը դառն կ'ըլլայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կրթութիւն.— ճափոնի կայսրը կը կոչուի միքատո:
- Արքունիք.— Թագաւորական պալատ:
- Զնաշխարհիկ.— Աշխարհի մէջ շղտնուած:
- Գեղօր.— Սենեակի մանր եւ սիրուն պարզեր:
- Հագուազիւտ.— Շատ քիչ գտնուած:
- Դրամիկ.— Պալատական, պալատի մարդ:
- Պրահման.— Պրահմանականութիւնը կրօնական եւ բազաքական կազմակերպութիւն մըն է Հնդկաստանի մէջ, պրահման կը կոչուին այդ կազմակերպութեան հետեւորդները:
- Յուպ.— Փոքր գաւազան:
- Յրիլ-ցրիլս ընել.— Կտոր կտոր ընել, փշուր փշուր ընել:
- Ալիւոր.— Շատ ծեր, մազն ու մօրուքը ճերմկած:
- Զախաւեր.— Անճարակ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Որո՞ւ կ'ըսեն միֆատո, ցա՞ր, սուլբա՞ն:
— Ի՞նչ ունէր միֆատոն իր պալատին մէջ: — Օր մը ի՞նչ պատահեցաւ: — Շա՞տ ծանր յանցանք մըն էր եղածը: — Ո՞վ ներկայացաւ միֆատոյին. ի՞նչ ըսաւ: — Վերջը ի՞նչ եղաւ: — Ի՞նչ տեսակ մէկն էր ծեր պրահմանը, միֆատո՞ն: — Ի՞նչ եզրակացութիւն կրնաք հանել այս պատմութեան:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Հոլովման ընդհանուր կանոնը այն է, որ սեռական-տրականի մէջ բառերուն ծայրը կը դրուի *ի*, բացառականի մէջ *է*, գործիականի մէջ *ու*, եթէ բառը եզակի է. օրինակ՝ ուղղ. հայց. դաս, սեռ. տրկն. դասի, բաց. դասէ, գործ. դասով: Իսկ բառը յոգնակի ըլլալու պարագային կը հոլովուի այսպէս. ուղղ. հայց. դասեր, սեռ. տրկն. դասերու, բաց. դասերէ, գործ. դասերով:

15. Գ Ա Յ Լ Ը Ե Ի Ա Ր Ա Գ Ի Լ Ը

Գայլը, օր մը, հացկերոյթի էր գացեր իր մէկ հարուստ ազգակցին.
Հոն կուշտ ու կուռ այնքան կերան խըմեցին
Հում-հում այծեր ու գառներ,
Որ կոկորդին մէջ ոսկոր մը կեցած էր:
Գայլը կ'ոռնար միշտ խեղճուկ,
Արձակելով խուլ կոծեր:
Բայց իր բախտէն արագիլ մը անմեղուկ.
Քովէն կ'անցնէր այդ պահուն
Եւ գրքալով անոր վրան՝
Սուր կտուցովն իր երկայն
Դուրս կը քաշէ փուշն իսկոյն
Ու կափկափով մը սիրուն



Կ'առաջարկէ, որ գայլն իրեն վարձք մը տայ:
«Վա՞րձք մը, կ'ոռնայ գայլն անսիրտ,
Բայտուողին ձայնով բիրտ.
Ինչե՞ր կ'ըսես, խե՛նք սողայ,
Փառք չըտա՞ս, որ վիզդ ամբողջ
Իմ կոկորդէս դուրս հանեցի ողջ-առողջ:
Ապերախտ ես եղեր, անմիտ անասուն:
Ըզգուշացի՛ր, մէյ մ'ալ ճանկըս չիյնաս դուն...»:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոծ.— Ողբ, բաց:
Կափկափ.— Արագիլներու հանած ձայնը:
Բիրտ.— Կուշտ ու կոպիտ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞ր գացած էր գայլը: — Ի՞նչ ըրին հացկերոյթին: — Ինչո՞ւ կ'ոռնար գայլը: — Վերջը ի՞նչ եղաւ: — Արագիլը ի՞նչ ուզեց եւ ի՞նչ պատասխան տուցաւ: — Ապերախտութեան է վարձք ուզելը: — Ի՞նչ տեսակ կենդանի է արագիլը: — Իր մասին ուրիշ պատմութիւններ գիտե՞ք:

16. Յ Ա Ն Յ Ա Ն Ք Ը Ի Մ Ս Զ Է

1

Նախաճաչէն առաջ, սպասուհին սննեակս կը մաք-
րէր: Իր գործը թեթեցնելու համար ուզեցի օգնել ի-
րեն: Թէեւ ինք մերժեց՝ ըսելով, որ երթամ խաղա-
լիկներս կարգի դնեմ, բայց ես կարեւորութիւն չտուի
և սկսայ պահարանին վրայի փոշին առնել:

Հոն՝ պահարանին վրայ դրուած էր այն սիրուն
ծաղկամանը, զոր հայրս նուիրած էր մայրիկիս՝ ա-
նոր ծննդեան տարեդարձին առիթով: Մաքրելու ատեն
յանկարծ ձեռքէս սահեցաւ ու դետին ինկաւ. և որով-
հետեւ շատ բարակ ապակիէ շինուած էր, կտոր-կտոր
եղաւ:

Յանցանքը ի՞մա էր սակայն. ինչո՞ւ այսքան բա-
րակ ապակիէ կը շինեն ծաղկամանները: Եւ յետոյ՝ ես
պարզապէս ուզած էի սպասուհիին օգնել. զէ՞ջ բան
մըն էր բրածս:

2

Ժամ մը ետք մինակս կը խաղայի մեր բակին մէջ:
Վազելու ատեն շրջադղեստիս ծայրը ցանկապատի
զամերէն մէկուն անցաւ ու պատռեցաւ: Ասոր ալ
պատճառը այն էր, որ շրջադղեստս տոկուն կտաւէ չէր
շինուած: Ասկէ դատ՝ զամը շատ անյարմար տեղ մը
գամուած էր: Ես ի՞նչ յանցանք ունէի ատոր մէջ. ո՞վ
բսաւ, որ ասանկ անյարմար տեղ մը դամ գամեն:

Իրիկուան մօտ ուզեցի քիչ մըն ալ մեր կատուին
հետ խաղալ: Սեղանին վրայ յանկարծ աչքիս դարկաւ
մեծ հայրիկին ժամացոյցը, թաւապատ տուփի մը մէջ
դրուած: Մտածեցի, որ ժամացոյցին թիք-թաքը պիտի
զուարճացնէ կատուս. ուստի՝ առի ժամացոյցը և տա-
րի փխտոյին մօտ: Ասոր մէջ յանցանք մը կա՞յ:

Բայց սևուլիկ փխտս խաղալը շատ կը սիրէ. մէ-
կէն ի մէկ թաթը երկնցուց և ճանկովը դետին նետեց
ժամացոյցը, թաւապատ տուփն ալ մխտախն:

Իրբև պատիժ՝ տարի մառանին մէջ բանտարկեցի
անառակ փխտս: Դուն մի ըսեր, սպասուհին թարմ
պանիր գրած է եղեր հոն: Եւ մեր փխտն աղուոր մը
կը ճաշակէ համեղ պանիրը:

Ասոր մէջ ես յանցանք ունի՞մ, ըսէ՛ք, կ'աղաչեմ:
Ո՞վ ըսաւ, որ պանիր զնեն մառանին մէջ:

ԱՌԱՄ.— Խաղ շատ գիտեմ, ձայն չառնիմ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մաղկաման.— Մաղիկի աման. ծաղկանօթ:

Յանկապատ.— Հողով, կրողիսով կամ բարով հիւսուած
պատ:


Թաւապատ.— Թաւիչով պատած, թաւիչը կերպասի փափուկ
տեսակ մըն է:

Մտան.— Ուտելիք պահելու տեղ:

ՀԱՔՅՈՒՄՆԵՐ.— Ո՞վ է այս պատմութիւնը պատմողը. աղ-
ջի՞կ է քէ մանչ: — Ի՞նչ պատահեցաւ առաջին անգամ, երկրորդ
անգամ, երրորդ անգամ: — Այդ պատահածներուն յանցանքը ո-
րո՞ւնն է: — Գուց ալ կրնա՞ք այսպիսի պատմութիւն մը գրել:

ՔԵՐԱՅԱՆՈՒԹԻՒՆ.— Ութիւն վերջացող անուն-
ները տարբեր ձեւով կը հոլովուին. օրինակ՝ ուրախու-
րիւն, ուրախութեան, ուրախութենէ, ուրախու-
րեամբ: Կան ուրիշ անուններ ալ, որոնք հոլովուելու հո-
լովման տարբեր ձեւեր ունին. օրինակ՝ տարի — տար-
ուան, հաշիւ—հաշուի, ամառ—ամրան, տէր—տիրոջ ևն.:

Հոլովեցէք հետեւեալ բառերը.— Եկեղեցի, երջան-
կութիւն, պատիւ, յուզում, դուռ, լեռ, ամիս, ընկեր:



17. Մ Ե Ր Կ Ա Տ Ո Ւ Ն

1

Մուշտակագործի երես տեսած չէ բնաւ, բայց տարին տասներկու ամիս մուշտակ կը հագնի մեր կատուն: Մուշտակը սեւ է միշտ եւ մետաքսի քնքշութիւն ունի. ս'չ կը մաշի, ս'չ կը հիմնայ:

Օրը տասն անգամ, քսան անգամ կը լուացուի ու կը սամարուի եւ վրան պլախը աշնտափ կակիկ ու մաքուր կը պահէ, որ տեսնողին նախանձր կը շարժէ: Այն օրը, որ մեր կատուն սովորականէն աւելի հոգ տանի իր արգասիքը, «այսօր անպատճառ հիւր պիտի գայ մեզի», կ'ըսէ մայրս:

Հիւր գայ կամ չգայ, մեր կատուն հոգն է: Ամառը կը պտակի տաքուի արեւուն տակ եւ կամ, կանակը սիննին տուած, ճանճերուն հետ կը խաղայ: Չմեռն ալ օձախին քոյ կամ կրակարանին մօտիկը կը կլորուի կը քնանայ:

2

Պօսելու արուեստը մեր կատուն խելքէն շատ վեր է, բայց ամէն բան կը հասկնայ: Երբ գտնակին ու սրբոցին ձայնը առնէ, մէկ ոտու մոյ կու գայ մօրս դէմ կը կանգնի. աչքերուն մէջ սրտապրտ պաղատանք մը կը շողայ, մինչև որ իր բաժինը առնէ եւ մէկ կողմ քաշուի մոլտալով:

Մեծ պահքին, ուր միսին երեւոյթ ով կը տեսնէ, մեր կատուն ալ, ճիշդ ինծի պէս, զգալ մը ապուրին դէմ կը դողայ, եւ ճիշդ ինծի պէս, ճարահատ, անժուր սպապուրով կը գոհանայ:

Երբեմն զունչը տնկած կը դիտէ ձեզունէն կախուած սփսբ, որուն մէջ եօթը փետուրներ մխուած են: Ո՞վ պիտի կրնայ իրեն հասկցնել բարդ հանելուկը եօթը փետուրներուն:

Ամէն անգամ որ փորը կշտացնէ, կ'երթայ մօրս փէշերուն կը քսուի, կոնակը աղեղած, պոչը վեր բռնած: Յետոյ անկիւն մը կը քաշուի, լաւ մը կը լուացուի, պէխերը կը շփէ, մուշտակը կը յարդարէ, աչքերը կը խփէ ու խը՛ո-խը՛ո կը քնանայ:

Աշխարհք վառի, մէջը մարդակ չունի...

ԱՌԱՄ.— Չագ ունեցող կատուն
աւելի գոռ-կ'ըլլայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մուշտակագործ.— Մուշտակ՝ կարգ մը կենդանիներու թաւամազ նուրբ մօրթ, որմէ վերարկու կը շինեն. մուշտակագործ՝ մուշտակ կարող, պատրաստող:

ՔՅԷՆՈՒՅԻՆ.— Փափկութիւն, նրբութիւն:

Սրոց.— Դանակ սրցնելու գործիք:

Սրտագրաւ.— Սիրտ գրուող, սրտի խոսող:

Պաղատանք.— Աղաչանք, խնդրանք:

Սնծուր.— Անհամ (կերակուր):

Դունչ.— Կենդանիներու կզակը:


Չեղուն.— Առաստաղ:

Մարդակ.— Գերան, տանիքը բռնող հաստ փայտ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Կատուն իրա՞ւ մուշտակ կը հագնի: — Մուշտակաւոր կենդանիներու անուններ զիտե՞ք: — Դանակին ու սրոցին ձայնը ինչի՞ նշան է: — Ի՞նչ կը նշանակէ «ձեղունէն կախուած սոխ», «եօրը փետուրներու հանելուկ»: — Կրնա՞ք բացատրել «աշխարհ վատի, մէջը մարդակ չունի» ասացուածքը: — Դուք ալ փորձեցէ՛ք նկարագրել ձեր կամ դրացիին կատուն:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ածականը բառ մըն է, որ գոյականին ինչպէս ըլլալը կը ցուցնէ. օրինակ՝ *խելացի* տղայ, *մաքուր* տետրակ: Խելացի եւ մաքուր ածական են: Ածականները ո՛չ ընդունին, ո՛չ հոլով, բայց երբ առանձին գործածուին, թէ՛ յոգնակի կ'ըլլան եւ թէ՛ կը հոլովուին. օրինակ՝ խելացին կը յարգուի, խելացիները կը սիրուին:

Ձեր այսօրուան դասին մէջ ածականներ կա՞ն. որո՞նք են:



18. Ե Կ Ա Ն Ո Ի Գ Ա Յ Ի Ն . . .

Ձմրուխտեայ երգեր, երագներ շքեղ
Գարնան վարդին հետ եկան ու գացին.
Մայրական համբոյր եւ սէր հրաշագեղ
Գարնան սիւքին հետ եկան ու գացին...

Բոյն չըշինեցիր ուրիշի նըման,
Երագներու մէջ մուրա՛ծ բոչուն.
Մինակ մնացիր ու բափառական,
Ընկեր, բարեկամ եկան ու գացին...

Եւ հիմա աշնան մէգի մէջ խաւար,
Ականջըդ դըրած սրտիդ լուռ լացին,
Օտար ափերու կանգներ ես շուար.
Ինչ որ ունէիր՝ ա՛լ անդարձ գացին...:

ԲԱԼԵՐ ՈՒ ԲԱՅԱՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զմբուխտեայ.— Զմբուխտը կանաչագոյն թանկագին քար մըն է, զմբուխտեայ՝ զմբուխտի պէս թանկագին:

Սիււք.— Թէթեւ հով, հովիկ, զեփուտ:

Մէզ.— Մշուշ, մառախուղ:

Շուար.— Շուարած, շփոթած:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ տեսակ մէկն է այս ուսանաւորին հեղինակը. լաւատե՞ս, յոռետե՞ս, ծե՞ր, երիտասարդ: — Ինչո՞ւ կը կարծէ, թէ երգերը, երազները, մայրական սերը, բնկեր ու բարեկամ եկամ ու գացին: — Ի՞նչ կը տեսնէ կիսա իր շուրջը: — Մարդ կը դադրի՞ երբեք երազներ ու փափաքներ ունենալէ: — Ի՞նչ պէտք է հասկնալ «տար ամեր» բառով:

19. Գ Ի Ք Ո Ր Ը

1

Դրան զանգակը զարնուեցաւ:

Գիշոր վեր թռաւ տեղէն: Ըսած էին իրեն, որ երբ դրան զանգակը զարնուի, անմիջապէս երթայ տեսնէ, թէ ո՞վ է և ինչ կ'ուզէ: Պատշտամէն վար նայելով տեսաւ պարոն մը և մէկ քանի տիկի՛ններ, որոնք դըրան առջև կը սպասէին:

— Ատ ո՞վ էք, հէ՛յ, — կանչեց վերէն:

Վարէն վեր նայեցան: Տիկի՛նները խնդացին, իսկ պարոնը, ահնոցները շտկելով, հարցուց.

— Աղջիկ պարոնը տո՞ւնն է:

— Ի՞նչ պիտի ընէք, հարցուց Գիշոր:

— Քեզի կը հարցնեն՝ տո՞ւնն է թէ ոչ:

Այս ազմուէկին վրայ, տիկի՛նը եկաւ պատշտամ, տեսաւ՝ հիւրեր են և կը սպասեն, որ դուռը բանան:

— Քրքրուի՛ս դուն. դնա՛ դուռը բաց, շո՛ւտ, — հրամայեց տիկի՛նը:



Հիւրերը արդէն ներս մտնը էին, տիկի՛նը խնդումերես զիմաւորեց զանոնք:

— Օ՛, բարեւ, բարեւ... այս ի՞նչպէս եղաւ, որ յիշեցիք մեզ:

— Աս ուրի՞շ պտեր էք, — Գիշորը ցոյց տալով հարցուց պարոնը, մինչ տիկի՛նները խնդալէն կը մարէին:

— Կը նախանձի՞ք... Կ'ուզէք ձեզի տանք, — կատակեց տիկինը եւ շուկայ զրկեց Գիքորը միրզ բերելու:

2

Հիւրերը եւ տիկինը կէս ժամ մը խօսակցեցան ասկէ — անկէ, օդի մասին, ծառերու մասին, քաղաքի նորութիւններուն մասին: Ընչդ այս խօսակցութեան ատեն ներս մտաւ Գիքորը քրտինքնեղով մէջ:

— Աղջիկ պարոն, միրզը բերի, — ըսաւ ան հաղիւ չունչ առնելով:

— Լաւ, զնա՛, — հրամայեց տիկինը կարմրելով:

— Պարոնը կ'ըսէր, թէ բալը սուղ է, պէտք չկայ առնելու:

Այս խօսքերուն վրայ՝ հիւրերէն ոմանք թաշկի-նակով բերաննին զոցեցին շինդալու համար. ոմանք ալ տանտիկինը պղտիկ չձգելու համար վկայեցին, թէ իրա՛ւ բալը սուղ է, այս ատեն ո՛վ բալ կ'առնէ. եւ յետոյ՝ ի՞նչ պէտք կար միրզի, ուտելո՞ւ համար եկած էին իրենք...

Տանտիկինը, որ մինչեւ ականջին ծայրը կարմրած էր այդ պահուն, կ'աշխատէր ծառային սխալը ուղղել կերպով մը:

— Ո՞վ զխտէ ի՛նչ է ըսեր, որ այս յիմարը չէ հասկըցեր:

— Ո՞վ սուտ ըսէ, զետինը մտնէ, — վրայ բերաւ Գիքոր եւ ամէն բան կատարեալ եղաւ...

ԱՌԱՄ. — Գիտովը, կիճն ու տղան
գաղտնիք պահել չեն գիտեր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղջիկ պարոն. — Գաւառներու մէջ գործածուած բացարու-
թիւն մը, կը նշանակէ տան տիկինը, տան տիրուհին:

Միրզ. — Ձոր պտուղ:

Բալ. — Կեռասի տեսակ մը:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Երբ դրամ գանգակը գարնուցաւ, ի՞նչ ըրաւ Գիքոր: — Ի՞նչ պէտք է ընէր: — Ինչո՞ւ խնդացիմ տիկինները: — Գիքոր ի՞նչ բերելու գնաց շուկայ: — Երբ վերադարձաւ, ի՞նչ ըրաւ. ճիշդ էր ըրածը: — Տան տիրուհին ինչո՞ւ ամչցաւ: — Այս պատմութեան ամենէն գուրճալի մասը ո՞րն է:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Հինգ տեսակ ածական կայ. որակական, ցուցական, ստացական, թուական, անորոշ: Որակական կը կոչուին այն ածականները, որոնք իրենց բովի գոյականին ինչպէս ըլլալը կը ցուցնեն. օրինակ՝ ճերմակ թուղթ, մաքուր գրասեղան: ձերմակ եւ մաքուր բառերը որակական ածական են:

Յոյց տուէ՛ք ձեր այսօրուան դասին մէջ գտնուած որակական ածականները: Գտէ՛ք տաքը նման ածականներ եւ անոնց բով դրէ՛ք յարմար գոյականներ:



20. Ն Ա Ր Ի Ն Ջ Կ Ե Ր Է Ք

1

Կաղնդեմ ձեզ նարինջով:

Մեր զիւզին մէջ նարինջով կը կաղնդէին զիրար: Երբ վարժապետին ձեռք — սլաղի կ'երթայինք Կաղանդին, թաշկինակ կը նուիրէինք իրեն, ան ալ մեզի նարինջ կը նուիրէր: Իսկ հիւանդտեսի զայցողները կատուի զխու մեծութեամբ նարինջ մը կը նուիրէին հիւանդին:

Ամենէն աղքատ տնակին մէջ, սեղանին վրայ դրէք լոթը նարինջ, զուարթութիւն կը ստանայ սենեակը:

Արդարեւ, հրաշքի պէս պտուղ մըն է նարինջը: Ան սնունդ է մանուկին համար, հիւանդութենէ նոր ապաքինած մարդուն համար, ծերերուն համար: Անոր ջուրը կաթի չափ օգտակար է երախային համար:

Ֆրանսացիները բուսական հաւկիթ կ'անուանեն նարինջը, որովհետեւ հաւկիթի պէս սննդարար է: Կը պարունակէ բնական շաքար եւ ուրիշ սննդական թանկազին նիւթեր:

2

Անոնք, որ զիրնալու վախ ունին, թող նարինջ ուտեն: Նարինջը զերութեան թշնամի է: Կ'ըսեն, թէ ջիւղերու վրայ ալ լաւ կ'աղդէ: Ժամանակին նարինջի կեղեւը կամ ծաղիկը խաշելով կը խմցնէին ջիւղերու տկարութիւն ունեցողներուն:

Վերջապէս հրաշալի զովացուցիչ մըն է նարինջին ջուրը: ասա թէ ինչո՞ւ բարձր ջերմութիւն ունեցող հիւանդներուն նարինջի ջուր կու տան:

Չմոռնանք նարինջով պատրաստուած անուշեղէններուն բարերար դերը ստամոքսին, աղիքներուն եւ լեարդին վրայ:

ԱՌԱՄ.— Ազատն ունի հաց ու պանիր, Գիշերը քունը չի տանիր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կաղնդի.— Կաղանդի առիթով նուէր տալ:

Ապաքինած.— Աղէկցած, լաւացած, առողջացած:

Սննդակամ.— Սնունդի վերաբերեալ:

Ջովացուցիչ.— Ջովութիւն տուող, տաքութիւն նուազեցնող:

Ջերմութիւն.— Տաքութիւն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Այս գրուածքիմ հեղինակը ինչո՞ւ կը յանձնարարէ մարիմջ ուտել: — Որո՞նք են մարիմջիմ առաւելութիւնները ուրիշ պտուղներու վրայ: — Ֆրանսացիները ի՞նչ կ'անուանեն մարիմջը: — Ո՞ր երկիրները մարիմջ կ'արտադրեն: — Ուրիշ ի՞նչ պտուղներ կան, որոնք մոյմպէս օգտակար են:

ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Յուցական կը կոչուին այն անկանները, որոնք բան մը ցոյց տալով որոշելու կը ծառայեն. օրինակ՝ այս գիրքը, այդ սեղանը, այն մարդը: Յուցական անկաններն են այս, սա, աս, այդ, այն, ան:

Տասը մախադասութիւն կազմեցէք եւ ցուցական անկաններ դրէք գոյականներուն առջեւ:


21. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ ԿՌՈՒԻ ԿՆՐԹԱՅ

1

Հագար Դաիթ գէնքն ու զըրահ,
 Կապեց գօտին, բուր - կայծակին,
 Խաչն ալ իր յաղթ բազկին վըրայ,
 Ելաւ հեծաւ առիւծ հօր ձին:
 Հօր ձին հեծաւ ու մտրակեց,
 Սարի գլխէն այսպէս կանչեց -
 - Է՛յ, բէ քուն էք, արքուն կեցէք,
 Թէ արքուն էք, ելէք, կեցէք,
 Թէ կեցեր էք, գէնք կապեցէք,
 Ձէ՞նք էք կապեր, ձի քամբեցէք,
 Ձի՞ էք քամբեր, ելէք, հեծէք,
 Ետքը չըտէք՝ մենք քնացած,
 Դաիթ գող - գող եկաւ, զընաց: -
 Այսպէս կանչեց, ասպանդակեց,
 Թուր - կայծակին փայլատակեց,
 Վագեց գօրքին մէջտեղն ինկաւ,
 Կարծես ամպէն կայծակ գարկաւ:
 Ջարդեց, փշրեց մինչեւ կէտօր,
 Ու արիւնը եղաւ հեղեղ,
 Քըշեց, տարաւ հագարաւոր
 Մարդ ու դիակ ամբողջ մէկտեղ:

2

Կար գօրքին մէջ մէկ պիւտր,
 Աշխարհի տեսած ու շատ բանգէտ.
 Գընաց, կեցաւ Դաիթի դիմաց,
 Այսպէս ըսաւ այն ծերունին.



- Դալար մընայ կուող, ո՛վ քաջ,
 Սուրը կտրուկ միշտ քու ձեռքին.
 Մէյ մը ծերիս դուն ունկնդրէ,
 Տե՛ս, քու խելքդ ի՞նչ կը կտրէ:
 Ի՞նչ են ըրեր քեզ այս մարդիկ,
 Ատնք ինչո՞ւ կը կտորես.
 Ատնք բոլոր մօր մը որդիք,
 Ատնք բոլոր տան մը ճըրագ,
 Ջաւակ ու կին քողեր են հոն,
 Աչքը քամբուն, խեղն ու կրակ:
 Թագաւորը բռնի, քուրով
 Հաւաքեր է, հոս է բերեր:
 Խեղն մարդիկ ենք պակաս օրով,
 Քեզի վընաս ի՞նչ ենք ըրեր:

Թագաւորն է քու քշմամիդ.
 Կըռի՞ւ ունիս, իրե՛ն գընա.
 Ի՞նչ ես քաշեր քուր — կայծակիդ
 Այս աննարակ մարդոց վըրայ: —
 — Աղէկ կ'ըսես դուն, ծե՛րունի,
 Ըսաւ Դաւիթ աղետրին.
 Բայց քագաւորն ո՞ւր է հիմա,
 Որ սեւ կապեմ անոր օրին:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թուր — կայծակին: — *Կայծակի պէս զարնող սուր:*
 Ասպանդակել: — *Ասպանդակ՝ ձիու թամբին երկու կողմէն
 կախուած օղակներ, որոնց մէջ կ'անցընէ ձիաւորը իր ոտքերը:
 Ասպանդակել՝ ձի հեծնել, այդ օղակները ձիուն կողքն զարնել:*
 Կուռ: — *Ձեռք, բազուկ:*
 Ունկնդրել: — *Մտիկ ընել:*

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ. — Որո՞ւ դէմ կուռի կ'երբքար Դաւիթ. իմ-
 չո՞ւ: — Ինչո՞ւ կ'ուզէր, որ արքուն կենայ քշմամին: — Ի՞նչ ը-
 րաւ կուռի ընթացքին: — Յետոյ ո՞վ ներկայացաւ իրեն եւ ի՞նչ
 ըսաւ: — Իրաւումք կու տա՞ք ծերունիին: — Դաւիթ ի՞նչ պատա-
 խամ տուաւ անոր: — Ո՞վ է «Սասունցի Դաւիթ»-ին հեղինակը: —
 Կրնա՞ք պատմել շարունակութիւնը:



22. Գ Ի Ս Ա Ի Ո Ր Ը

1

Կէսօրէ կտք մը, ազգային վարժարանի մէջ իմ
 վերջին տարիս, ես չլսեցի պետուին աղջկան բոժոժնե-
 րուն ձայնը: Ան հաւանաբար անցած էր, իսկ ես շատ
 զբաղած էի. կը մտածէի կրակէ պոչով աստղին վրայ,
 որ ամէն վայրկեան աւելի կը մօտենար մեզի: Ես գրե-
 թէ կը տեսնէի դայն. ան կը սուրար, պարապութեան



ու մթութեան մէջէն, դէպի մեր կրկիրը, որ ինք իր
 վրայ կը թաւալէր անփութօրէն:

Օր մը, երբ Արմէն շնչասպառ դպրոց եկաւ եւ
 մարդարէական շէշտով մը յայտարարեց, թէ աշխար-
 հի վերջը եկած է, մենք ուրիշ բանի մասին չմտածե-

ցինք այլևս, բայց եթէ կրակէ պոչով աստղին, որ մեր կործանումին պատճառ պիտի ըլլար:

— Անիկա պիտի դայ այն բարձր տեղէն, ուր աստղերն են, — ըսաւ Արմէն, — բուն մարմնին մէջ, որ սպիտակ է եւ աստղի կը նմանի, շատ տեսակ թունաւոր կազեր պիտի ըլլան: Եւ պիտի ունենայ պոչ մը, երկար ու կարմիր, որ կրակէ պիտի ըլլայ: Ան պիտի դայ սոսկալի արագութեամբ եւ պիտի բախի մեր երկրագունդին: Յետոյ մեծ կրակ մը պիտի սկսի, ամէն ինչ պիտի թունաւորուի, եւ ժայռերը փշուր-փշուր պիտի ըլլան:

2

Այդ գիշեր մեր տան տանիքը ելայ եւ երկինքը գիտեցի: Ան կապոյտ էր եւ աստղերով լի. բայց այն մէկ աստղը, կրակէ պոչով, ուշ մնացած էր:

Յաջորդ առաւօտ լոյսի եւ տաքութեան գիտակցութիւնը ունեցայ: Անսահման անուշութիւնը այդ վայրկեանին... տեսայ, որ ամէն առտուան պէս արեւը ծագած էր. կէս ժամէն նախաճաշ պիտի ընէի, յետոյ պիտի հագնէի կապոյտ համազգեստս ու երթայի դպրոց:

— Աստղ մը, կրակէ պոչով, անցա՞ւ այս գիշեր, — հարցուցի հօրս, նախաճաշի ատեն:

— Օ՛, զիսաւո՞րը ըսել կ'ուզես: Այո՛: Ո՞վ ըսաւ, թէ ան կրակէ պոչ ունի:

— Ո՛չ ոք: Այնպէս մտածեցի, թէ կ'ունենայ: Վըտանգաւո՞ր է:

— Ոչ, ինչո՞ւ վտանգաւոր պիտի ըլլայ: Ան զիսաւոր մըն է պարզապէս, ամէն յիսուն տարին անգամ մը կ'անցնի:

— Ե՞րբ պիտի անցնի կրկին, — հարցուցի:

— Ի՞նչ, զուժարեւ չե՞ս գիտեր: Կարծեմ 1979ի ապենները:

Հօրս նայեցայ, բնաւ չէի նշմարած, որ ան գորշ մաղեր ունէր: Աչքերը յողնած կ'երեւէին, եւ խորշոմներ կային ճակատին ու զէմքին վրայ: Բնաւ չէի մտածած, որ ան ալ պիտի ծերանար ուրիշներու պէս:

Եւ յանկարծ սկսայ լալ, դուրս կախած թէյի դաւաթին վրայ:

ԱՌԱՄ.— Առնելիքդ ասեղ մըն է, երկաթին գիւր կը հարցընես:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիսաւոր.— Պոչաւոր աստղ, որ ընդհանրապէս կազային նիւթերէ կազմուած կ'ըլլայ:

Պետուիւն.— Վրանարեակ արար. պետուիւնները առհասարակ անսպասելի մէջ կ'ապրին:

Գորշ.— Մոխրագոյն, սեւ եւ ճերմակով խոտն (մայ):

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Իրա՞ւ կրակէ պոչ կ'ունենան գիսաւոր աստղերը: — Այս գրուածքին հեղինակը ի՞նչ բանէ կը վախճար: — Ո՞վ այդ վախը ներշնչած էր իրեն. ի՞նչ ըսած էր: — Գու՛գ տեսա՞ծ էք գիսաւոր աստղ: — Քանի՞ տարին անգամ մը կ'երեւին այս աստղերը: — Վտանգաւոր են. ի՞նչ վտանգ կը ներկայացնեն:

ՔԵՐՍԿԱՆՈՒԹԻՒՆ.— Ստացական կը կոչուին այն անակամները, որոնք բանի մը որուն պատկանիլը ցոյց կու տան. օրինակ՝ իմ գրիչս, քու տետրակդ. իմ եւ քու ստացական անակամ են:

Ստացական անակամները հետեւեալներն են. իմ, քու, իր, մեր, ձեր, իրենց:

Յույց տուէք ձեր այսօրուան դասին մէջ գտնուած ստացական անակամները:



23. ԹԱԳԱԻՈՐԸ ԵՒ ՀՈՎԻԻԸ

1

Շատ հեռուոր երկրի մը մէջ Թագաւոր մը կ'ապրէր. ծերութեան օրերուն՝ իր սիրտը դառնացաւ:

— Կեանքիս մէջ, — կ'ըսէր ան, — ամէն ինչ տեսայ, բացի Աստուծմէ: Կ'ուզեմ տեսնել զայն:

Եւ հրամայեց իր երկրի իշխաններուն, զիտուններուն եւ հոգևորականներուն՝ ցոյց տալ իրեն Աստուածը, հսկատակ պարագային սպառնաց չարաչար պատժել զանոնք:

Պայտօին մէջ տիրեց ընդհանուր յուսալքում: Լուռ ու զլխիկոր կանգնած էին Թագաւորին առջև. զիտունները, հոգևորականներն ու իշխանները եւ սրտատրոփ կը սպասէին իրենց արուելիք պատիժին:

Նոյն միջոցին դաշտէն վերադարձող հովիւ մը մըրտաւ պալատ: Ներկայացաւ Թագաւորին եւ ըսաւ.

— Թոյլ տուր, Թագաւո՛ր, կատարելու փափաքդ: Ապա հրաւիրեց Թագաւորը պալատէն դուրս, կանգնեցուց հրապարակին վրայ, ցոյց տուաւ շողշողուն արեւը եւ աւելցուց.

— Նայէ՛ արեւուն, Թագաւո՛ր:

Թագաւորը բարձրացուց զլուխը եւ ուզեց նայիլ արեւուն, բայց անոր սուր ու կիզիչ ճառագայթները ծակեցին իր աչքերը:

— Ի՞նչ է, դուն կ'ուզես կուրցնե՞լ զիս, — հարցուց հովիւին:

— Թագաւո՛ր, — ըսաւ այն ատեն հովիւը, — ասիկա Արարիչին հրաշագործութիւններէն մէկն է միայն, աննշան մէկ մասնիկը աստուածային մշտալառ խորոյիին: Հապա ի՞նչպէս կը համարձակիս տեսնել Արարիչը քու Թոյլ աչքերովդ: Գուն Աստուածը տես ուրիշ աչքերով:

2

Թագաւորը շատ հաւնեցաւ ալս խօսքերուն:

— Կը տեսնեմ, որ շատ խելացի մարդ ես դուն, — ըսաւ հովիւին. — ապա ուրեմն ըսէ ինձի, թէ ի՞նչ կար Աստուծմէ առաջ:

Հովիւը մտածեց վայրկեան մը եւ ըսաւ.

— Կը խնդրեմ, Թագաւո՛ր, նեղութիւն կրէ համբերու:

— Ս էկ, երկու... սկսաւ համբել Թագաւորը:

— Ո՛չ, ո՛չ, — ընդմիջեց հովիւը, — սկսէ մէկէն առաջ:

— Ի՞նչպէս կարելի է, երբ մէկէն առաջ բան չկայ:

— Խելացի բան ըսիր, Թագաւո՛ր, ուրեմն Աստուծմէ առաջ ալ բան չկար:

Թաղաւորը ալ աւելի հաւնեցաւ այս խօսքին :

— Մեծամեծ պարզեւներու կ'արժանացնեմ քեզ, —
յարեց, — եթէ կարենաս ըսել ինծի, թէ ի՛նչ կ'ընէ
Աստուած :

— Ես այդ հարցումին կը պատասխանեմ, — վրայ
բերաւ հովիւը, — միայն կատարէ իմ խնդրանքս, եկուր
փոխենք մեր հազուատները :

Թաղաւորը հանեց իր արքայական զգեստները եւ
հազցուց հովիւին, ինք ալ հազաւ անոր ցնցոտիները
եւ կախեց հովուական պարկը վիզէն :

Հովիւը բարձրացաւ գահուն վրայ, առաւ Թաղա-
ւորական մականը եւ ըսաւ Թաղաւորին .

— Ահա թէ ի՛նչ կ'ընէ Աստուած, մէկը գահը կը
բարձրացնէ, միւսը գահէն կ'իջեցնէ :

Թաղաւորը սկսաւ մտածել . հովիւին խօսքերը խոր
ազդեցութիւն գործած էին իր վրայ : Յանկարծ մեծ
ցնծութեամբ բացազանչեց .

— Ահա հիմա ես կը տեսնեմ Աստուածը :

ԱՌԱՄ.— Ընտիր գինի, ընտիր մատեան,
Քանի հիմնան կը համովնան :

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դառնանալ.— Նեղանալ, բարկանալ :

Յուսալուծ.— Յուսահատութիւն :

Սրտատրոփ.— Սիրտը թունդ ելած :

Կիզիչ.— Այրող, վառող :

Արարիչ.— Ստեղծող, Աստուած :

Մշտավառ.— Միշտ վառող, վառուած :

Խարոյկ.— Կրակ :

Յնցոտի.— Հին ու մին հազուատ :

Մական.— Թաղաւորական գաւազան :

Յնծութիւն.— Ուրախութիւն, հրճուանք :

Մատեան.— Գիրք :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞վ կատարեց քաղաւորին փափաքը, ի՞նչ
պէս : — Ի՞նչ բացատրութիւն տուաւ հովիւը իր ըրածին համար :
— Ուրիշ ի՞նչ փափաք յայտնեց քաղաւորը : — Իրա՞ւ է, որ մէկէն
առաջ բան չկայ : — Ի՞նչ եզրակացութիւն կրճաք հանել այս պատ-
մութեան :

ՔՐԵՍԿԱՆՈՒԹԻՒՆ.— Թուական կը կոչուին այն
ածականները, որոնք անունի մը քանի հատ կամ քանի-
երորդ ըլլալը ցոյց կու տան . օրինակ՝ *երկու* գիրք, *երրորդ*
դասարան : *երկու* եւ *երրորդ* քուական ածա-
կան են : Երեք տեսակ քուական ածական կայ . բացար-
ձակ, դասական եւ բաշխական :

24. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԹԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Թըռաւ, ցոլաց Դաւթի հուր ձին,
Ձին փոքորկեց, փայլատակեց,
Շոգաց, իջաւ քուր կայծակին .
Անցաւ քառսուն գովչի կաշին,
Անցաւ քառսուն քարերէն ցած,
Կտրեց մէջքը ժամտ հըրէշին,
Եօքը կանգուն ալ խորը գընաց :
Աս որ տեսան օտար գօրքեր,
Քար կըտրեցան վախէն իրենք .
Իսկ Դաւիթը, քէ — մի՛ վախնաք,
Դուք դեռ ինծի ականջ դրէք :

Աշխատաւոր մարդ է՛ք, ըսաւ,
 Զուրկ ու խաւար, քաղցած ու մերկ,
 Հագար ու մէկ կրքակ ու ցաւ,
 Հոգեր ունի՛ք հագար ու մէկ:
 Ի՞նչ է՛ք առեր նետ ու աղեղ,
 Եկեր քափեր արեան դաշտեր.
 Մե՛նք ալ ունի՛նք մանուկ ու ծեր...
 Չէ՞ որ մե՛նք ալ ունի՛նք տուն-տեղ,
 Չաւորացե՞ք է՛ք խաղաղ ու հաշտ
 Հողագործի օր ու կեանքէն,
 Թէ՞ զգուեր է՛ք ձեր հանդ ու դաշտ,
 Չեր հունձ ու փունջ, վար ու ցանքէն...
 Ելէ՛ք, դարձէ՛ք եկած մամբով
 Չեր հայրենի հողն հեռակայ.
 Բայց քէ մէյ մ'ալ գէնք ու գործով
 Նորէն կու գաք դուք մեր վրայ,
 Ըլլայ հորը քառուն տակ խոր,
 Ըլլայ տակը ջաղացքարին,
 Չեր դէմ կ'ելլեն, ինչպէս այսօր,
 Սասմայ Դաւիթ, քուր կայծակին:

ԲԱԹԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Հուր.— Կրակ. այտեղ ըսել կ'ուզուի հրեղէն. կրակէ պէս:
- Ժամտ.— Չար, վատ, չարագործ:
- Քաղցած.— Անօթի:
- Հանդ.— Արտ, դաշտ:
- Հեռակայ.— Հեռու, հեռաւոր:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Որո՞ւ դէմ կը կռուէր Դաւիթ: — Ի՞նչ կա-
 շի՛ի եւ քարի մասին է խօսքը: — Օտար գորգերուն ի՞նչ խօսեցաւ
 Դաւիթ: — Իսկ ի՞նչ բանի համար կը մղուէր կռիւը: — Ի՞նչ դաս
 կարելի է համել այս ամբողջ պատմութեան:

25. Խ Ե Լ Ա Յ Ի Շ ՈՒ Ն Ե Ր

Բարձրաստիճան անձնաւորութիւն մը, ասե՛նօք,
 Պրուտոն անու՛նով չուն մը ունէ՛ր:

Պրուտոն չէր կրնար հանդուրժել, որ օտար մէկը
 տունը մտնէ: Եկող-վացող հիւրերը վտանդի մէջ էին
 միշտ: Այս անպատահութեան առջեւն առնելու համար,
 տէրը սկսաւ ամենէն առաջ Պրուտոնին ներկայացնել իր
 հիւրերը եւ ըսել անոր.

— Պրուտո՛ն, ահա այսինչ պարտնը. իմ բարեկա-
 մըս է:

Այսպէս՝ Պրուտոնին ներկայացուելէ ետք միայն
 մարդիկ կրնային ազատ ելլա՛նք ունենալ տան մէջ:

Լոնտոնի համբաւաւոր վիրարոյժներէն մէկը չուն
 մը ունէ՛ր, որ հիւանդանոցին մէջ, աթոռի մը վրայ
 նստած, ներկայ կ'ըլլար վիրարութեան գործողու-
 թիւններուն:

— Անգամ մը, — կը պատմէ վիրարոյժը, — հի-
 ւանդանոց մտնելու ատեն շահ թաթը մնաց դրան մէջ:
 Խեղճ կենդանին սկսաւ կաղկանձել եւ կաղն ի կաղ վա-
 ղելով բարձրացաւ վիրահատութեան սեղանին վրայ.
 Հոն պատկեցաւ ու թաթը երկնցուց ինծի: Տեսայ, որ
 ստքին մէկ մասը ճմրուեր է. հարկ եղած դարձանումը
 ընելէ ետք լու մը կապեցի: Քիչ մը հանդստացաւ եւ
 աթոռին վրայ կծկաւ զնացաւ: Ա՛լ ամէն օր կու դար

իր վերջը դարձանել տալու, մինչև որ բուրրովին լա-
ւացաւ:

3

Ուրիշ շուն մը տունը կը պահպանէր տիրոջը բա-
ցակալութեան: Օր մը, տան բարեկամներէն մէկը այ-
ցելութեան եկաւ, երբ տունը մարդ չկար: Շունը բնաւ
տեսած չէր դայն եւ չէր զիտեր, թէ ի՛նչ պէտք է ը-
նէր: Չուզեց աչքը հեռացնել անոր վրայէն:

Երբ այցելուն սենեակ մը զնաց, շունն ալ ետեւէն
մտաւ հոն. իսկ երբ ան աթոռ մը առաւ ու նստաւ,



ինք ալ պառկեցաւ անոր մօտ, զլուխը թաթերուն
վրայ դրած:

Այցելուն, ատեն մը մնայէ ետք, մեկնելու պատ-
րաստուեցաւ. բայց շունը չթողուց, որ տունէն դուրս
ելլէ. կ'ուզէր որ տէրը տեսնէր դայն: Երբ վերջապէս
համոզուեցաւ, որ այցելուն վատահելի անձ մըն է, զո-
վը զնաց եւ քիթը անոր ձեռքին վրայ դրաւ:

Այս բոլորը լաւ. բայց դուք լսած էք, որ նուազող
շուններ կան: Ես բնեմ, դուք ալ սորվեցէք: Մոսկուայի
երաժիշտներէն մէկուն շունը այնքան լաւ կը նուազէր,
որ կը մասնակցէր երգչախումբին եւ իր տիրոջ երգած
ատեն նուազով կ'ընկերանար անոր:

Եթէ աւելի կը հետաքրքրուիք շուներու պատմու-
թիւններով, խնդրեցէք ձեր ուսուցիչէն, որպէսզի ձեզի
ներկայացնէ զանազան զրուայներ «ոստիկան» շունե-
րու կեանքէն:

ԱՌԱՄ.— Խաժամ շունը ակոյայ չի ցուցներ:

ԲԱՌԻՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Համդուրժիլ.— Թոյլատրելի, ներելի:

Կաղկամձիլ.— Շուներու սոնալը:

Դրուագ.— Դէպք, մանրավէպ:

Վիրահատութիւն.— Վերջը կտրելի:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ գիտէ՞ Պուտոնի մասին: — Ի՞նչո՞ւ
վտանգ մըն էր ան եկող — գացող հիւրերուն համար: — Կրնո՞ք
պատմել, թէ ի՛նչ ըրաւ վիրաբոյժին շունը: — Ի՞նչ կ'ըսէ՞ ան-
ծանօթ այցելուին եւ տան շունին պատմութեան: — Հապա Ռու-
զող շան պարագա՞ն: — Որեւէ բան լսած է՞ք «ոստիկան» շուներու
մասին:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բացարձակ կը կոչուին այն
բուական անկանները, որոնք գոյականի մը քանի
հատ ըլլալը կը ցուցնեն. օրինակ՝ չորս նարինջ, տասը
աքոս: Չորս եւ տասը բացարձակ բուական անկան
են: Դասական կը կոչուին այն բուական անկանները,
որոնք գոյականի մը քանիքորոշ ըլլալը ցոյց կու տան.
օրինակ՝ չորրորդ կարգ, վեցերորդ դասարան: Բաշ-
խական կը կոչուին այն բուական անկանները, որոնք
իրենց բովի գոյականին քանիական ըլլալը կը յայտնեն.
օրինակ՝ հինգական տեսրակ, տասնական հոգի:

26. Ո Ջ Ն Ի Ն Ե Ի Օ Ջ Ը

1


Ամբան տաք օր մըն էր. արեւուն կիզիչ ճառագայթները այրեր, մրկեր էին արտ ու արօտ:

Ամէն կողմ լուռ, ամէն ինչ անշարժ էր: Գիւղին առջևէն հոսող վտակին շունջն անգամ դաղըեր էր. կարծես ան ալ թմբեր, պապանձեր էր:

Օրուան այս տաքին, գիւղին մանուկները հաւաքուեր էին ձորին զլուխը եւ կը նայէին վար:

Վարը, ձորին մէջ, կը կռուէին ոգնին ու օձը:

Կռիւը կատաղի էր: Օձը, կը սուլէր, կը դառնար



փշոտ ոգնիին շուրջ, բայց չէր կրնար բռնել դայն: Ոգնին փոքրիկ զլուխը դուրս կը հանէր երբեմն, կը խածնէր օձին մէջքը կամ վիզը եւ նորէն կը կծկուէր:

Վերջին անգամ իր սուր փուշերուն մէջէն դուրս հանեց զլուխը,

ամուր մը բռնեց օձին պոչէն եւ ինք իր վրայ կծկուեցաւ դարձեալ:

2

Ինչ որ ըրաւ օձը, չկրցաւ ինքզինք ազատել. ցաւէն կը Փշար, երբեմն զլուխը կը մօտեցնէր պոչին, երբեմն ալ մարմինը այս ու այն կողմ կը դարնէր: Ոգնիին փուշերը սուր էին, անխնայ կը քրքրէին օձին իրանն ու զլուխը:

Հետզհետէ օձը սկսաւ թուլնալ. մարմնին վրայ բաղմաթիւ վերքեր բացուեր էին. ա՛լ չէր սուլեր, ա՛լ չէր Փշար, միայն կը ցնցուէր ամբողջ մարմնով:

Ոգնին կծկուեր էր՝ օձին պոչը ամուր բռնած: Բաւական ժամանակ անցաւ այսպէս, մինչեւ որ օձը անշարժացաւ մնաց: Սասկած էր:

Ոգնին ի վերջոյ թողուց օձին պոչը, քանի մը անգամ զլուխը թեւամար դուրս հանեց զլուխը, նայեցաւ օձին, յետոյ զնայ մտաւ թուփերուն տակ:

ԱՌ.ԱՄ.— Պաղած օձը նախ զինք տաքցնողը կը խայթէ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արօտ.— Արածելու խոտ եւ դաշտ:

Վտակ.— Առու, փոքր գետ:


Շրուռ.— Մեղմ ու թեթեւ ձայն:

Պապանձիլ.— Լուռ մնալ, լեզուն կապուիլ:

Թուփ.— Փոքր ծառ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Օր մը ի՞նչ պատահեցաւ ձորին մէջ. ո՞վ որու դէմ կը կռուէր: — Կրնա՞ք նկարագրել կռիւը: — Վերջապէս ո՞վ յաղբուեցաւ. ինչո՞ւ: — Ոգնին ի՞նչ բանի կը պարտէր իր յաղբանակը: — Տեսա՞՞ք էք ուրիշ կենդանիներու կռիւը. շարադրութիւն մը գրեցէ՛ք ձեր տեսած կռիւի մասին:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Անորոշ կը կոչուին այն անձականները, որոնք տարտամ եւ անորոշ իմս ստ մը կու տան գոյականին. օրինակ՝ ամէն մարդ, քանի մը հոգի: Ամէն եւ քանի մը անորոշ անձական են: Անորոշ են նաեւ հետեւեալ անձականները. բոլոր, մէկ քանի, ամէն մէկ, իւրաքանչիւր, նոյն, միեւնոյն, ուրիշ, միւս, ոչ մէկ, որեւէ, այսքան, այդքան, այնքան, որքան, քանի քանի եւ այլն:



27. ԱՐԾԻՒՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Անգամ մը արծիւն ու խոշոր կաղնին
Անտառի մը մէջ մեծ վէճ ունէին,
Թէ ո՞րն իրենցմէ շատ տարի կ'ապրի,
Ո՞րն է դիմացկուն, հրգօր աւելի:

Արծիւն ըսաւ՝ ես, կաղնին ալ յէ՛ ես.
Երկուքն ալ յամառ ու հըսպարտ, աշսպէս
Մեծ — մեծ պարծեցան, երկար վիճեցան
Եւ վերջ ի վերջոյ դրրին սա պայման.

Ըսին՝ բող անցնի հինգ հարիւր տարի,
Ու երբ աշս օրը հեղ մ'ալ գայ հասնի,
Այդ օրը դարձեալ գանձ գիրար գտնենք
Եւ մէկզմէկու քէֆ հարցնենք մենք:

Դարերը անցան: Եւ ահա մէկ օր
Արծիւը եկաւ, ծերացա՛ծ, անգօ՛ր,
Ժիր ձայնը մարած, վատուժ, հեւասպառ,
Հազիւ շարժելով քեւերն իր տրկար:

Եկաւ, տեղ հասաւ, նայեցաւ վերէն,
Տեսաւ, որ կաղնին ինկեր է արդէն.
Ինկեր է ահեղ փոքորիկին առաջ,
Թէւ նիւղերն իր՝ դեռ բարմ ու կանաչ:

— Հէ՛յ, պոռաց, գոռո՛գ, կաղնի հաստարուն,
Հինգ հարիւր տարուան դեռ մէկ ժամ ալ կայ,
Զիս ու քեզ հիմա լաւ մը նանչցա՞ր դուն.
Ինկեր ես արդէն. պարծենկո՞տ հըսկայ...

— Հինգ հարիւր տարի ապրեր եմ կանգնած,
Այդքան ալ կ'ապրիմ աշսպէս կէս պառկած,
Մի՛նչեւ լրանայ մէկ հազար տարին, —
Պատասխան տուաւ ինկած վիթխարին:

ԲԱՁԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հեղ մ'ալ. — Անգամ մըն ալ:

Անգօր. — Ուժէ, գօրութենէ ինկած, տկար:

Ժիր. — Ուժով, գօրաւոր, աշխոյժ:

Վատուժ. — Ուժաթափ, տկար:

Հեւասպառ. — Հեւքք, շունչը հատած, շնչասպառ:

Գոռոգ. — Հպարտ, խրոխտ, ամբարտաւան:

Վիթխարի. — Մէծ, հսկայ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Ինչի՞ մասին վէճ ունեցան արծիւն ու կաղնին: — Ի՞նչ պայման դրին: — Դարեր ետք ի՞նչ վիճակի մէջ էր արծիւը, կաղնի՞ն: — Ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ երկուքին միջեւ: — Ո՞վ աւելի երկար կ'ապրի, արծիւը թէ կաղնին: — Երկար ապրող կենդանիի անուն գիտե՞ք:

28. Գ Ե Ր Ա Ն Ո Ի Ն

1

Հայերէնի ուսուցիչը, օր մը, հետեւեալ պարբերութիւնը գրեց սեւ գրատախտակին վրայ .

«Պօղոս բարի եւ աշխատասէր տղայ մըն էր . դաստիարակը միշտ կը դովէր Պօղոսը եւ յաճախ Պօղոսին կը յայտնէր իր գոհունակութիւնը : Պօղոսին ընկերները Պօղոսին յաջողութեանը համար ուրախ էին եւ կը յարգէին Պօղոսը» :

Գրեց վերջացուց, ապա աշակերտներուն դառնալով հարցուց .

— Ո՞ր բառն է, որ կրկնուած է այս հինգ նախադասութիւններուն մէջ :

— Պօղոս բարի, — պատասխանեց Ջաւէն :

— Քանի՞ անգամ, — կրկին հարցուց ուսուցիչը :

— Վեց անգամ :

— Ներկի՞ է մէկ պարբերութեան մէջ վեց անգամ կրկնել նոյն բառը :

— Ո՛չ, պարտն, ներկի չէ, — ձայն տուին աշակերտները ամէն կողմէ :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ տղեղ կը հնչէ մեր ականջին :

— Եւ իմաստին գանդաղութիւն կու տայ . այնպէս չէ՞, — վրայ բերաւ ուսուցիչը :

— Այո՛, այո՛ :

— Կրնա՞ք Պօղոս անունին տեղ այնպիսի յարմար բառեր գտնել, որ այդ անունին դերը կատարեն, առանց իմաստը փոխելու :

2

Վայրկեան մը սպասելէ ետք՝ ուսուցիչը յարեց .

— Գրեցէք այս պարբերութիւնը, առանց կրկնելու Պօղոս անունը :

Ամէնքն ալ բացին իրենց տետրակները եւ սկսան գրել : Ամենէն առաջ Ջաւէնն էր, որ ներկայացուց իր գրածը : Ուսուցիչը բարձրաձայն կարգաց զայն .

«Պօղոս բարի եւ աշխատասէր տղայ մըն էր . դաստիարակը միշտ կը դովէր զանիկա եւ յաճախ անոր կը յայտնէր իր գոհունակութիւնը : Անոր ընկերները իր յաջողութեանը համար ուրախ էին եւ կը յարգէին զինքը» :

— Շատ ճիշդ գրած է Ջաւէն, — հաստատեց ուսուցիչը : — Հիմա ըսէք տեսնեմ, ի՞նչ կը կոչուին զանիկա, անոր, իր, զինքը բառերը, որոնք Պօղոս անունին տեղը գրուած են, զայն չկրկնելու համար :

— Անունին դերը կատարող բառեր են, — պատասխանեց Շաւարշ :

— Ճիշդ է, բայց ի՞նչ կ'ըսեն անունին դերը կատարող բառերուն :

— Անուանողեր, — պոռայ չարածճի Ժիրայրը :

— Դերանուն, պարո՛ն, դերանուն, — ճշդեց Ջաւէն :

— Ուրեմն ի՞նչ բանի կը ծառայէ դերանունը :

— Անունի մը տեղը կը գրուի, զայն չկրկնելու համար :

— Եւ իմաստին գանդաղութիւն չտալու համար, — լրացուց ուսուցիչը :

Երբ դասը վերջացաւ, աշակերտները ամէնքն ալ արդէն գիտէին, թէ ի՞նչ է դերանունը : Միայն չարածճի Ժիրայրն էր, որ աղէկ մը չէր հասկցած դեռ :

ԱՌԱՄ.— Ծառ բող ըլլայ,
Ծուռ բող չըլլայ:

ԲԱՌԻՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարբերութիւն.— *Խօսք, նախադասութիւն:*

Յարել.— *Ըսել, աւելցնել:*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Հայերէնի ուսուցիչը ի՞նչ գրեց օր մը: — Ո՞ր բառերը պէտք էր փոխել այդ պարբերութեան մէջ. ինչո՞ւ: — Դուք ալ կրնա՞ք նման նախադասութիւն մը գրել եւ կրկնուած բառերուն տեղ դերանուններ դնել: — Աշակերտները հասկցա՞ծ էին ուսուցչին բացատրութիւնները: — Միայն ո՞վ չէր հասկցած դեռ: — Դուք ալ հասկցա՞ք հիմա, թէ ի՞նչ է դերանունը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Դերանունը բառ մըն է, որ անունի մը տեղը կը դրուի. օրինակ՝ *ես* աշխատասէր եմ, *ան* ծոյլ է: Ես եւ ան դերանուն են: Դերանունները հինգ տեսակ են, անձնական, ցուցական, ստացական, յարաբերական, անորոշ:



29. Հ Ա Ի Ա Տ Ա Ր Ի Մ Պ Ա Հ Ա Պ Ա Ն Ը

1

Ես յաճախ այցի կ'երթայի իմ որսորդ ընկերոջս՝ Սարգիսին: Անգամ մը, ձմրան արեւոտ ու հաճելի առաւօտ մը, մտայ անոր ընկած տան ընդարձակ բակէն ներս:

Բակին մէջ մանուկները ձիւնազնդակ կը խաղային: Սարգիսին շունը՝ Զուլբարսը, պատշգամին վրայ պառկած, կը դիտէր տղոց խաղը:

Այդ պահուն տունէն դուրս եկաւ Սարգիսին հինգ տարեկան տղան՝ Արայիկը եւ վաղեց բակ, խաղին մասնակցելու համար: Պահ մը ետք ինքն ալ սկսաւ ձիւնազնդակ նետել իր ընկերներուն:

Շունը լարուած ու շագրութեամբ կը հետեւէր անոր շարժումներուն: Բայց երբ «հակառակորդ»ները սկսան հարուածին հարուածով պատասխանել, վեր թռաւ տե-

ղէն, պատշտամէն ցատկեց բակը, կեցաւ իր տիրոջ
զաւակին առջև եւ սպաննադին հաջեց:

— Հիմա փորձեցէք ձիւնագնդակ նետել իմ փոք-
րիկ տիրոջս, — կարծես ըսել կ'ուզէր հաւատարիմ պա-
հապանը:

Արայիկը, շան պաշտպանութենէն խրախուսուած,
սկսաւ «ղնդակոծել» իր հակառակորդները, որոնք
նոյն ձեւով փոխադարձեցին:

Այն ատեն շունը առաջ անցաւ եւ այնպէս ուժղին
յարձակում մը դործեց, որ տղաքը լեղապատառ փա-
խան, ձիւնագունդերուն կոյտը հոն ձգած:

2

Տունէն դուրս եկաւ որսորդ ընկերս՝ Սարգիսը եւ,
տեսնելով շան արարքը, չկրցաւ իր խնդուքը զսպել:

— Գիտե՞ս ինչ հաւատարիմ պահապան է. անգամ
մը փորձէ կատակի համար Արայիկին դաչիլ...

Ես մատոյ սպաննացի տղուն:

Ձուլբարսը, որ մինչ այդ բարեկամարար պոչը կը
չարժէր առջևս, — մենք շատ անգամ միասին որսի դա-
ցած էինք, — յանկարծ բոլորովին փոխուեցաւ, աչքե-
րուն մէջ դայրոյթ Երևաց եւ, իմ ու Արայիկին մէջ-
տեղ նստելով, սկսաւ սպաննադին հաջել:

Շունը հաւատարիմ պահապանի իր դերը կը կա-
տարէր:

ԱՌԱՄ.— Շունը շունին նայելով կը հաջէ:

ԲԱՒԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խրախուսուած. — Քաջակերուած, սրտայնդուած:

Փոխադարձիկ. — Փոխարէնը դարձնել (այստեղ կը նշանակէ
ձիւնագնդակին ձիւնագնդակով պատասխանել):

Արարք. — Գործ, ընթացք:

Զայրոյր. — Սաստիկ բարկութիւն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Որո՞ւ համար ըսուած է «հաւատարիմ պա-
հապան»: — Ուրիշ հաւատարիմ կենդանիներ կա՞ն: — Շունը Ե՞րբ
սկսաւ հաջել. ինչո՞ւ կը հաջէր: — Քամի՞ տեսակ շունի անուն
գիտէք:

30. Կ Ա Պ Ի Կ Ն Ո Ի Ա Կ Ն Ո Ց Ը



Մեր կապիկը ծերացեր էր,
Աչքերն աղէկ չէին տեսներ.
Ի՛նչպէս եղաւ, լաւ չեմ գիտեր,
Մէկն ու մէկը, կարն խելի տէր,
Ըսաւ անոր. «Կապիկ աղբար,
Եկուր աչքիդ ակնոց մը ա՛ն,

Դի՛ր անգամ մը, տես քէ ի՛նչպէս
Ասեղէն մագն իսկ կ'անցընես»:
Կապիկն հաւտաց, ելաւ տեղէն,
Յուպը առաւ, տըքտըքալէն
Հոս — հոն գընաց, ի՛նչպէս ըրաւ,
Ի՛նչպէս չըրաւ, վերջապէս լաւ
Ակնոց մ'առաւ ու եկաւ տուն:
Գալը բարի, բայց տե՛ս որ դուն
Ձի գիտեր, քէ ի՛նչպէս պէտք է
Ակնոցն հիմա ինք գործածէ:


Մէյ մը գլխուն կը դնէ.
Մէյ մը պոչին կ'անցընէ.
Կը հոտուրտայ, կը լգէ,
Վեր կը ցատկէ, կը վազէ,
Կը փորձէ հա՛ կը փորձէ,
Խելփին բան մը չի պառկիր:
«Այդպէս է հա՞. է՛, կեցիր»,
Կ'ըսէ յանկարծ ու քարին
Պինդ կը գարնէ ապակին,
Որ կը կոտորի, կը փշրի,
Կ'ըլլայ աւագ ու փոշի:

Բայց տեսէ՛ք, քէ իր խելքէն վեր
Ի՛նչ վընիռ ալ կու տայ դեռ.
«Աշխարհիս մէջ ո՛վ որ գիտուն
Կ'ըսէ քէ կայ, մո՛ւրս գլխուն»:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պինդ. — Ուժով, ամուր:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Կարն խելփի տէր մէկը ի՞նչ խրատ տուաւ
կապիկին: — Միայն ծերե՞րը ակնոց կը դնեն: — Կենդանիները
ակնոց կը գործածե՞ն: — Հապա ինչո՞ւ կապիկը ակնոց առաւ: —
Վերջը ի՞նչ եղաւ: — Ի՞նչ ըսել է «մուրս գլխուն»:



31. Ա Ռ Ի Ի Ծ Ի Ն Ե Ր Ա Ջ Ը

1

Առիւծին կորիւնը փակուած էր վանդակին մէջ.
տխո՛ւր — տխո՛ւր կը նայէր երկաթէ ամուր ձողերուն
ետեւէն եւ կարօտով կը յիշէր անապատը, ուր ծնած
ու մեծցած էր:

Կը յիշէր, թէ ի՛նչպէս զիշերները, աստղերու լոյ-
սով, մօրը հետ կը հալածէր արագավազ եղնիկները,
կամ թէ ի՛նչպէս կը խաղար քոյրերուն եւ եղբայրնե-
րուն հետ, արմաւենիներու շուքին տակ:

Անցա՛ն այդ բոլորը: Հիմա, գառազեղին մէջ բան-
տարկուած, տխո՛ւր-տխո՛ւր կը նայէր հաստ ձողերուն
ետեւէն ու սրտին ցաւէն կը մռնչէր:

Գիշեր էր, մութ ու խաղաղ գիշեր:

2

Գիշերուան այս խաղաղ լուսթեան մէջ, յանկարծ
բացուեցաւ դառազեղին դուռը ու ներս մտաւ բանտար-

կուած կորիւնին մայրը: Ներս մտաւ հպարտ-հպարտ,
կրակոտ աչքերը պտըտցուց շորս կողմը ու տեսաւ...

Իր դաւակը տեսաւ:

Աչքերը փայլատակեցին, մոնչեց, յարձակեցաւ եւ
մէկ զարկով խորտակեց վանդակին հաստ ձողերը:

Կորիւնը ուրախ ճիչ մը արձակեց, վեր թռաւ տե-
ղէն եւ նետուեցաւ մօրը գիրկը, ուրախ՝ զայն վերստին
տեսնելուն համար. բայց դպաւ երկաթէ ձողերուն ու
արթնցաւ...

Երազ էր տեսածը:

Ու երկա՛ր-երկա՛ր սկսաւ մոնչել գիշերուան խա-
ղաղ լուսթեան մէջ:

ԱՌԱԾ. — Գայլէն վախցողը ոչխար չի պահեր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կորիւն. — Առի՛ծի ձագ:

Գառագեղ. — Վայրի գաղաններու յատուկ վանդակ, բանտ:

Խորտակել. — Կտորել, բռնողել, փշրել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Բամտարկուած կորիւնը ինչե՛ր կը յիշէր: —
Յանկարծ ի՞նչ պատահեցաւ: — Ո՞վ մտաւ գառագեղէն ներս: —
Իրականութի՞ւն էր կորիւնին տեսածը: — Ո՞րն է գազաններուն
մէջ ամենէն վայրագը, ամենէն ուժե՞ղը, ամենէն հսկա՞ն: — Կե՞ն-
դամբանական պարտէզ գացա՞ծ է՞ք. կրնա՞ք նկարագրել ձեր տե-
սածները:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Անձնական դերանունները
անձի մը անունին տեղը կը դրուին եւ հետեւեալներն
են. *ես, դուն, ինք, ան կամ անիկա, մենք, դուք, ի-
րենք, անոնք*: Անձնական են նաեւ *զիրար, մէկզմէկ,
ինքզինք* դերանունները:

Չեր այսօրուան դասին մէջ անձնական դերանուն-
ներ կա՞ն. որո՞նք են:

32. Մ Ե Մ Ա Ր Զ Ը

1

Շատ ու շատ տարիներ առաջ, մեծ երաշտ կը տի-
րէր երկրի վրայ:

Յամբեցան բոլոր գետերը, աղբիւրները եւ ջրհոր-
ները: Չորցան ծառերը, թուփերը եւ խոտերը: Մարա-
ւէն մեռան մարդիկ եւ անասուններ:

Անգամ մը, գիշերով, փոքրիկ աղջիկ մը տունէն
դուրս եկաւ հիւանդ մօրը համար ջուր փնտռելու:
Միասին առած էր փայտէ խոշոր շերեփ մը: Շատ պը-
տըտեցաւ, բայց ջուր չգտաւ. ուժասպառ ինկաւ դե-
տին ու քնացաւ:

Երբ արթնցաւ ու ձեռքը երկարեց շերեփին, քիչ
մնաց մէջը եղածը թափէր: Շերեփը լեցուն էր թարմ
ու վճիտ ջուրով: Աղջիկը շատ ուրախացաւ, ուղեց խը-
մել ումպ մը, բայց մտածեց, որ քիչ բան միայն պիտի
մնար մօրը. ուստի վաղեց դէպի տուն:

Այնքան կ'աճապարէր, որ չնկատեց շնիկը իր ոտ-
քերուն առջեւ: Աղջիկը դետին փռուեցաւ. կարծես թէ
ջուրը թափած էր: Բայց ո՛չ, շերեփը այնպէս էր ին-
կած, որ ջուրէն կաթիլ մը անգամ թափած չէր:

Աղջիկը ափով քիչ մը ջուր տուաւ շնիկին, որ խմեց
զայն ու զուարթացաւ: Երբ նորէն շերեփը ձեռք առաւ,
տեսաւ որ փայտը արծաթի փոխուած էր:

2

Տարաւ ջուրը տուն եւ մօրը հրամցուց: Մայրը ը-
սաւ.

— Միեւնոյնն է, շուտով պիտի մեռնիմ ես. աւելի լաւ է դուն խմես :

Եւ աղջկան վերադարձուց ջուրով լեցուն շերտեր, որ նոյն վայրկեանին ոսկիի փոխուեցաւ :

Աղջիկը այլեւս չկրցաւ համբերել եւ շրթներուն մօտեցուց պաղ ու վճիտ ջուրը : Նոյն պահուն ներս մրտաւ ծարաւէն կիսամեռ ճամբորդ մը եւ լալով կաթիլ մը ջուր խնդրեց : Աղջիկը թուքը կուլ տուաւ եւ շերտեր երկարեց ճամբորդին :

Ու յանկարծ շերտերն վրայ յայտնուեցան եօթը խոշոր աղամանղներ, ու հոն՝ տեղւոյն վրայ բխեցաւ թարմ ու զուլալ ջուրի աղբիւր մը :

Այն ատեն եօթը աղամանղները բարձրացան մինչեւ երկինք, փական երկնակամարին եւ կազմեցին Մեծ Արջը :

ԱՌԱՄ.— Ոսկին ցեխին մէջ նետես, իր փայլը չի կորսնցնիր :

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երաշտ.— Չորսթիւն (անձրեւի պակասէ). կ'ըստի նաեւ երաշտութիւն :

Շերտի.— Մեծ դգալ :

Վնիտ.— Մաքուր, յստակ :

Ջուլալ.— Ծստակ, պայծառ, վճիտ :

Մեծ Արջ.— Աստղերու խումբի մը, համաստեղութեան մը անունը. կազմուած է եօթը աստղերէ : Կայ նաեւ Փոքր Արջ համաստեղութիւնը, նոյնպէս եօթը աստղերէ կազմուած : Փոքր Արջին ճայրը՝ ամենէն փայլուն աստղը կը կոչուի բեւեռային աստղ :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ է երաշտութիւնը. շերտաւ տարիքն : — Ի՞նչ կ'ընեն մարդիկ երաշտի ատեն : — Աղբիւր ի՞նչ փնտռելու :

Եթէ աւելի կը հետաքրքրուիք շուներու պատմութիւններով, խնդրեցէք ձեր ուսուցիչէն, որպէսզի ձեզի ներկայացնէ զանազան դրուագներ «Ոստիկան» շուներու կեանքէն :

ԱՌԱՄ.— Խաժան շունը ակուայ չի ցուցնիր :

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հանդուրժել.— Թոյլատրել, ներել :

Կաղկանձել.— Շուներու ոռնալը :

Դրուագ.— Դէպք, մանրավէպ :

Վերահատուքիւն.— Վէրքը կտրել :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ գիտէ՞ Պլուտոնի մասին : — Ի՞նչ՞ փտանգ մըն էր ան եկող — գացող հիւրերուն համար : — Կրճա՞ք պատմել, ի՞նչ ըրաւ վիրաբոյժին շունը : — Ի՞նչ կ'ըսէ անձանօր այցելուին եւ տան շունին պատմութեան : — Հապա նուագող շան պարագան : — Որեւէ բան լսած է՞ «Ոստիկան» շուներու մասին :

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բացարձակ կը կոչուին այն բուական անասունները, որոնք գոյականի մը քանի հատ ըլլալը կը ցուցնեն. օրինակ՝ չորս նարինջ, տասը աքոռ : Չորս եւ տասը բացարձակ բուական անասուն են : Դասական կը կոչուին այն բուական անասունները, որոնք գոյականի մը քանիքորոք ըլլալը ցոյց կու տան. օրինակ՝ չորրորդ կարգ, վեցերորդ դասարան : Բաշխական կը կոչուին այն բուական անասունները, որոնք իրենց քովի գոյականին քանիական ըլլալը կը յայտնեն. օրինակ՝ հինգական տեսարակ, տասնական հոգի :

26. Ո Ջ Ն Ի Ն Ե Ի Օ Ջ Ը

1

Ամրան տաք օր մըն էր. արեւուն կիզիչ ճառագայթները այրեր, մրկեր էին արտ ու արօտ:

Ամէն կողմ լուռ, ամէն ինչ անշարժ էր: Գիւղին առջևէն հոսող վտակին շշուէն անդամ դադրեր էր. կարծես ան ալ թմրեր, պապանձեր էր:

Օրուան այս տաքին, գիւղին մանուկները հաւաքուեր էին ձորին զլուխը եւ կը նայէին վար:


Վարը, ձորին մէջ, կը կռուէին ոգնին ու օձը:

Կռիւը կատաղի էր: Օձը, կը սուլէր, կը դառնար

փշոտ ողնիին շուրջ, բայց չէր կրնար բռնել զայն: Ոգնին փոքրիկ զլուխը դուրս կը հանէր երբեմն, կը խածնէր օձին մէջքը կամ վիզը եւ նորէն կը կծկուէր:

Վերջին անգամ իր սուր փուչերուն մէջէն դուրս հանեց զլուխը,

ամուր մը բռնեց օձին պոչէն եւ ինք իր վրայ կծկուեցաւ դարձեալ:



2

Ինչ որ ըրաւ օձը, չկրցաւ ինքզինք ազատել. ցաւէն կը Փշար, երբեմն զլուխը կը մօտեցնէր պոչին, երբեմն ալ մարմինը այս ու այն կողմ կը զարնէր: Ոգնիին փուչերը սուր էին, անխնայ կը քրքրէին օձին իրանն ու զլուխը:

Հետզհետէ օձը սկսաւ թուլնալ. մարմնին վրայ բաղմաթիւ վերքեր բացուեր էին. ա՛լ չէր սուլեր, ա՛լ չէր Փշար, միայն կը ցնցուէր ամբողջ մարմնով:

Ոգնին կծկուեր էր՝ օձին պոչը ամուր բռնած: Բաւական ժամանակ անցաւ այսպէս, մինչեւ որ օձը անշարժացաւ մնաց: Սատկած էր:

Ոգնին ի վերջոյ թողուց օձին պոչը, քանի մը անգամ զգուշութեամբ դուրս հանեց զլուխը, նայեցաւ օձին, յետոյ զնայ մտաւ թուփերուն տակ:

ԱՌԱՄ.— Պաղած օձը նախ զինք տախցնողը կը խայթէ:

ԲԱԽԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արօտ.— Արածելու խոտ եւ դաշտ:

Վտակ.— Առու, փոքր գետ:


Շշուէջ.— Մեղմ ու թեթեւ ձայն:

Պապանձիլ.— Լուռ մնալ, լեզուն կապուիլ:

Թուփ.— Փոքր ծառ:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Օր մը ի՞նչ պատահեցաւ ձորին մէջ. ո՞վ որու դէմ կը կռուէր: — Կրնա՞ք նկարագրել կռիւը: — Վերջապէս ո՞վ յաղթուեցաւ. ինչո՞ւ: — Ոգնին ի՞նչ բանի կը պարտէր իր յաղթանակը: — Տեսա՞՞ք էք ուրիշ կենդանիներու կռիւը. շարադրութիւն մը գրեցէ՛ք ձեր տեսած կռիւի մասին:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Անորոշ կը կոչուին այն անձականները, որոնք տարտամ եւ անորոշ իմս ստ մը կու տան գոյականին. օրինակ՝ ամէն մարդ, քանի մը հոգի: Ամէն եւ քանի մը անորոշ անձական են: Անորոշ են նաեւ հետեւեալ անձականները. բոլոր, մէկ քանի, ամէն մէկ, իւրաքանչիւր, նոյն, միեւնոյն, ուրիշ, միւս, ոչ մէկ, որեւէ, այսքան, այդքան, այնքան, որքան, քանի քանի եւ այլն:



27. ԱՐԾԻՒՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Անգամ մը արծիւն ու խոշոր կաղնին
Անտառի մը մէջ մեծ վէն ունէին,
Թէ ո՛րն իրենցմէ շատ տարի կ'ապրի,
Ո՛րն է դիմացկուն, հրգօր աւելի:

Արծիւն ըսաւ՝ ես, կաղնին ալ յէ՛ ես.
Երկուքն ալ յամառ ու հըպարտ, աշսպէս
Մեծ — մեծ պարծեցան, երկար վիճեցան.
Եւ վերջ ի վերջոյ դըրին սա պայման.

Ըսին՝ բող անցնի հինգ հարիւր տարի,
Ու երբ աշս օրը հեղ մ'ալ գայ հասնի,
Այդ օրը դարձեալ զանք գիրար գտնենք
Եւ մէկգմէկու քէփ հարցնենք մենք:

Դարերը անցան: Եւ ահա մէկ օր
Արծիւը եկաւ, ծերացա՛ծ, անգօ՛ր,
Ժիր ճայնը մարած, վատուծ, հեւասպառ,
Հագիւ շարժելով թեւերն իր տրկար:

Եկաւ, տեղ հասաւ, նայեցաւ վերէն,
Տեսաւ, որ կաղնին ինկեր է արդէն.
Ինկեր է ահեղ փոթորիկին առաջ,
Թէեւ նիւղերն իր՝ դեռ թարմ ու կանաչ:

— Հէ՛յ, պոռաց, գոռո՛գ, կաղնի հաստաբուն,
Հինգ հարիւր տարուան դեռ մէկ ժամ ալ կայ,
Զիս ու քեզ հիմա լաւ մը նանչցա՞ր դուն.
Ինկեր ես արդէն. պարծենկո՞տ հըսկայ...

— Հինգ հարիւր տարի: ապրեր եմ կանգնած,
Այդքան ալ կ'ապրիմ աշսպէս կէս պառկած,
Մինչեւ լրանայ մէկ հազար տարին, —
Պատասխան տուաւ ինկած վիթխարին:

ԲԱՆԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հեղ մ'ալ:— Անգամ մըն ալ:

Անգօր:— Ուժէ, գօրութեկէ ինկած, տկար:

Ժիր:— Ուժով, գօրաւոր, աշխոյժ:

Վատուծ:— Ուժաթափ, տկար:

Հեւասպառ:— Հեւքք, շունչը հասած, շնչասպառ:

Գոռոգ:— Հպարտ, խրոխտ, ամբարտաւան:

Վիթխարի:— Մէծ, հսկայ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչի՞ մասին վէն ունեցան արծիւն ու կաղնին: — Ի՞նչ պայման դրին: — Դարեր ետք ի՞նչ վիճակի մէջ էր արծիւը. կաղնի՞ն: — Ի՞նչ խօսակցութիւն տեղի ունեցաւ երկուքին միջեւ: — Ո՞վ աւելի երկար կ'ապրի. արծի՞ւը թէ կաղնին: — Երկար ապրող կենդանիի անու՞ն գիտէ՞ք:

28. Գ Ե Ր Ա Ն Ո Ի Ն

1

Հայերէնի ուսուցիչը, օր մը, հետեւեալ պարբերութիւնը գրեց սեւ գրատախտակին վրայ.

«Պօղոս բարի եւ աշխատասէր տղայ մըն էր. դաստիարակը միշտ կը գովէր Պօղոսը եւ յաճախ Պօղոսին կը յայտնէր իր գոհունակութիւնը: Պօղոսին ընկերները Պօղոսին յաջողութեանը համար ուրախ էին եւ կը յարգէին Պօղոսը»:

Գրեց վերջացուց, սպա աշակերտներուն դառնալով հարցուց.

— Ո՞ր բառն է, որ կրկնուած է այս հինգ նախադասութիւններուն մէջ:

— Պօղոս բարի, — պատասխանեց Ջաւէն:

— Բանի՞ անդամ, — կրկին հարցուց ուսուցիչը:

— Վեց անգամ:

— Ներելի՞ է մէկ պարբերութեան մէջ վեց անգամ կրկնել նոյն բառը:

— Ո՛չ, պարտն, ներելի չէ, — ձայն տուին աշակերտները ամէն կողմէ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ տղեկ կը հնչէ մեր ահանջին:

— Եւ իմաստին գանդաղութիւն կու տայ. այնպէս չէ՞, — վրայ բերաւ ուսուցիչը:

— Այո՛, այո՛:

— Կրնա՞ք Պօղոս անունին տեղ այնպիսի յարմար բառեր գտնել, որ այդ անունին դերը կատարեն, առանց իմաստը փոխելու:

2

Վայրկեան մը սպասելէ ետք՝ ուսուցիչը յարեց.

— Գրեցէք այս պարբերութիւնը, առանց կրկնելու Պօղոս անունը:

Ամէնքն ալ բացին իրենց տետրակները եւ սկսան գրել: Ամենէն առաջ Ջաւէնն էր, որ ներկայացուց իր գրածը: Ուսուցիչը բարձրաձայն կարդաց զայն.

«Պօղոս բարի եւ աշխատասէր տղայ մըն էր. դաստիարակը միշտ կը գովէր զանիկա եւ յաճախ անոր կը յայտնէր իր գոհունակութիւնը: Անոր ընկերները իր յաջողութեանը համար ուրախ էին եւ կը յարգէին զինքը»:

— Շատ ճիշդ գրած է Ջաւէն, — հաստատեց ուսուցիչը: — Հիմա ըսէք տեսնեմ, ի՞նչ կը կոչուին զանիկա, անոր, իր, զինքը բառերը, որոնք Պօղոս անունին տեղը գրուած են, զայն չկրկնելու համար:

— Անունին դերը կատարող բառեր են, — պատասխանեց Շաւարշ:

— Ճիշդ է, բայց ի՞նչ կ'ըսեն անունին դերը կատարող բառերուն:

— Անուանադեր, — պոռայ չարածճի Ժիրայրը:

— Դերանուն, պարո՛ն, դերանուն, — ճշդեց Ջաւէն:

— Ուրեմն ի՞նչ բանի կը ծառայէ դերանունը:

— Անունի մը տեղը կը գրուի, զայն չկրկնելու համար:

— Եւ իմաստին գանդաղութիւն չտալու համար, — լրացուց ուսուցիչը:

Երբ դասը վերջացաւ, աշակերտները ամէնքն ալ արդէն գիտէին, թէ ի՛նչ է դերանունը: Միայն չարածճի Ժիրայրն էր, որ աղէկ մը չէր հասկցած դեռ:

ԱՌԱՄ.— Ծառ բող ըլլայ,
Ծուռ բող չըլլայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարբերութիւն.— *Սօսք, նախադասութիւն:*

Յարել.— *Ըսել, աւելցնել:*

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Հայերէնի ուսուցիչը ի՞նչ գրեց օր մը: —
Ո՞ր բառերը պէտք էր փոխել այդ պարբերութեան մէջ. ինչո՞ւ:
— Դուք ալ կրճա՞ք նման նախադասութիւն մը գրել եւ կրկնուած
բառերուն տեղ դերանուններ դնել: — Աշակերտները հասկցա՞ծ
էին ուսուցչին բացատրութիւնները: — Միայն ո՞վ չէր հասկցած
դեռ: — Դուք ալ հասկցա՞ք հիմա, քէ ի՞նչ է դերանունը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Դերանունը բառ մըն է, որ
անունի մը տեղը կը դրուի. օրինակ՝ *Էս* աշխատասէր
եմ, *ան* ծոյլ է: Սա եւ ան դերանուն են: Դերանունները
հինգ տեսակ են, անձնական, ցուցական, ստացական,
յարաբերական, անորոշ:



29. Հ Ա Ի Ա Տ Ա Ր Ի Մ Պ Ա Հ Ա Պ Ա Ն Ը

1

*Ես յաճախ այցի կ'երթայի իմ որսորդ ընկերոջս՝
Սարգիսին: Անգամ մը, ձմրան արեւոտ ու հաճելի ա-
ռաւօտ մը, մտայ անոր բնակած տան ընդարձակ բակէն
ներս:*

*Բակին մէջ մանուկները ձիւնադնդակ կը խաղա-
յին: Սարգիսին շունը՝ Զուլբարսը, պատշգամին վրայ
պառկած, կը դիտէր տղոց խաղը:*

*Այդ պահուն տունէն դուրս եկաւ Սարգիսին հինգ
տարեկան տղան՝ Արայիկը եւ վաղեց բակ, խաղին
մասնակցելու համար: Պահ մը ետք ինքն ալ սկսաւ
ձիւնադնդակ նետել իր ընկերներուն:*

*Շունը լարուած ուշադրութեամբ կը հետեւէր անոր
չարժումներուն: Բայց երբ «հակառակորդ»ները սկսան
հարուածին հարուածով պատասխանել, վեր թռաւ տե-*

դէն, պատշգամէն ցատկեց բակը, կեցաւ իր տիրոջ
դուռին առջև եւ սպառնազին հաջեց:

— Հիմա փորձեցէք ձիւնագնդակ նետել իմ փոք-
րիկ տիրոջս, — կարծես ըսել կ'ուզէր հաւատարիմ պա-
հապանը:

Արայիկը, շան պաշտպանութենէն խրախուսուած,
սկսաւ «դնդակոծել» իր հակառակորդները, որոնք
նոյն ձևով փոխադարձեցին:

Այն ատեն շունը առաջ անցաւ եւ այնպէս ուժղին
յարձակում մը գործեց, որ տղաքը լեղապատառ փա-
խան, ձիւնագունդերուն կոյտը հոն ձգած:

2

Տունէն դուրս եկաւ որսորդ ընկերս՝ Սարգիսը եւ,
տեսնելով շան արարքը, չկրցաւ իր խնդուքը զսպել:

— Գիտե՞ս ինչ հաւատարիմ պահապան է. անգամ
մը փորձէ կատակի համար Արայիկին դաչել...

Ես մատով սպառնացի տղուն:

Ջուլբարսը, որ մինչ այդ բարեկամարար պոչը կը
չարժէր առջևս, — մենք շատ անգամ մխասին որսի դա-
ցած էինք, — յանկարծ բոլորովին փոխուեցաւ, աչքե-
րուն մէջ զայրոյթ երևաց եւ, իմ ու Արայիկին մէջ-
տեղ նստելով, սկսաւ սպառնազին հաջել:

Շունը հաւատարիմ պահապանի իր գերը կը կա-
տարէր:

ԱՌԱԾ.— Շունը շունին նայելով կը հաջէ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Խրախուսուած.— Քաջակրուած, սրտայնդուած:

Փոխադարձել.— Փոխարկներ դարձնել (այստեղ կը նշանակէ
ձիւնագնդակին ձիւնագնդակով պատասխանել):

Արարբ.— Գործ, ընթացք:

Ջայրոյր.— Սաստիկ բարկութիւն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Որո՞ւ համար ըսուած է «հաւատարիմ պա-
հապան»: — Ուրիշ հաւատարիմ կենդանիներ կա՞ն: — Շունը ե՞րբ
սկսաւ հաջել. ինչո՞ւ կը հաջէր: — Քամի՞ տեսակ շունի ամուս
գիտէք:

30. Կ Ա Պ Ի Կ Ն Ո Ի Ա Կ Ն Ո Ց Ը



Մեր կապիկը ծերացեր էր,
Աչքերն աղէկ չէին տեսներ.
Ի՛նչպէս եղաւ, լաւ չեմ գիտեր,
Մէկն ու մէկը, կարն խելքի տէր,
Ըսաւ անոր. «Կապի՛կ աղբար,
Եկուր աչքիդ ակնոց մը ա՛ն,

Դի՛ր անգամ մը, տես թէ ի՛նչպէս
Ասեղէն մագն իսկ կ'անցընես»:
Կապիկն հաւտաց, ելաւ տեղէն,
Յուար առաւ, տըփտըփալէն
Հոս — հոն գընաց, ի՛նչպէս ըրաւ,
Ի՛նչպէս չըրաւ, վերջապէս լաւ
Ակնոց մ'առաւ ու եկաւ տուն:
Գալը բարի, բայց տե՛ս որ դուն
Զի գիտեր, թէ ի՛նչպէս պէտք է
Ակնոցն հիմա ինք գործածէ:

Մէյ մը գլխուն կը դնէ.

Մէյ մը պոչին կ'անցընէ.

Կը հոտուրտայ, կը լզէ,

Վեր կը ցատկէ, կը վագէ,

Կը փորձէ հա՛ կը փորձէ,

Խելփին բան մը չի պառկիր:

«Այդպէս է հա՞. է՛, կեցիր»,

Կ'ըսէ յանկարծ ու քարին

Պինդ կը զարնէ ապակին,

Որ կը կոտրի, կը փշրի,

Կ'ըլլայ աւագ ու փոշի:

Բայց տեսէք, թէ իր խելքէն վեր

Ի՛նչ վընիռ ալ կու տայ դեռ.


«Աշխարհիս մէջ ո՛վ որ գիտուն

Կ'ըսէ թէ կայ, մո՛ւրս գլխուն»:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պինդ. — Ուժով, ամուր:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Կարն խելի տեր մէկը ի՞նչ խրատ տուաւ
կապիկին: — Միայն ձերե՞րը ակնոց կը դնեն: — Կենդանիները
ակնոց կը գործածե՞ն: — Հապա ինչո՞ւ կապիկը ակնոց առաւ: —
Վերջը ի՞նչ եղաւ: — Ի՞նչ ըսել է «մուրս գլխուն»:



31. Ա Ռ Ի Ի Ծ Ի Ն Ե Ր Ա Ջ Ը

1

Առիւծին կորիւնը փակուած էր վանդակին մէջ.
տխո՛ւր — տխո՛ւր կը նայէր երկաթէ ամուր ձողերուն
հտեւէն եւ կարօտով կը յիշէր անապատը, ուր ծնած
ու մեծցած էր:

Կը յիշէր, թէ ի՛նչպէս զիշերները, աստղերու լոյ-
սով, մօրը հետ կը հայածէր արագավաղ եղնիկները,
կամ թէ ի՛նչպէս կը խաղար քոյրերուն եւ եղբայրնե-
րուն հետ, արմաւենիներու շուքին տակ:

Անցա՛ն այդ բոլորը: Հիմա, գառազեղին մէջ բան-
տարկուած, տխո՛ւր-տխո՛ւր կը նայէր հաստ ձողերուն
հտեւէն ու սրտին ցաւէն կը մոնչէր:

Գիշեր էր, մութ ու խաղաղ գիշեր:

2

Գիշերուան այս խաղաղ լռութեան մէջ, յանկարծ
բացուեցաւ գառազեղին դուռը ու ներս մտաւ բանտար-

կուած կորիւնին մայրը: Ներս մտաւ հպարտ-հպարտ,
կրակոտ աչքերը պտըտցուց շորս կողմը ու տեսաւ...

Իր դաւակը տեսաւ:

Աչքերը փայլատակեցին, մոնչեց, յարձակեցաւ եւ
մէկ զարկով խորտակեց վանդակին հաստ ձողերը:

Կորիւնը ուրախ ճիչ մը արձակեց, վեր թռաւ տե-
ղէն եւ նետուեցաւ մօրը գիրկը, ուրախ՝ զայն վերստին
տեսնելուն համար. բայց դպաւ երկաթէ ձողերուն ու
արթնցաւ...

Նրազ էր տեսածը:

Ու երկա՛ր-երկա՛ր սկսաւ մոնչել գիշերուան խա-
ղաղ լուսթեան մէջ:

ԱՌԱՄ. — Գայլէն վախցողը ոչխար չի պահեր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կորիւն. — Առիւծի ձագ:

Գատագեղ. — Վայրի գազաններու յատուկ վանդակ, բանտ:

Խորտակիլ. — Կտորել, բանդել, փշրել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Բանտարկուած կորիւնը ինչե՞ր կը յիշէր: —
Յանկարծ ի՞նչ պատահեցաւ: — Ո՞վ մտաւ գատագեղէն ներս: —
Իրականութի՞ւն էր կորիւնին տեսածը: — Ո՞րն է գազաններուն
մէջ ամենէն վայրագը, ամենէն ուժե՞ղը, ամենէն հսկա՞ն: — Կե՞ն-
դանարանական պարտէզ գացա՞ծ է՞ք. կրճա՞ք նկարագրել ձեր տե-
սածները:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Անձնական դերանունները
անձի մը անունին տեղը կը դրուին եւ հետեւեալներն
են. *Լս*, *դուն*, *ինք*, *ան* կամ *անիկա*, *մենք*, *դուք*, *ի-*
րենք, *անոնք*: Անձնական են նաեւ *գիրար*, *մէկզմէկ*,
ինքզինք դերանունները:

Ձեր այսօրուան դասին մէջ անձնական դերանուն-
ներ կա՞ն. որո՞նք են:

32. Մ Ե Մ Ա Ր Զ Ը

1

Շատ ու շատ տարիներ առաջ, մեծ երաշտ կը տի-
րէր երկրի վրայ:

Ցամբեցան բոլոր գետերը, աղբիւրները եւ ջրհոր-
ները: Չորցան ծառերը, թուփերը եւ խոտերը: Մարա-
ւէն մեռան մարդիկ եւ անասուններ:

Անգամ մը, գիշերով, փոքրիկ աղջիկ մը տունէն
դուրս եկաւ հիւանդ մօրը համար ջուր փնտռելու:
Միասին առած էր փայտէ խոշոր շերեփ մը: Շատ պը-
տրտեցաւ, բայց ջուր չգտաւ. ուժասպառ ինկաւ դե-
տին ու քնացաւ:

Նրբ արթնցաւ ու ձեռքը երկարեց շերեփին, քիչ
մնաց մէջը եղածը թափէր: Շերեփը լեցուն էր թարմ
ու վճիտ ջուրով: Աղջիկը շատ ուրախացաւ, ուղեց խը-
մել ումպ մը, բայց մտածեց, որ քիչ բան միայն պիտի
մնար մօրը. ուստի վաղեց դէպի տուն:

Այնքան կ'աճապարէր, որ չնկատեց շնիկը իր ոտ-
քերուն առջեւ: Աղջիկը դետին փռուեցաւ. կարծես թէ
ջուրը թափած էր: Բայց ո՛չ, շերեփը այնպէս էր ին-
կած, որ ջուրէն կաթիլ մը անգամ թափած չէր:

Աղջիկը ափով քիչ մը ջուր տուաւ շնիկին, որ խմեց
զայն ու զուարթացաւ: Նրբ նորէն շերեփը ձեռք առաւ,
տեսաւ որ փայտը արծաթի փոխուած էր:

2

Տարաւ ջուրը տուն եւ մօրը հրամցուց: Մայրը Ը-
սաւ.

— Միեւնոյնն է, շուտով պիտի մեռնիմ ես. աւելի լաւ է դուն խմես :

Եւ աղջկան վերադարձուց ջուրով լեցուն շերտեր, որ նոյն վայրկեանին ոսկիի փոխուեցաւ :

Աղջիկը այլեւս չկրցաւ համբերել եւ շրթներուն մօտեցուց պաղ ու վճիտ ջուրը : Նոյն պահուն ներս մտաւ ծարաւէն կիսամեռ ճամբորդ մը եւ լալով կաթիլ մը ջուր խնդրեց : Աղջիկը թուքը կուլ տուաւ եւ շերտեր երկարեց ճամբորդին :

Ու յանկարծ շերտիկն վրայ յայտնուեցան եօթը խոշոր աղամանղներ, ու հոն՝ տեղւոյն վրայ բխեցաւ թարմ ու դուլալ ջուրի աղբիւր մը :

Այն ատեն եօթը աղամանղները բարձրացան մինչեւ երկինք, փական երկնակամարին եւ կազմեցին Մեծ Արջը :

ԱՌԱՄ.— Ոսկին ցեխին մէջ ճետես,
իր փայլը չի կորսնցնիր :

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երաշտ.— Չորտիթիւն (անձրեւի պակաս). կ'ըսուի նաեւ երաշտութիւն :

Շերտիք.— Մեծ դգալ :

Վճիտ.— Մարտի, յտակ :

Ջուլալ.— Յտակ, պայծառ, վճիտ :

Մեծ Արջ.— Աստղերու խումբի մը, համաստեղութեան մը անունը. կազմուած է եօթը աստղերէ, կայ նաեւ Փոքր Արջ համաստեղութիւնը, նոյնպէս եօթը աստղերէ կազմուած : Փոքր Արջին ձայրը՝ ամենէն փայլուն աստղը կը կոչուի բեւեռային աստղ :

ՀԱՐՑՈՒՄԵՆԵՐ.— Ի՞նչ է երաշտաբխը. շերտալ տարիքն : — Ի՞նչ կ'ընեն մարդիկ երաշտի ատեն : — Աղջիկը ի՞նչ փնտռելու



41. Գ Ա Յ Լ Ն Ո Ւ Ի Ր Չ Ա Գ Ե Ր Ը

1

Մայր դայրը ետեւը ձգած էր իր ձաղերը եւ չարունակ կը բարկանար անոնց. կը խածնէր, կը զրդուէր դանոնք :

Ձաղերը նեղացան եւ իրենց սկուաները կճրտելով բսին :

— Դուն մեզ չես սիրեր : Դուն մեզ կը չարչարես : Դուն քար սիրտ ունիս :

Մայրը ձայն չհանեց :

Յանկարծ լուեցաւ շան հաջոց, յետոյ ձիւն խորրխինջ : Հետուէն երեւաց ձիւնոր որսորդ մը :

— Սո՛ւս, — բտաւ մայր դայրը իր ձաղերուն, — ձայն չհանէք. պառկեցէք զետինը եւ դրուխնիդ չբարձրացրնէք խոտերէն վեր :

Ձաղերը խկոյն պառկեցան զետինը, իսկ մայր դայրը սրարչաւ սկսաւ վազել դաշտին մէջէն :

Շունները տեսան դայլին փախուստը եւ ինկան անոր
հտեւէն. որսորդն ալ ձին քշեց շուններուն կողմը:

Չափերը նայեցան իրենց թագստոցէն եւ ըսին իրա-
րու.

— Ահա թէ ի՛նչ տեսակ մայր ունինք. մեզ ձգեց
անտէր ու անտիրական եւ ինք փախաւ՝ վտանգէն ա-
ղատելու համար:

Մութը կոխած էր արդէն, երբ մայր դայլը վերա-
դարձաւ ձագերուն մօտ: Վերաւորուած էր, ուսն ու
վիզը՝ արիւնթաթախ:

— Դէ՛հ, տուն երթանք, — ըսաւ մայրը. — երբ դուք
ալ օր մը ձագեր ունենաք, ինծի պէս ըրէք. շուներն
ու որսորդները ձեր հտեւէն վաղցուցէք, որպէսզի ա-
ղատին ձեր ձագերը: Տեսէ՛ք, ես այսօր այդպէս ըրի:

ԱՌԱՄ. — Լաւ է մարդուն աչքը ելլէ,
քան քէ ամուռը:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իրիթնք. — Ձիու հանած ձայնը. կ'ըսուի նաեւ վրնջիւն:

Սրարշաւ. — Շուտ, արագ (վազել):

Թագստոց. — Պահուելու տեղ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Մայր գայլը ինչո՞ւ կը բարկանար ձագե-
րուն: — Ի՞նչ ըսին ձագերը: — Իրա՞ւ մայր գայլը չէր սիրեր իր
ձագերը. հապա ինչո՞ւ կը խածնէր ու կը գրգռէր գանձմբ: — Յամ-
կարծ ի՞նչ պատահեցաւ: — Ինչո՞ւ մայր գայլը ձգեց իր ձագերը
եւ սկսաւ փախչիլ: — Վերջը ի՞նչ եղաւ: — Կրճա՞ք ըսել, քէ ի՞նչ
էր մայր գայլին նպատակը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Բայը բան մը ընել կամ ըլլալ
կը ցուցնէ. օրինակ՝ գրել, նստիլ, նետել, հիւանդա-
նալ, կարդալ: Բայը ունի քիւ, դէմբ, ժամանակ եւ
եղանակ: Թիւը երկուք է, եզակի եւ յոգնակի. օրինակ՝
կը գրեմ, կը գրեմք:

Բայն ալ դերանունին պէս ունի երեք դէմբ. օրի-
նակ՝ կը խօսիմ (առաջին դէմբ), կը խօսիս (երկրորդ
դէմբ), կը խօսի (երրորդ դէմբ):


42. Հ Ե Ր Ո Ս Շ Ո Ւ Ն Ը

Մարտափելի բան մը պատահեցաւ մեր լաստանա-
ւին վրայ. այծերը մտան ոչխարներու խումբին մէջ եւ,
կոտորները դէմ տուած, մօտեցան մեզի: Հովիւներէն
մէկը վրայ հասաւ, բռնեց այծին եղջիւրներէն եւ ա-
ռաւ տարաւ. բայց միւս այծը վազեց շուններուն կողմը:

Իմ շնիկս՝ Առլէզը սկսաւ կատաղի կերպով հաջել
այծին դէմ: Այծը փորձեց իր սուր կոտորներով հար-
ուածել փոքրիկ բարկացոտը. Առլէզը սաստիկ վախ-
ցաւ, ետ ետ դնաց եւ յանկարծ ինկաւ գետին պղտոր
ջուրերուն մէջ:

— Օգնեցէ՛ք, — պոռացի ես, — Առլէզը ջուրը ին-
կաւ:

Ոչ որ տեղէն շարժեցաւ. ո՞վ սիրտ կ'ընէր նետուիլ կատաղի ջուրերուն մէջ: Իսկ հոսանքը կ'առնէր կը տանէր իմ խեղճ շնիկս: Փոքրիկ ոտքերը վեր — վար շարժելով կը փորձէր լողալ, գլուխը վեր բռնել, բանի մը կատչիլ:



— Ախո՞ս, — կ'ըսէր հայրս, — ո՞վ կրնայ գետը մտնել. դժուար թէ աղտաի խեղճ կենդանին:

Ամէնքս կու լայինք, հովիւներն ալ յուզուած էին. դամփուկերը կը հաջկին, կը փողկին ասղին անդին, կ'ոռնային, կը մօտենային մեզի, կարծես օգնութիւն կը խնդրէին:

Լաստանաւը առաջ կ'երթար, ինկ հոսանքը հետըզհետէ կը հեռացնէր Առլէզը, որ ա'լ չէր կրնար թաթերը շարժել. թուլցած էր, կը խեղզուէր...

Այդ պահուն դամփուկէն մէկը յանկարծ նետուեցաւ ջուրը: Չարմանքէ քարացած էինք ամէնքս ալ. հովիւները սկսան կանչել բարկութեամբ.

— Բարօ՛, ետ դարձիր, Բարօ...

Բարոն մեծ ոտիւններով կը լողար դէպի Առլէզը. կ'երթար անոր օգնութեան: Լաստանաւը արդէն դիմացի ափը հասած էր. ամէնքս ալ սրտատրոփ կը հետեւէինք զամփոխին:

Ի՞նչպէս կը լողար, երբեմն ջուրին տակէն, երբեմն երեսէն. միաժամանակ կը հաջկէր, կարծես սիրտ կու տար Առլէզին, կարծես ըսել կ'ուզէր անոր.

— Քաջ եղիր, ահա՛ եկայ:

Վերջապէս հասաւ շնիկիս եւ վիզէն բռնեց: Գետափը հաւաքուած բազմութիւնը կը պոռար.

— Ապրի՛ս... լողա՛, այդպէս... քիչ մըն ալ, քիչ մըն ալ...

Առլէզը այլևս չէր շարժեր, ջրաթաթախ կախուած էր դամփոխին բերնէն: Մէկ երկու շարժում ալ եւ հովիւին շունը դուրս եկաւ գետէն. Առլէզը դրաւ գետին եւ թօթուեց վրայի ջուրը:

Երբ մենք Առլէզով էինք դրադած, դամփուրը նայեցաւ շորս կողմ, զարմացած դիտեց հոն հաւաքուած մարդիկը եւ լուռ հեռացաւ, երթալ միանալու համար ոչխարներուն:

Հերո՞ս շունը...

ԱՌԱԾ. — Ծատախօս մարդը անխելք կ'ըլլայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կառչիլ.— Բանի մը փաթթուիլ, պլլուիլ:

Գամփռ.— Հովիւի մեծ շուն:

Ջրաքաքախ.— Ջուրով թաթախուած:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ պատահեցաւ լաստամալին վրայ: — Ի՞նչպէս եղաւ, որ ջուրը ինկաւ Առլէզը: — Ո՞վ օգնութեան հասաւ անոր: — Հեղինակը ինչո՞ւ «հերոս շունը» կը կոչէ Բարոն: — Ի՞նչ է հերոսութիւնը. կրնա՞ք բացատրել: — Ուրիշ կենդանիներ կա՞ն, որոնք մոյմպէս հերոսական գործեր կատարելու ընդունակ են: — Քանի՞ տեսակ մալի անուն գիտէք: — Ճամբորդա՞ծ էք մաւով, կրնա՞ք մկարագրել ձեր մամբորդութիւնը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բային ժամանակը երբէք է, ներկայ, անցեալ եւ ապառնի: Ներկան ցոյց կու տայ ժամանակը, ուր գործողութիւնը կը կատարուի. օրինակ՝ կը կարդամ: Անցեալը եղած լմնցած գործողութիւն մը կը ցուցնէ. օրինակ՝ կարդացի: Ապառնին կատարուելիք գործ մը կը յայտնէ, օրինակ՝ պիտի կարդամ:

43. Գ Ա Ն Ձ Ը

Թովմաս աղբար եւ բարեկամն իր Արտակ Քաղաքէն գիւղ կը դառնային յամբընքաց, Թովմաս տեսաւ պարկ մը ոսկի ուտին տակ եւ գրպանել գայն փութաց: Ընկերն իսկոյն, ուրախութեամբ խանդավառ, Գոչեց. «Ի՞նչ բախտ մեզ համար»: «Մեզ մի՛ ըսեր, այս գանձը իմս է միայն, — Պռռաց Թովմաս, — քանի որ ե՛ս գրտայ գայն»: Արտակ լըռեց, եւ անբարբառ քայլ առին, Մինչեւ հասան խորն աննըշոյլ անտառին: Այնտեղ տեսան երկու զինեալ հրոսակներ, Հըրացանը բռնած կեցած անվեհեր: Թովմաս աղբար, խելքը գլխէն քոցուցած, Ըսաւ դողդոջ ձայնով ցած.

«Այս ի՞նչ փորձանք հասաւ մեզ»: «Մեզ մի՛ ըսեր, — գոչեց ընկերն անողոք. Քեզի՛ միայն, քանի որ գանձ չունիմ ես»: Ու ծառերուն տակէն փախաւ արտորնօք, Մինչդեռ Թովմաս, հոն միայնակ ու անզէն, Ոչխարի պէս քողուց, որ զինքը խուզեն: Գողերն իսկոյն կողոպտեցին իր ոսկին, Արդա՛ր պատիժ ագահ մարդու չար խօսքին: Յաջողութեան մէջ երբ կ'ըլլաս անձնատէր, Դժբախտ օրիդ մէկէն օգուտ մի՛ սպասեր:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յամբընքաց.— Յամբաբայլ, դանդաղ քալուածքով:
Անբարբառ.— Անխօս, առանց խօսելու:
Աննշոյլ.— Անլոյս, մութ:

Հրոսակ.— Աւազակ:
 Անվեհեր.— Անվախ:
 Անողոբ.— Անհատ, անգութ, անզիջող:
 Արտորնոօօ.— Աճապարանքով:
 Խուզել.— Մէկուն վրան գլուխը նայիլ բան մը փնտռելու հա-
 մար. ունեցածը չունեցածը առնել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Թովմաս ի՞նչ գտաւ զիւր դառնալու ատեն:
 - Գտածը կիսե՞ց ընկերոջը հետ. ի՞նչ ըսաւ: - Ամտառիմ մէջ ի՞նչ
 պատահեցաւ: - Յետոյ ի՞նչ եղաւ ոսկիմ. Թովմասիմ ընկե՞րը: -
 Ի՞նչ բարոյակամ համած է հեղինակը այս պատմութեանէն:

44. Ա Ր Ա Ր Ա Տ Ե Ի Ա Ր Ա Գ Ա Ծ


1

Հայաստան մեծ ու ընդարձակ բարձրաւանդակ մըն է, ծովու մակերեսէն 1500-2000 մեթր բարձր: Բազմաթիւ լեռներ ու բլուրներ կը տարածուին այս բարձրաւանդակին վրայ. ամենամեծ լեռն է Արարատը, որուն բարձրութիւնը կը հասնի 5156 մեթրի:

Լեռնաշղթաներուն մէջ կան խոր ձորեր ու հովիտներ. ամենէն խորն է Արաքսի հովիտը, 900 մեթր բարձրութեամբ:

Արարատ ունի երկու գաղաթ, մէկը՝ Մեծ Մասիս, 5156 մեթր, միւսը՝ Փոքր Մասիս, 3596 մեթր: Լեռան լանջերը ծածկուած են լուայի շերտերով եւ առհասարակ աղբառ են բուսականութեամբ:

Մեծ Մասիսի հիւսիսային լանջին վրայ գոյացած է հսկայ պատուածք մը, որ կը կոչուի «Վիհք Մաս»:



ԱՆԻ ՔԱՂԱՔ

Լաց»: Քրիստոսէ Լուր 341 թուականին տեղի ունեցաւ ահաւոր երկրաշարժ մը: Կը պատմուի, թէ այդ ատեն երկու Մասիսները նախ հեռացան իրարմէ, ապա կըրկին միացան սարսափելի ճայթիւններով:

1319ին ուրիշ ահեղ երկրաշարժ մը քարուքանդ ըրաւ բազմաթիւ քաղաքներ, որոնց մէջ էր նաեւ Անի մայրաքաղաքը: Վերջին շարժը տեղի ունեցաւ 1840 Յունիսին եւ կործանեց Ակոտի գիւղը:

2

Հայաստանի երկրորդ մեծ լեռն է Արագածը, որ չորս գաղաթ ունի եւ այդ պատճառով ալ կը կոչուի Քառագաղաթ Արագած: Կը տարածուի Մասիսէն դէպի հիւսիս եւ բաժնուած է անկէ Արաքսի հովիտով:

Արագածը, 4095 մեթր բարձր ծովու մակերեսէն, մարած հրաբուխ մըն է Արարատի պէս եւ տարուան մեծ մասը ձիւնով ծածկուած է:

Արագածէն կը բխին ջուրի բազմաթիւ ակեր: Ասկէ դաս՝ լեռը ունի հարուստ բուսականութիւն: Տեսարանը գեղեցիկ է եւ վեհաշուք:

Լեռան լանջերէն մինչեւ Արաքսի ափերը ծածկըւած են սեւ լաւայով եւ մոխրագոյն տուֆով:

Պատմական Հայաստանի մէջ կը տարածուին նաեւ ուրիշ մեծ ու փոքր լեռներ. նշանաւոր են Բիւրակնեան կամ Բինգէօլ, Սիփան, Նեմրութ, Գրգուռ, Տաւրոս եւայլն:

Այս լեռներուն մէջ ամենէն ջրառատն է Բինգէօլը, ինչպէս անուէն ալ կը հաստատէ, անկէ կը բխին հազարաւոր ակեր:

ԱՌԱՄ.— Գործը՝ շատ, գործողը՝ քիչ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարձրաւանդակ.— Բարձր տարածութիւն, սարահարթ:

Մակերես.— Ծովուն երեսը, վրայի գոգմը:

Լանջ.— Լեռան կուրծքը, կողերը:

Եերտ.— Կտոր, պտտառ:

«Վիիֆ Մասեաց».— Մասիսի սիհերը, անդուզները:

Անեղ.— Սարսափելի, վախնալիք:

Վեհաշուք.— Փառաւոր, չքեղ:

Տուֆ.— Հրաբխային քար:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Հայաստանը ի՞նչ մըն է: — Ամենէն բարձր լեռը ո՞րն է: — Ի՞նչ գիտէք «Վիիֆ Մասեաց»ի մասին: — Ի՞նչ կը պատմուի 341ի երկրաշարժի մասին: — Ուրիշ երկրաշարժներ տեղի ունեցած են: — Ո՞րն է Հայաստանի երկրորդ մեծ լեռը: — Ի՞նչ է լաւան: — Ուրիշ ի՞նչ լեռներ կան պատմական Հայաստանի մէջ: — ո՞րն է ամենէն ջրառատը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բայը ունի չորս եղանակ. սահմանական, հրամայական, ստորադասական եւ անորոշ: Սահմանական է կը խօսիմ, կը գործեմ: Հրամայական է խօսէ՛, գործէ՛: Ստորադասական է որ խօսիմ, երէ գործէի: Անորոշ է խօսիլ, խօսած, գործել, գործած:

Յոյց տուէք ձեր այսօրուան դասին մէջ գտնուած բայերուն եղանակները:

45. Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Ե Ծ Լ Ի Ճ Ե Ր Ը

1

Հայաստանի լեռնային ընտրութեան յատկական գեղեցկութիւնը կը կազմեն բազմաթիւ փոքր լիճեր. սակայն մեծ լիճերը քիչ են, ընդամէնը Երևք հաստ, — Սևանայ լիճ, Վանայ լիճ, Ուրմիոյ լիճ:


Այս Երևք լիճերէն միայն Սևանն է, որ անոյշ ջուր ունի եւ ծնունդ կու տայ Հրազդան կամ Չանգու գետին, միսնեւրուն ջուրը աղի է եւ ո՛չ մէկ գետ կը բխի անոնցմէ:

Սևանայ լիճը կը կոչուի նաեւ Գեղամայ ծով. 1930 մէթր բարձր է ծովու մակերեսէն, ջուրը՝ մութ կապտագոյն. ունի 1370 քառակուսի քիլոմէթր տարածութիւն:

Այս լիճը նշանաւոր է իր համեղ ձուկերով, ինչպէս կարմրախայտը եւ իշխանաձուկը:

2

Ուրմիոյ լիճը կը կոչուի նաեւ Կապուտան ծով. ունի 1300 մէթր բարձրութիւն եւ հայկական բոլոր լի-



Ճերուն մէջ ամենէն մեծն է, թէև աննշան խորութեամբ, հազիւ 4-5 մեթր:

Այս լիճին ջուրը չափազանց աղի է, վեց անգամ աւելի աղի, քան ծովու եւ ովկիանոսի ջուրերը: Լուղորդները չեն կրնար անոր մէջ սուզել, իրենց մարմինը անմիջապէս կը ծածկուի աղի շերտով, որ արեւուն տակ կը փայլիլի աղամանդի փոշիի պէս:

Ուրմիոյ լիճին մէջ ձուկեր չկան բնաւ:

3

Վանայ լիճը, որ կը կոչուի նաև Բզնունեաց ծով, 1625 մեթր բարձր է ծովու մակերեսէն: Ձկնառատ չէ. մէկ տեսակ ձուկ միայն կ'ելլէ այս լիճէն, «տառեխ» անունով:

Վանայ լիճին մակերեսովը հետզհետէ կ'ընդարձակուի, որովհետև ջուրերը ամէն տարի ցամաքէն որոշ մասեր կ'առնեն կը տանին: Վան քաղաքին եւ լիճին միջև տարածութիւնը երթալով կը նուազի, եւ բնակիչները ստիպուած են հեռանալ աւելի ներսերը:

Կ'ենթադրուի, որ լիճին ստորերկրեայ անցքերը խցուած են. այս պատճառով ջուրերը հետզհետէ կը բարձրանան եւ դէպի ցամաք կը տարածուին: Կը կարծուի նաև, թէ աւելի մեծ քանակութեամբ անձրև ու ձիւն կը տեղայ լիճին մէջ եւ շրջակայքը, ինչ որ կը ծառայէ աւելցնելու ջուրին ծաւալը:

ԱՌԱՄ.— Վալսցիք այն ջուրէն,
Որ ո՛չ կը խշշայ,
Ո՛չ ալ կը քշշայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Յաւերժական.— Յախտեանկան, միշտ տեսող:
- Կարմրախայտ.— Ձուկի տեսակ մը, կարմիր գոյնով:
- Սուզիլ.— Ջուրին մէջ թաղուիլ, միբճուիլ:
- Ստորերկրեայ.— Երկրին տակ, հողին տակ:
- Խցուած.— Փակուած, գոցուած:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Ինչո՞ւ ջրառատ երկիր մըն է Հայաստան:
— Որո՞նք են Հայկական Բարձրաւանդակին երեք մեծ լիճերը: —
Կրնա՞ք քարտեզին վրայ ցոյց տալ գանձք: — Անոնցմէ ո՞րը կը գտնուի ներկայ Հայաստանի մէջ: — Որո՞նք ջուրը առոյշ է, ո՞րո՞նք աղի: — Ինչո՞ւ ձուկեր չկան Ուրմիոյ լիճին մէջ:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բայը երկու մասէ կը բաղկանայ, արմատ եւ վերջաւորութիւն: Արմատը բային առաջին մասն է եւ չի փոխուիր. օրինակ՝ խօսիլ բային արմատն է խօս, գործել բային արմատն է գործ: Վերջաւորութիւնը բային երկրորդ մասն է, որ կը փոխուի եղանակին, ժամանակին, քիւիին ու դէմքին համեմատ. օրինակ՝ խօս-եցայ, գործ-եցիմք:



46. Կ Ա Ք Ի Լ Մ Ը Մ Ե Ղ Ր

Ա. ՄԱՍ

Գիւղացի մը խանութ բացեր
 Իր գիւղին մէջ բան կը ծախէր :
 Օրին մէկը, մօտիկ գիւղէն,
 Մահակն ուսին, շունը ֆովէն,
 Հսկայ հովիւ մը ներս մտաւ :
 — Բարեւ, բաւ. ա՛ խանութպան,
 Մեղըը չունի՞ս, տաս քիչ մը բան :

«Բարի եկար,
 Հովի՛ւ աղբար,
 Մեղըը ըլլայ փնտրածդ.
 Ո՛ր տեղէն որ ինքըդ հաւնիս,
 Կտրեմ ու տամ այս վայրկեանիս» :

Այսպէս սիրով,
 Անոյշ լեզուով
 Կը խօսէին,
 Կը կշռէին,
 Երբ որ յանկարծ
 Կաթիլ մը մեղր քափեցաւ ցած :

Տը՛գգ... անդիէն ֆանն մը եկաւ
 Ու կաթիլին վըրան ինկաւ .
 Իսկ խանութի տիրոջ կատուն,
 Աչքը ֆաննին, անցաւ քազուն
 Անոր մօտով,
 Զարկաւ քաթով :

Բայց կատունն ցատկելուն հետ
 Հովուի շունը իսկոյն եւեթ
 Հա՛ֆ, հա՛ֆ ըրաւ,
 Վըրայ քըռաւ,
 Կատուն բռնեց,
 Խածաւ, խեղդեց,
 Մէկդի նետեց :

«Խեղդե՛ց, խեղդե՛ց... շա՛ն որդի շուն.
 Վա՛յ իմ կատուս. հէ՛յ, սատկիս դուն» :

Շատ գայրացաւ խանութպանը,
 Ու ձեռքն ինկած առջի բանը
 Տո՛ւր քէ կու տաս շանը ֆակտին,
 Կատունն ֆով փոեց գետին :

«Վա՛յ ապրուստս, առիւծ շունս,
 Վա՛յ, ֆանդուեցաւ տեղս, տունս.
 Տունդ աւրի, ա՛յ խանութպան,

է՛յ դուն անխիղն, անգուր գազան-
 Ի՞նչպէս, դուն իմ շունքս գարնե՞ս.
 Գէ՛հ, գարնելը հիմա դուն տես»,
 Գտաց մեր բիրտ ամդահակը
 Եւ մեծագլուխ իր մահակը
 Շարժեց, նետեց անոր դէմքին,
 Խանութպանը փռեց շեմքին...

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թագուն.— Գաղտնի, ծածուկ: Կը դրուի նաև թաքուն:
 Եւեր.— ճիշդ, իսկոյն ԼԼԼԹ՝ ճիշդ չիմա, անմիջապէս:
 Բիրտ.— Կոչտ, կոպիտ:
 Անդահակ.— Հսկայ (Ճարդ):

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Օր մը ո՞ւր գնաց հովիւը. ի՞նչ գնելու: —
 Յանրարժ ի՞նչ պատահեցաւ: — Յետոյ ի՞նչ եղաւ: — Ի՞նչ ըրաւ
 խանութպանը. հովիւը: — Կրնա՞ք ըսել, թէ ի՞նչ էր բուն պատ-
 ճառը այս կռիւին: — Ո՞վ տուածք ի վերջոյ: — Ի՞նչ տեսակ մար-
 դիկ են այս ոտամաւորին մէջ գործող անձերը:



47. Կ Ա Տ Ո Ւ Ն Ո Ւ Շ Ո Ւ Ն Ը

1

*Ժամանակին կատուն դերձակութիւն կ'ընէր: Օր
 մը, ի՛նչպէս եղաւ, շունը դառնուկի մորթ մը բերաւ
 կատունին ու ըսաւ.*

*— Բարեւ, բարի յաջողութիւն, վարպե՛տ փխսօ.
 ա՛ն այս մորթը եւ ինձի յարմար դղակ մը կարէ. ձմեռ
 է, գլուխս կը մսի: Վարձքդ ինչ որ է կու տամ, միայն
 թէ չուտ ըլլայ:*

*— Աչքիս վրայ, քուչի աղբար, — պատասխանեց
 կատուն, — եղածը դղակ մըն է, մուշտակ չէ. կը կա-
 բեմ, Ուրբաթ օր եկուր առ: Իսկ վարձքի համար...
 է՛հ, ի՛նչ մեծ բան, մեր մէջ խօսիլն ալ ամօթ է:*

*Ուրբաթ առտու, կատուն դեռ խանութը չբացած,
 շունը եկաւ կանգնեցաւ դրան սեմին:*

— Վարպետը ո՞ւր է, — հարցուց աչկերտին:

կատուն տեսաւ շունը, թթին տակէն մըթմըթաց,
բարկացաւ ու պոռաց.

— Յուրտէն մեռա՞ր ինչ է, առտուն կանուխ եկեր
ես գլխուս վրայ տնկուեր: Չե՞ս ալ թողուր, որ շունչ
քաշեմ: Դիւրին բա՞ն կարծեցիր կարելը: Դեռ լմնցած
չէ:

— Այդպէս ըսէ, ա՛յ տնաչէն. բարկանա՞լը ինչ է:
Քեզի դրամ տուեր եմ, որ դդակս չո՛ւտ կարես: Եթէ
լմնցած չէ, ըսէ՛ վաղը եկուր:

Այսպէս խօսեցաւ քուչի աղբարը եւ նեղացած վե-
րադարձաւ, գլուխը բաց:

2

Քանի մը անգամ եկաւ գնաց շունը, տեսաւ՝ դդա-
կը կարուած չէ: Համբերութիւնը հատաւ քուչի աղ-
բոր, օր մըն ալ կռիւը ծայր տուաւ երկուքին միջեւ:

— Գո՛ղ փխսօ, մորթս ետ տուր, ինձի պէտք չէ քու
կարածդ ալ, կարելիքդ ալ, — կը պոռար շունը բար-
կութեամբ:

— Անպիտա՛ն շուն, դուն ինձի ի՞նչ տուիր, որ հի-
մա եկեր ես ետ կ'ուզես: Ես քեզմէ բան չեմ առած,
դնա՛ գործիդ, — պիտե՞րը ոլորած կը պոռար կատուն:

Շունը, ճարահատ, գնաց դատաւորին դանդատե-
լու. իսկ կատուն գիշեր մը գլուխն առաւ ու կորսուե-
ցաւ: Այդ կորսուելն էր, ա՛լ մէջտեղ չելաւ:

Այդ օրէն մինչեւ այսօր, երբ շունը կատուին հան-
դիպի, վրան կը վազէ, կը հաջէ ու ետ կ'ուզէ իր տուած
մորթը, իսկ կատուն, պիտե՞րը վեր-վեր ցցած, կը դառ-
նայ ետ ու բարկացած Ֆը՛ս կ'ընէ, կ'առնէ կը քալէ:

ԱՌԱԾ.— Երկու կատու շուն մը կը խեղդեն:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գդակ.— Գլխարկ, գլխանոց:
Տնաշէն.— Այս բառը տեղին համեմատ կը գործածուի տունը
չէն պահող, տանտիկին իմաստով:
Ճնարհատ.— Ճարը կտրած, յոյսը կտրած:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ժամանակին ի՞նչ արհեստ ունէր կատուն:
— Եունը ի՞նչ բերաւ ամոր: — Առաջին տեսակցութիւնը սիրալիր
էր. երկրորդը: — Ձեր կարծիքով՝ ո՞վ է յանցաւորը, կատու՞ն
թէ շունը: — Ի՞նչպէս սկսաւ կռիւը երկուքին միջեւ: — Վերջը
ի՞նչ եղաւ: — Ինչո՞ւ շունն ու կատուն իրարու վրայ կը յարձա-
կին, երբ իրարու հանդիպին:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Միեւնոյն վերջաւորութիւ-
նը ունեցող բայեր լծորդութիւն մը կը կազմեն: Երեք
գլխաւոր լծորդութիւններ կան՝ *ել*, *իլ* ալ. օրինակ՝
երգել, խօսիլ, խաղալ: Ուլ վերջացող քանի մը բայեր
ալ կան, որոնք անկանոն խոնարհումներ ունին:

48. ԿՕՇԿԱԿԱՐԻ ԽԱՆՈՒԹԻՆ ՄԷՁ

1

Սեղրակ աղա կօշկակարի մը խանութը կը մտնէ .

- Բարեկա՛մ, - կ'ըսէ, - զոյգ մը կօշիկ կ'ուզեմ ապսպրել :

- Շատ աղէկ :

- Կօշիկներուն քիթը նեղ ըլլալու չէ :

- Հիմակուան մօտայէն չէք ուզեր ըսել է :

- Կ'ուզեմ, որ ոտքս կօշիկին մէջ ազատ շարժի, նեղ ոտքի աման չեմ ուզեր, կոշտ ունիմ :

- Գլխուս վրայ . ձեզի անանկ կօշիկ մը չի՞նեմ, որ թէ՛ մոտայի համաձայն ըլլայ եւ թէ՛ ձեր ոտքերը չսեղմէ :

- Եթէ գո՛հ ձգես զիս, միշտ քու խանութդ կու գամ :

- Վստահ եղէք :

Կօշկակարը Սեղրակ աղային ոտքին չափը կ'առնէ եւ կը յայտնէ, թէ քանի մը օրէն պատրաստ կ'ըլլան կօշիկները :

2

Սեղրակ աղա քանի մը օրէն կ'երթայ կօշկակարին :

- Պատրա՞ստ են կօշիկներս :

- Այո՛, պատրաստ են :

Կօշկակարին աշկերտը կը ներկայացնէ կօշիկները :

- Եղբայր, - կ'ըսէ Սեղրակ աղա, - ասոնք պըղտիկ են :

- Ընդհակառակն, մեծ են :

- Ասոնց քիթերը նեղ են :

- Ձեմ կարծեր . շատ լայն քիթերը այսօր յարգի չեն : Կ'աղաչեմ, անդամ մը ձեր ոտքը անցընէ՛ք կօշիկները :

Սեղրակ աղա կը նստի : Կօշկակարին աշկերտը քառակուսի տախտակ մը կը դնէ Սեղրակ աղայի ոտքերուն տակ : Սեղրակ աղա կը ձեռնարկէ նոր կօշիկները հազնելու : Կօշիկները կ'ապստամբին :

- Ոտքդ ուժով կոխէ, կը պոռայ կօշկակարը :

- Ոտքի վրայ ել ու այնպէս կոխէ, - կ'ըսէ կօշկակարին օգնականը :

- Ոտքդ ուժով դետին զարկ, - կը խրատէ կօշկակարին աշկերտը :

- Սա փոշիէն ցանէ քիչ մը կօշիկներուն մէջ, որպէս զի Սեղրակ աղային ոտքերը դիւրութեամբ սահին ու մտնեն, - կը հրամայէ կօշկակարը պղտիկ աշկերտին :

Հրամանը կը կատարուի, բայց կօշիկները հաստատամիտ են :

- Իօ՛Ք, քրտնեցայ, - կ'ըսէ Սեղրակ աղա երեսը թթուեցնելով, - քեզի քառսուն անդամ ըսինք, որ մեծ ըլլան, լայն ըլլան, երկար ըլլան :

- Կ'երեւայ՝ ոտքերդ քրտնած են :

- Ձէ՛, հոգիս, չէ՛, կօշիկները նեղ են :

- Անդամ մը որ հազնիս՝ կը բացուին : Լայն կօշիկները աւելի կը վնասեն կոշտերուն :

- Բայց չեմ կրնար հազնիլ :

Կօշկակարը, օգնականով եւ աշկերտներով, կը փութայ Սեղրակ աղային օգնելու : Երկու հոգի Սեղրակ աղային թեւը կը մտնեն, կօշկակարը ոտքերը կը բռնէ եւ կ'աշխատի կօշիկին մէջ դնել : Ամբողջ կօշկակարեան խումբը կը ճզնի ու կը տքնի :

- Թող տուէք ոտքս, թող տուէք, - կը բողբէ Սեղրակ աղա :

— Բարկանալու իրաւունք չունիք, Սեղրա՛կ աղա :
 — Չունիմ, ա՛ղբար, չունիմ. դուք իրաւունք ունիք բարկանալու. թող տուէք ոտքս :

Բայց կօշկակարը ուժով բռնած է Սեղրակ աղային ոտքը, որուն ինը տասներորդ մասը մտած է արդէն կօշիկին մէջ :

3

Սեղրակ աղա կը զգայ, թէ գերի բռնուած է, ուստի անձնատուր կ'ըլլայ կօշկակարին, որ իր խումբով կը յաջողի վերջապէս կօշիկները հաղցնել իր յաճախորդին :

— Տեսա՞ր ինչպէս աղէկ եղաւ : Ոտքի վրայ կեցիր քիչ մը, մինչեւ տուն երթաս, ո՛չ ցաւ կը մնայ, ո՛չ բան : Սանկ քալէ՛ նայիմ :

— Ի՞նչպէս քալեմ, կոշտերս սաստիկ կը ցաւին, հանեցէ՛ք սըւտնք :

- Քիչ մը խօսք մտիկ ըրէ, Սեղրա՛կ աղա :
- Քիչ մը լայնիկէկ շինէիք չէ՞ր ըլլար :
- Չ'ըլլար, Սեղրա՛կ աղա, չ'ըլլար. ամէն խանութ պատիւ ունի, մենք մեր խանութին պատիւը չենք կըրնար կոտորել անանկ մեծ, լայն ու տձեւ կօշիկներ կարելով. ամէն մարդ իր դործը գիտէ :
- Աղէկ, աղէկ, ի՞նչ պիտի տանք :
- Երկու ոսկի :

Սեղրակ աղա կը վճարէ եւ նոր կօշիկներով դուրս կ'ելլէ կօշկակարին խանութէն, ամէն քայլափոխի հառաչելով ցաւէն, երբեմն ալ արտասուելով : Կը զգայ վերջապէս, թէ պիտի չկրնայ շարունակել ճամբան, զրօսարան մը կը մտնէ, բաղմոցին վրայ կը նստի եւ կօշիկները հանել կ'ուզէ : Չի յաջողիր : Սպասաւորը կը կանչէ եւ կը խնդրէ, որ կօշիկները քաշէ : Սպասա-

ւորը ամէն ջանք ի դործ կը դնէ, կարելի չ'ըլլար կօշիկները հանել : Իմաց կը արուի կօշկակարին, որ օգնականին հետ կը հասնի եւ մեծ դժուարութեամբ կը յաջողի հանել կօշիկները :

Սեղրակ աղա կը հազնի հին կօշիկները եւ կը հանդրստանայ :

ԱՌԱՄ. — Խօսք չհասկցողին դժուար է խօսք հասկցնել :

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Մոտա. — Օտար բառ է, կը նշանակէ նորաձեւութիւն :
- Ձեռնարկել. — Ձեռք զարնել, գործի սկսիլ :
- Տֆնիլ. — ձգնիլ, ջանալ, աշխատիլ :
- Արտասուել. — Լալ :

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ. — Սեղրակ աղա ինչպիսի՞ կօշիկներ կ'ուզէր :
 — Իր ուզածին պէս շինուեցա՞ն կօշիկները : — Կօշկակարը ի՞նչ պատճառ առաջ բերաւ կօշիկները անդ շինած ըլլալուն համար : — Իր անդ կօշիկներով կրցա՞ւ քալիլ Սեղրակ աղա : — Վերջը ի՞նչ եղաւ : — Այս տեսակ գրուածքներուն ի՞նչ կ'ըսեն : — Կրնա՞ք ըսել, քէ ո՛վ է այս գրուածքին հեղինակը :

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Էական բայէն գատ չորս տեսակ բայ կայ. ներգործական, չէզոք, կրաւորական եւ անցողական : Ներգործական կը կոչուին այն բայերը, որոնց ենթական գործողութիւնը ուրիշի մը վրայ կը կատարէ. օրինակ՝ ես կը բանամ դուրը : Կը բանամ ներգործական բայ է : Չէզոք կը կոչուին այն բայերը, որոնց ենթական գործողութիւնը իր վրայ կը կատարէ. օրինակ՝ կը քալիմ, կը նստիմ :

Չեր այսօրուան դասին մէջ չէզոք եւ ներգործական բայեր կա՞ն :

49. Կ Ա Ք Ի Լ Մ Ը Մ Ե Ղ Ր

Բ. ՄԱՍ

«Սպաննեցին... հէ՛յ, օգնութի՛ւն...»:

Ու քաղէ քաղ եւ տունէ տուն
Չայն կու տային մէկը միւսին,
Վերի քաղէն, վարի քաղէն,
Ճամբաներէն, գործի տեղէն
Լաց ու նիչով
Ու վայ տալով:

«Տօ՛, կոպիտ արջ, տօ՛, ամեհի՛,
Այս տեսակ ալ բան պատահի՛ր...
Դուն եկեր ես մե՞ղր առնելու
Թէ իր շեմքին մարդ գարնելու»:
Այսպէս կ'ըսեն ու կը գարնեն,
Աղցան կ'ընեն, կ'երկընցընեն
Շան ֆովն ի վեր. «Հայտէ՛, առէ՛ք,
Չեր մեռելը եկէ՛ք, տարէ՛ք»:

Ու այնտեղէն բօքը ահա՛
Կ'երթայ մօտիկ գիւղը կ'իյնայ,
Թէ «մեռե՛ր էք,
Եկէ՛ք, հասէ՛ք,
Սպաննեցին
Մ'եր գիւղացին»:

Ամբողջ գիւղը կ'ելլէ ոտքի
Ու գունդագունդ դուրս կը նետուի.
Ամէն մէկը առած բան մը,
Ո՛րը ձեռքը հրրացան մը,
Ո՛րը վայտով կամ կացինով,

Ո՛րը ոտքով, ո՛րը ձիով,
Ո՛րն անգըղակ, ո՛րը բոպիկ,
Հա՛ կը վագեն գիւղը մօտիկ:
«Տօ՛, այսպէս ալ անիրաւ գի՛ւղ,
Ո՛չ խիղճ ունին, ո՛չ ահ, երկիւղ.
Գացեր է մարդն առուտուրի,
Հաւափուեր են, տուեր սուրի:

Երբա՛նք, երբա՛նք,
Կըրակի տանք:
Յառա՛ջ, յառա՛ջ, հա՛ ձեզ տեսնեմ»:

Եւ դուրս եկան իրարու դէմ
Կոտորածի
Երկու գիւղերը դըրացի...
Տուին, զարկին,
Սպաննեցին,
Եւ որքան շատ արիւն տեսան,
Այնքան ալ շատ գագան դարձան,
Կորան ու եղան
Գետնին հաւասար...

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամեհի.— Կատաղի, վայրագ, բիրտ:
Աղցան ընել.— Աղցանի պէս ճմլի:
Անգղակ.— Առանց գլխարկի:
Երկիւղ.— Վախ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչո՞ւ կը վագէին եւ ո՞ւր կը վագէին ա-
մէն քաղէ ու տունէ: — Որո՞ւ վրայ յարձակեցան վագողները: —
Հովիւը ի՞նչ եղաւ ի վերջոյ: — Ի՞նչ ըրին գիւղացիները, երբ
սպանութեան լուրը առին: — Երկու դրացի գիւղերը ինչո՞ւ իրա-
բու դէմ ելան: — Վերջը ի՞նչ եղաւ:

50. Ա Ր Դ Ա Ր Ա Ս Է Ր Դ Ա Տ Ա Ի Ո Ր Ը

1

Ես ձեզի բռնեմ, որ դուք ալ ուրիշներուն պատմէք, ուրիշները լսեն եւ աշխարհն իմանայ, թէ ժամանակին արդարասէր դատաւոր մը կար:

Օր մը, այրի կին մը դնաց անոր մօտ, ծունկի եկաւ առջեւը ու ըսաւ.

— Արդա՛ր դատաւոր, լսէ՛ այս աշխարհի հօգնե՛րուն գործը եւ դատ ու դատաստան կտրէ:

«Ես արտ մը ունէի, կը վարէի, կը ցանէի, քըրտինք թափելով կը հանէի իմ ու գաւակներուս հացը:

«Պատահեցաւ, որ արտիս քով գտնուի թագաւորին պարտէզը: Օրին մէկն ալ, թագաւորին սիրտը ապարանք մը ուղեց. մարդ զրկեց, որ արտս ծախու առնէ եւ անոր վրայ շինէ ապարանքը:

«Ըսի թագաւորին մարդոց, թէ ծախու չէ արտս, ես դայն ժառանգեր եմ իմ մօրմէս, մայրս ալ ժառանգեր է իր նախնիքներէն: Իմ հողիս ամէն մէկ կտորը ոսկիի փոշի է իմ աչքիս: Չեմ ծախեր, ըսի, եթէ թագաւորը արտիս երեսը աղամանդով իսկ ծածկէ եւ այդ աղամանդներն ալ ինձի տայ...»

«Չանցաւ չարաթ մը երկուք, եւ ահա թագաւորին վերակացուն իր տիրոջ անունով գրաւեց արտս եւ անոր վրայ շինեց արքայական ապարանքը:

«Թագաւորը լուր ունէ՞ր թէ չէ, չեմ գիտեր. միայն սա գիտեմ, որ ես զրկուեցայ իմ արտէս, մնացի չքաւոր եւ աւուր հացի կարօտ:

«Լսեցի, որ դուն արդար դատ ու դատաստան կը տեսնես. ճամբայ ելայ, օր ու զիշեր քալեցի եւ եկայ ցաւս պատմելու քեզի»:

Դատաւորը շփեց իր ճերմակ մօրուքը, մտածեց քիչ մը, ապա ըսաւ.

— Վերադարձի՛ր զիւզդ. դատիդ տէրն ու տիրականը ես եմ ասկէ ետք:

2

Թագաւորը ուրախ դուարթ նստեր է իր նորակառոյց գեղեցիկ ապարանքին մէջ: Հոն են նաեւ պալատականները՝ ոսկեթել ուսնոցներով եւ շողշողուն ըզգեստներով:

Թագաւորը յանկարծ կը տեսնէ դատաւորը, որ, իչու մը վրայ նստած եւ ձեռքը պարսպ պարկ մը բռնած, կը մօտենայ ապարանքին:

Կու դայ կը կենայ թագաւորին դիմաց, խոնարհութիւն կ'ընէ եւ կ'ըսէ.

— Տէ՛ր թագաւոր, թոյլ կու տա՞ս, որ պարկիս մէջ քիչ մը հող լեցնեմ այս պարտէզէն:

Հող ըսածդ ի՛նչ...

— Լեցո՛ւր, — կը հրամայէ թագաւորը:

Դատաւորը կը լեցնէ հողը պարկին մէջ, բերնէ բերան. յետոյ՝ մօտենալով թագաւորին՝ կ'աւելցնէ.

— Մե՛ծ թագաւոր, կը տեսնես որ ծեր եմ, ուժս հատեր է, առջի կարողութիւնս չէ մնացեր. նեղութիւն կրէ եւ օգնէ ինձի, որպէս զի պարկս դնեմ իշուս կոնակը:

Թագաւորը կը ժպտի, չ'ուզեր մերժել ծերունիին խնդրանքը եւ կը փորձէ վերցնել հողով լեցուն պարկը ծերունիին հետ:

Բայց թագաւորը ո՞ւր տեսած է բնւ վերցնել: Հա-
ղիւ թէ պարկը վեր կը բարձրացնէ, անմիջապէս կը
ձգէ զայն դետին ու կը յարէ:

— Ո՞ւհ, ի՞նչ ծանր է եղեր անիծածը:

Դատաւորը կը նայի թագաւորին երեսը եւ կ'ըսէ:

— Տէր, ծանր է կ'ըսես այս պարկին համար, ու-
րուն մէջ հազիւ քանի մը թի հող լեցուցի: Իսկ դուն
բռնութեամբ յափշտակեցիր այս ամբողջ արտը խեղճ
այրի կնոջ մը ձեռքէն: Հապա ի՞նչպէս պիտի դիմա-
նաս արտին ծանրութեանը, երբ օր մը Աստուծոյ դա-
տաստանին առջեւ ելլես:

Թագաւորը մտածեց պահ մը, ապա բռնեց արդա-
րասէր դատաւորին ձեռքը, համբուրեց եւ գլխուն դը-
րաւ: Յետոյ հրամայեց, որ արտը ետ տան այրի կնոջ՝
ապարանքով եւ մէջի հարստութիւններով միասին:

ԱՌԱՄ.— Ով որ չէ կրցած բարեկամ մը շահիլ,
արժանի չէ ապրելու:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ապարամբ.— Թագաւորական պալատ:

Նախնիք.— Նախահայրերը:

Աւուր: Օրուան:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Այրի կիներ ի՞նչ պատմեց դատաւորին: —
Արդա՞ր էր բազաւորին ըրածը: — Ի վերջոյ ապարամբը շինուե-
ցաւ. ո՞ւր: — Ի՞նչ ըրաւ դատաւորը. բազաւո՞րը: — Կը եււնի՞ք
դատաւորին բանեցուցած ենարկիմ: — Գու՞ք ի՞նչ պիտի ընէիք իր
տեղը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Կրաւորական կը կոչուին
այն բայերը, որոնց ենթական ուրիշի մը կողմէ կա-
տարուած գործողութիւնը իր վրայ կը կրէ. օրինակ՝
դուն կը բամբասուիս քշնամիէդ: Անցողական կը կոչ-
ուին այն բայերը, որոնց ենթական գործողութիւնը
ուրիշի մը ընել կու տայ. օրինակ՝ կարել կու տամ,
կը կարդացնեմ:

Չեր այսօրուա զասին մէջ բայի ի՞նչ տեսակներ
գործածուած են. կրնա՞ք ներգործական բայերը կրա-
ւորականի վերածել:

Գրեցէք քանի մը նախադասութիւններ, անոնց մէջ
գործածելով ներգործական, չէզոք, կրաւորական եւ
անցողական բայեր:

51. Ա Ր Ա Ք Ս Ը

Հայկական Բարձրաւանդակին մէջէն կը հոսին
բազմաթիւ մեծ ու փոքր դետեր, ինչպէս Եփրատ,
Տիգրիս, Արաքս, իրենց բազմազան ճիւղերով:

Գերազանցօրէն հայկական դետ է Արաքսը, որ
Բիւրակնեան լեռներու հիւսիսային լանջերէն դէպի
ցած կը հոսի եւ կը թափի Կասպից ծովը, Կուր դետին
հետ միասին: Ունի շուրջ 700 քիլոմետր երկարութիւն:

Չորս առուակներ կը միանան Բիւրակնեան լեռնե-
րուն վրայ եւ կը կազմեն Արաքսը, որ դէպի արեւելք
կը հոսի եւ իր մէջ կ'ընդունի բազմաթիւ ուրիշ դե-
տակներ, ինչպէս նաեւ Ախուրեան դետը:

Ապա մեր մայր գետը կը հոսի Արարատեան ընդարձակ դաշտին մէջէն եւ կ'ընթանայ հարաւ-արեւելեան ուղղութեամբ: Այդ դաշտին մէջէն հոսող լեռնային գետեր, ինչպէս Քասախ, Մեծամօր, Հրազդան, նոյնպէս կը թափին Արաքսի մէջ:

Առանց այս գետին, մեր երկրի որոշ մէկ մասը անապատ պիտի ըլլար, լերկ եւ անջրդի:

2

Հոռոմայեցիները, հին ատեն, յաճախ փորձած են կամուրջ շինել Արաքսի վրայ, բայց չեն յաջողած: Զոռած կամուրջները երկար չէին դիմանար: Այս պատճառով ալ լատին բանաստեղծ Վիրգիլիոս «կամրջընկէց» կոչած է Արաքսը, այսինքն գետ մը, որ լուծի չի հանդուրժեր:

Արաքսի ափին կը դառնուէին Հայաստանի նշանաւոր մայրաքաղաքներէն Արմաւիր եւ Արտաշատ:

Հին Զուղայի մօտ՝ Արաքսը կ'ուղղուի դէպի արեւելք, անցնելով լեռներու մէջէն եւ ահագին աղմուկ հանելով: Օտար ճամբորդ մը այս ահեղ տեսարանը կոչած է «դժոխաձեւ», աւելցնելով որ ուրիշ ոչ մէկ տեղ կարելի է տեսնել այսքան ուժգնութեամբ արդելքներու դէմ կռուող գետ:

Ապա լեռներուն մէջէն դուրս գալով եւ միշտ դէպի հիւսիս ուղղուելով, Արաքս կը խառնուի Կուր գետին եւ կը թափի Կասպից ծովը:

Մեր գրագետներէն շատեր, ինչպէս Բաֆֆի, Ահարոնեան, Իսահակեան, գեղեցիկ կերպով նկարագրած են Արաքսը:

Արաքսը կը կոչուի նաեւ Երասխ կամ Արազ:

ԱՌԱՄ.— Ամէն ծաղիկ հոտ չ'աւնեմար:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Գերագանցօրէն.— Առաւելարար, մանաւանդ:
- Ընթանալ.— երթալ, առաջ վազել:
- Լերկ.— Բուսազուրկ, անբեր:
- Անջրդի.— Չոր ու ցամաք, ջուրէ զուրկ:
- Կամրջընկէց.— Կամուրջ քանդող:
- Վիրգիլիոս.— Լատին նշանաւոր բանաստեղծ: Ծնած է Քրիստոսէ առաջ 70 թուականին: Գրած է «Ենէական» եւ այլ գործեր: Բաֆֆի (1835 - 1888).— Վիպագիր. գրած է բազմաթիւ վէպեր, ինչպէս «Պաւլոս Բէկ», «Կայծեր», «Սամուէլ», «Խենթը» եւ այլն:
- Աւետիս Աւարոնեան (1866 - 1948).— Գրագէտ եւ ուսուցիչ. գրած է վէպեր, թատերախաղեր եւ բանաստեղծութիւններ, ինչպէս «Ազատութեան ճանապարհին», «Իմ գիրքը», «Հայրենիքիս համար», «Արցունքի հովիտը» եւ այլն:
- Աւետիֆ Իսահակեան.— Գրագէտ եւ բանաստեղծ. ծնած է 1875ին: Գրած է «Երգեր ու վէրքեր», «Արու Լալա Մահարի», «Աշնան ծաղիկներ» եւ այլն: Մեռաւ 1957ին, Երեւան:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞ր մեծ գետերը կը հոսին Հայկական Բարձրաւանդակին մէջէն: - Ինչո՞ւ զուտ հայկական գետ է Արաքսը: - Ո՞րքան երկար է ո՞ւր կը բափի: - Ուրիշ գետեր կ'ընդունի՞ իր մէջ: - Վիրգիլիոս ի՞նչ կոչած է Արաքսը. ինչո՞ւ: - Մեր ո՞ր գրագետները խօսած են Արաքսի մասին: - Ինչո՞ւ մեր մայր գետը կը կոչենք Արաքսը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Վերաբառ: Կազմել Յախագասութիւններ եւ ամօնց մէջ ցոյց տալ գոյականի, ածականի, դերանունի եւ բայի տեսակները:

Գրաւոր հրահանգներ տալ աշակերտներուն:

52. Կ Ա Թ Ի Լ Մ Ը Մ Ե Ղ Բ

Գ. ՄԱՍ

Դուն մի ըսեր, որ իրարու
Սահմանակից մեր այս երկու
Գիւղերն իրենց հարկը կու տան
Ամէն մէկը գատ տէրութեան:

Մէկ տէրութեան քազաւորը,
Լսելուն պէս այս բոլորը,
Լուր կը դրկէ աջին, ձախին,
Իր հպատակ ժողովուրդին.

«Յայտնի ըլլայ մեր տէրութեան
Զինուոր, բանուոր, ազնուական

Ամէն շարքին

Ու աշխարհքին,

Որ անօրէն ու դաւանան

Մեր դըրացի ազգը դաժան,

Երբ մենք նստած էինք սիրով,

Մեր սահմանը մտաւ զօրքով

Ու վատութեամբ քաշեց սուրի

Զաւակները մեր սիրելի:

Եւ հակառակ մեր իսկ կամքին,

Պատուէր տուինք մեր բանակին՝

Թշնամիին մըտնէ հողը,

Մեր սուրբ, արդար հանէ ոյսը...»:

Իսկ անդին ալ միւս իշխանը

Գըրեց զօրքին ճիշդ նոյն բանը:

Ու սկսաւ կռիւ անեղ,

Թնդանօթներ եկան մէջտեղ:

Կրակն ինկան շէն ու քաղաք,

Արիւն. աւեր. ճիչ, աղաղակ,
Ամէն կողմէ սարսափ ու բօք,
Ամէն կողմէ մեռելի հոտ...

Ամառ, ձրմեռ այդպէս անցան,
Ու մնացին դաշտերն անցան:
Դեռ կռիւը չըղադարած,
Սովը եկաւ համատարած,
Սովը եկաւ, սովի հետ ցաւ,
Ծաղկած երկիրն ամայացաւ...

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարկ.— Տուրք:

Անօրէն.— Օրէնք-կանոն չճանչցող, օրէնքի չենթարկուող:

Դաժան.— Խիստ, խստասիրտ, անզուբ:

Շէն.— Այստեղ կը նշանակէ գիւղ:

Բօք.— Գէշ լուր, սեւ լուր, գոյժ:

Անցան.— Առանց ցանքի, առանց բան մը ցանելու:

Համատարած.— Ամէն կողմ տարածուած, ընդհանուր:

Ամայանալ.— Ամայի, անապատ, աւերակ դառնալ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Երբ քազաւորը լսեց պատահածը, ի՞նչ ըրաւ: — Ինչու՞ զօրք հաւաքեց: — Միւս իշխանը ինչ ըրաւ: — Ի՞նչ եղան գիւղ ու քաղաք: — Վերջը ի՞նչ եղաւ: — Այս բոլորը ինչի՞ հետեւանք էր: — Կ'արժէ՞ր կարիլ մը մեղրի համար մարդ սպաննել, պատերազմ ընել: — Ի՞նչ եզրակացութիւն կրնաք հանել այս պատմութեան:



53. Մ Ե Ր Բ Ա Ս Ա Ր Ը

1

Ձմրան գիշեր էր, երկար ու ձանձրալի գիշեր: Մայրս հեքիաթ կը պատմէր. մենք անկողնի մէջ պառկած, լուռ մտիկ կ'ընէինք, իսկ մեր Բասարը, բակէն դուրս ելած, կը հաջէր միշտ: Երբեմն կը հեռանար տունէն, երբեմն արագ կը մօտենար ու կը հաջէր աւելի կատաղի:

Հօրս այն կասկածը, թէ դուրսը կրնան դայլեր ըլլալ, անհանդատացուց մեզ: Ամենէն աւելի կը վախնայինք մեր Բասարին համար. յանկարծ փորձանք մը չըզա՞յ պլխուն:

Ձեմ գիտեր գիշերուան կէ՞սն էր թէ լուսարացի մօտ, մեր Բասարը վաղեց բակէն ներս ու սկսաւ կլանչել, դուռը ճանկոտել:

— Վա՛յ, — գոչեց հայրս, — դայլ է. եկեր է՝ կը խեղդէ շունը:

Մենք դուրս թռանք, իսկ հայրս արդէն դացի էր նայելու, թէ ի՞նչ էր պատահած:

— Տարա՛ւ, դայլը տարա՛ւ մեր շունը. էհէ՛յ... — լսուեցաւ հօրս ձայնը հեռուէն:

Մենք վաղեցինք անոր ետեւէն:

Ձմրան պայծառ գիշեր, լուսինը մէկ կողմէն լոյս կու տար, պսպղուն ձիւնն ալ՝ միւս կողմէն:

Տեսանք, որ դայլը ձիւնին մէջէն կը փախչի դէպի անտառ: Այն կողմէն կը լսուէր նաեւ մեր Բասարին աղեկաուր կլանչոցը:

Գայլը կը վաղէր, մենք ալ՝ ետեւէն:

2

Յանկարծ, ուրկէ՞ ուր, դայլին ետեւէն հասաւ մեծ շուն մը, յարձակեցաւ վրան եւ սկսաւ զղել: Գայլն ու շունը ինկած էին ձիւնին մէջ: Քիչ մըն ալ մօտեցանք եւ տեսանք, որ դայլին հետ կռուողը մեր Բասարին մայրն էր: Մեր ուրախութիւնը սահման չունէր:

Գայլը կ'աշխատէր աղստիլ շան ձեռքէն, բայց ինչ որ կ'ընէր՝ ազատելու հնար չէր գտներ: Բասարը, ձիւնին մէջ ինկած, անոյնը կը կլանչէր, իսկ այս կլանչոցը աւելի կը կատղեցնէր մայր շունը:

Հայրս, մեծ մահակ մը ձեռքին, կ'ուզէր զարնել դայլին գլխուն, բայց կը վախնար, որ հարուածը կը հանդիպի Բասարի մօրը: Վերջապէս, յարմար պահու մը, մահակը իջեցուց ուղղակի դայլի գլխուն:

Վերաւոր գայլը այնպէս ոռնաց, որ շունն ալ վախ-
ցաւ. գաղանը լեղապատառ փախաւ անտառ: Մայր
շունը քիչ մըն ալ հետապնդեց գայն, ապա ետ դարձաւ:
Առջեւի ոտքէն կը կաղար, իսկ մէջքէն արիւն կը հո-
սէր. վերաւորուած էր, բայց ուրախ-ուրախ կը պտը-
տէր մեր շուրջը, կը լզէր Բասարի դունչն ու ոտքերը:

Բասարը բերին տուն. մարմնին վրայ քանի մը
վէրքեր կային, մայրս ձէթ քսեց անոնց վրայ: Երկու-
երեք օր ետք արդէն բոլորովին լաւացած եւ մոռցած
էր պատահածը:

Տարի մը անցած՝ մեր Բասարը այնքան մեծցաւ,
այնքան ուժովցաւ, որ ոչ մէկ օտար շուն կը համար-
ձակէր մօտենալ մեր տան:

Երբեմն, ձմրան գիշերները, երբ անօթի գայլեր կը
սլքտային մեր տան մօտերը, Բասարի հաջոցին հետ
կը լսուէր նաեւ մօր ոգեւորող ձայնը: Մայր շունը
արդէն ծերացեր էր, բայց երբ հարկ ըլլար՝ օգնու-
թեան կը հասնէր մեր Բասարին:

ԱՌԱՅ.— Ծունը յիշէ, փայտը քաշէ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կլանչիլ.— Ծուներուն լալով ոռնալը. կը գրուի նաեւ կալան-
չիլ:

Պսպղուն.— փայլուն, փայլուն:

Աղեկտուր.— Աղիքները կտրտող. ցաւազին:

Հնար.— ձար, միջոց, կարելիութիւն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ձմրան գիշեր մը ի՞նչ պատահեցաւ: — Ին-
չո՞ւ կը կլանչէր Բասարը: — Ո՞վ հասաւ օգնութեամբ: — Ի վերջոյ
ի՞նչ եղաւ գայլը: — Որո՞նք աւելի գորաւոր են. գայլերը քէ
շուները: — Ո՞րն է այս պատմութեան ամենէն յուզիչ մասը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Մակրայ կը կոչուին այն
բառերը, որոնք գործողութեամ մը կամ վիճակի մը
տեղը, կերպը, ժամանակը, քանակութիւնը ցոյց կու
տան. օրինակ՝ վերը կը պատկիմ, մինակ կ'ապրիմ,
կանուի կ'ելլեմ, քիչ կ'ուտեմ. վերը, միմակ, կամուխ,
քիչ մակրայ են: Մակրայ են նաեւ շատ, ուր, ուրկէ,
քովը, հոս, մօտը, անդին, կամաց, շուտ, հագիւ, գրե-
քէ, յաճախ, յանկարծ, ուշ, արդէն, երբեք, երբեմն,
եւայլն:

54. ԾՈՎՈՒՆ ԶՈՒՐԸ ԻՆՉՈՒ ԱՂԻ Է

1

Շատ տարիներ առաջ դիւղի մը մէջ կ'ապրէին եր-
կու եղբայրներ՝ Աւազ եւ Ադամ: Մեծ եղբայրը՝ Ա-
ւազ՝ աւելի ուժով էր եւ գրեթէ միշտ կը նեղէր, կը
չարչարէր իր փոքր եղբայրը՝ Ադամը:

Երբ հայրերնին մեռաւ, փոքր եղբոր վիճակը աւե-
լի ծանրացաւ: Մեծ եղբայրը իւրացուց հօրը ունեցած-
շունեցածը. փոքր եղբորը բան չմնաց:

Երկու եղբայրները սմուսնացան եւ ընտանիք կաղ-
մեցին: Աւազ հարուստ էր, Ադամ՝ խեղճ ու աղքատ:
Օր մը, Ադամի տան մէջ ցորենի հատիկ մը անդամ չը-
կար, որ գոնէ ապուր եփէին եւ ուտէին: Ճարահատ՝
Ադամ պնաց մեծ եղբորը եւ ըսաւ անոր.

— Մե՛ծ եղբայր, ինձի քիչ մը ցորեն փոխ տուր:

Բայց մեծ եղբայրը շատ ազահ ու կծծի էր. մերժեց օղնել փոքր եղբորը: Ադամ ծով դնաց ձուկ որսալու. շատ աշխատեցաւ, սակայն բախտը չժպտեցաւ իրեն. ձուկ մը անդամ չկրցաւ որսալ:

Պարսպ ձեռքով ու գլխահակ տուն դարձաւ. ճամբան երկանաքար մը տեսաւ: «Թերեւս պէտք ըլլայ» մտածեց, վերցուց երկանաքարը եւ հետը տուն տարաւ:

Կինը հարցուց.

— Ծատ ձուկ բռնեցի՞ր:

— Չէ, ձուկ չկայ, բայց երկանաքար մը գտայ ճամբան. առի բերի, թերեւս պէտք ըլլայ:

— Բայց մենք աղալու բան չունինք, ցորենի հատիկ մը անդամ չունինք:

Ադամ բարկութենէն ոտքով հրեց երկանաքարը: Այդ պահուն հրաշալի բան մը պատահեցաւ. երկանաքարը յանկարծ սկսաւ դառնալ ինք իր վրայ եւ աղալ: Քանի կը դառնար, այնքան աղ կը թափէր տակէն: Հետըզհետէ աւելի արագ սկսաւ դառնալ. աղը կը դիզուէր սենեակին մէջ:

Մարդ ու կին ուրախացան: Ադամ ուզեց կեցնել երկանաքարը, բայց հնար մը չգտաւ. ի վերջոյ հակառակ կողմը դարձուց, եւ այդ ժամանակ երկանաքարը դադրեցաւ աղալէ:

Այդ օրէն սկսեալ, ամէն անգամ որ նեղութեան մատնուէին, Ադամ ոտքով կը հրէր երկանաքարը, որ՝



կը սկսէր աղալ. աղը կը ծախէին եւ կը դնէին ինչ որ ուզէին: Այսպէս՝ մարդ ու կին կ'ապրէին առանց որեւէ բանի կարօտ ըլլալու:

2

Մեծ եղբայրը իմացաւ եղելութիւնը. սկսաւ նախանձիլ: Գնաց փոքր եղբորը մօտ եւ ըսաւ անոր.

— Ադա՛մ եղբայր, տո՛ւր այդ երկանաքարը ինձի, քիչ մըն ալ ես աղամ:

Փոքր եղբայրը չուզեց մերժել, տուաւ հրաշագործ երկանաքարը: Մեծ եղբայրը առաւ տուն տարաւ եւ սկսաւ բանեցնել զայն: Աղը հետզհետէ դիզուեցաւ, հասաւ առաստաղին: Պատերը ցնցուեցան. ահա՛, ահա՛, ուր որ է՝ տունը պիտի փլչի:

Վախեցաւ Աւաղը. չէր դիտեր ինչ ընէր, ինչպէս ընէր, որ երկանաքարը դադրէր աղալէ: Ծփոթած ու շուարած՝ տարաւ դուրս եւ նետեց ըլուրէն վար:

Հրաշագործ երկանաքարը դլորեցաւ, դլորեցաւ եւ ինկաւ ծովը. մնաց ջուրերուն տակ:

Մինչեւ այսօր ալ երկանաքարը կը դառնայ ու կը դառնայ ծովուն տակ եւ անընդհատ կ'աղայ:

Ահա թէ ինչո՛ւ ծովուն ջուրը աղի է:

ԱՌԱՄ.— Զուրը ինկողը օճիմ կը փաթթուի:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ճարահատ.— ճարը հատած, միջոց մը, ելք մը չգտնել:

Կծծի.— Ազահ, չափազանց խնայասէր, ժլատ:

Դիզուիլ.— Վրայէ վրայ հաւաքուիլ, կուտակուիլ:

Անընդհատ.— Առանց ընդհատումի, անվերջ, շարունակ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ բնատրուքիւն ունէին երկու եղբայրները: — Օր մը ի՞նչ պատահեցաւ: — Երկամաքաբերը միայն ա՞ղ կ'աղան: — Մեծ եղբայրը աղքատ մէկն էր. ինչո՞ւ կ'ուզէր անոնի հրաշագործ երկամաքաբը: — Կրցա՞ւ աշխատցնել գայն. վերջը ի՞նչ եղաւ: — Այս տեսակ գրուածքներուն ի՞նչ կ'ըսեն:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Շաղկապ կը կոչուին այն բառերը, որոնք մէկէ աւելի բառեր կամ խօսքեր իրարու կը կապեն. օրինակ՝ այս գիրքը իմն է, սակայն այդ տեսակը իմն չէ, իսկ գրիչը քրոջս կը պատկանի. սակայն, իսկ շաղկապ են:

55. Պ Ա Ն Դ Ո Ւ Խ Տ Ի Ե Ր Գ

Կոռ'ւնկ, ուսկէ՞ կու գաս, ծառայ եմ ձայնիդ,
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս,
Մի՛ վագեր, երամիդ շուտով կը հասնիս,
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Թողեր եմ ու եկեր արտերս ու այգիս,
Քանի որ ա՛յս կ'ընեմ, կը քաղուի հոգիս,
Կոռ'ւնկ, պահ մը կեցիր, ձայնիկդ հոգիիս.
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Ո՛չ լուր օր գիտեմ, ո՛չ ալ կիրակիմ,
Շամփուրն է գարկեր գիս, բռնած կրակիմ,
Այրիս չեմ հոգար, ձեզմէ կարօտ եմ.
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:



Աշունն է մօտեցեր, կ'երբաս տարագիր,
Երամ ես ժողվեր հագարներ ու բիւր.
Ինձ պատասխան չտուիր, ելար ու գացիր.
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն գնա՛, հեռացիր...

ԲԱԹԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- խապրիկ.— Թուրքերէն բառ, կը նշանակէ լուր:
- Երամ.— Թուրքերէն բառ:
- Լուր օր.— Գործի օր:
- Շամփուր.— Միս խորովելու յատուկ երկաթէ շիշ:
- Տարագիր.— Աքսորական, պանդուխտ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ո՞վ է այս ոտամատրիմ մէջ խօսող անձը: — Որո՞ւ կ'ուզէ իր խօսքը: — Ի՞նչ տեսակ քաչուն է կոռ'ւնկը: — Ո՞ր աշխարհի մասին է խօսքը այստեղ: — Պատասխան տուա՞ւ կոռ'ւնկը: — Ի՞նչ է տարբերութիւնը պանդուխտին եւ տարագիրին:

56. Ի Մ Ա Ս Տ Ո Ի Ն Մ Ա Ն Ո Ի Կ Ը

1

Արեւելքի թագաւորը պատճառ կը փնտռէր կռուի
բոնուելու Արեւմուտքի թագաւորին հետ:

Նամակ գրեց ու ըստւ. «Արեւմուտքի՛ թագաւոր,
քու ձեռք որ այդտեղ խրինջաց, իմ ձիւս այստեղ վախ-
ցաւ»:

Արեւմուտքի թագաւորը չհասկցաւ Արեւելքի թա-
գաւորին միտքը: Կանչեց իր նազիր - վեղիրները, որ-
պէսզի բացատրեն, թէ ի՞նչ ըսել կ'ուզէ Արեւելքի թա-
գաւորը:

Բայց մէկը շղտնուեցաւ, որ կարենար բացատրու-
թիւն մը տալ:

Տեսաւ, որ շ'ըլլար, դեսպաններ զրկեց իր երկրին
ամէն կողմը, որպէսզի իմաստուն մէկը գտնեն եւ բե-
րեն պալատ:

Դեսպանները հոս ու հոն ինկան, շատ փնտոեցին
իմաստուն մարդ մը, որ Արեւելքի թագաւորին միտքը
հասկնար:

Յուսահատ ետ կը դառնային, երբ, վերադարձի
ճամբուն վրայ, դիւղէ մը անցնելու ատեն, տեսան մա-
նուկ մը, որ քարին վրայ նստած իրենց կը նայէր:

- Տղա՛յ, - հարցուցին դեսպանները, - ո՞ւր է
հայրդ:

- Հայրս, - պատասխանեց մանուկը, - վէճ կը
ցանէ:

- Ի՞նչպէս թէ վէճ կը ցանէ. ի՞նչ ըսել է վէճ ցա-
նել, - կրկին հարցուցին թագաւորին դեսպանները:

- Ա՛յ, սա ճամբուն վրայ, - մատով ցոյց տուաւ
մանուկը, - հայրս արտ մը ունի. անցնող դարձողը կը

մանէ ներս, վարունդ կը կտրէ, ձմերուկ կը փրցնէ,
սոխ կը քաղէ: Հայրս ալ անոնց հետ շարունակ կը վիճի
ու կը կռուի:

- Մա՞յրդ ուր է հապա:
- Մայրս ալ արցունք փոխ կու տայ:
- Ա՞յդ ինչ կը նշանակէ:
- Ահա՛ թէ ինչ կը նշանակէ. դիւղին մէջ մէկը որ
մեռնի, մայրս մեռելտունը երթալով կու լայ, արցունք
փոխ կու տայ:

2

Դեսպանները տեսան, որ այս տղան շատ սրամիտ
եւ իմաստուն տղայ է: Մտովի ըսին. «Կայ չկայ, այս
տղան է, որ պիտի հասկնայ Արեւելքի թագաւորին
ըսել ուղածը»:

Կ'առնեն մանուկը, կը տանին թագաւորին եւ կը
պատմեն ամէն բան:

Թագաւորը կ'ըսէ.

- Խելո՛ք տղայ, եթէ Արեւելքի թագաւորին միտ-
քը բացատրես, թագաւորութեանս կէսը քեզի կու
տամ: Արեւելքի թագաւորը ինձի նամակ է դրեր եւ
կ'ըսէ, թէ քու ձեռք որ այդտեղ խրինջաց, իմ ձիւս այս-
տեղ վախցաւ: Ի՞նչ ըսելէ ասիկա. այդպէս բան կա-
րելի՞ է:

- Թագաւորը ապրած կենայ, - ըստ մանուկը,
- Արեւելքի թագաւորը պատճառ կը փնտռէ, որ կըռ-
ուի բոնուի քեզի հետ: Ինձի երեք հարիւր ձիււոր
տուր, ես անոր պատասխանը կու տամ:

Իմաստուն մանուկը առաւ երեք հարիւր ձիււորը
եւ դադտնի հրահանգներ տուաւ ամէն մէկուն: Ապա
ճամբայ ելան բոլորը միասին:

Երեք հարիւր ձիաւորները դացին, մտան Արեւելքի թագաւորին մայրաքաղաքը եւ ջարդեցին բոլոր շունները:

Արեւելքի թագաւորը այս որ իմացաւ, իր քով կանչեց ձիաւորները եւ հարցուց.

— Ինչո՞ւ ջարդեցիք իմ քաղաքիս շունները:

— Մեր թագաւորի հօտին մէջ գայլեր էին ինկեր, — պատասխանեցին ձիաւորները, — մեր հովիւները ձայն տուին, պոռացին ձեր շուններուն. բայց շուները չեկա՞ն ու չեկան. ասոր համար մենք ալ եկանք ու կոտորեցինք բոլորը:

— Այդ ի՞նչպէս կ'ըլլայ. այնտեղէն այստեղ ձայն կը լսուի՞, — հարցուց թագաւորը:

— Հասկա այդ ի՞նչպէս է, որ մեր թագաւորին ձիուն խրխինջը հոս կը լսուի, իսկ մեր հովիւներուն ձայնը չի լսուիր, — ըսին ձիաւորները:

Արեւելքի թագաւորը մատը խածաւ զարմանքէն: Հասկցաւ, որ ուժի դէմ ուժ կայ, եւ այլեւս կոռուի մասին չմտածեց:

Իսկ Արեւմուտքի թագաւորը իր թագաւորութեան կէսը տուաւ իմաստուն մանուկին եւ զայն իր խորհրդատուն դարձուց: Անոր հայրն ու մայրն ալ բերել տուաւ զիւղէն եւ իր պալատին մէջ բնակեցուց:

ԱՌԱՄ.— Մէկ սուտը տասը տուն կ'աւրէ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Նագիր — վեզիր.— Թուրքերէն բառ. կը նշանակէ նախարար:
- Հօտ.— Ոչխարներու խումբ:
- Կոտորել.— Ջարդել, սպաննել:
- Խորհրդատու.— Խորհուրդ տուող:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Արեւելքի թագաւորը ի՞նչ գրեց Արեւմուտքի թագաւորին: — Ի՞նչ ըսել կ'ուզէր: — Արեւմուտքի թագաւորը հասկըցա՞ւ անոր նպատակը. ի՞նչ ըրաւ: — Դեսպանները ո՞վ տեսան ճամբան. ի՞նչ հարցուցին եւ ի՞նչ պատասխան ստացան: — Իմաստուն մանուկը ի՞նչ ձեռով բացատրեց Արեւելքի թագաւորին միտքը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Գլխաւոր շաղկապներն են. եւ, ու, ալ, անգամ, նաեւ, այլ, իսկ, կամ, թէ, եթէ, որ, որովհետեւ, քանի որ, երբ, մանաւանդ, սակայն, արդարեւ, թէեւ, ոչ միայն, քան թէ, ուրեմն, նոյն-իսկ, իբր թէ, մինչդեռ եւայլն:

57. Ա Մ Ե Ն Ա Կ Ա Տ Ա Ր Ե Ա Լ Ը

Օրուան աշխատանքէն յոգնած, ընկողմաներ էր Փրկիչը, տերեւախիտ ծառի մը հովանիին տակ:

Յոգնա՞ծ էր, բայց դարձեալ կրնար ականջ դնել իր աշակերտներուն խօսակցութեան:

Աշակերտները կը վիճէին այն մասին, թէ Աստուծոյ ստեղծագործութիւններուն մէջ ո՞րն է ամենակատարեալը:

Մէկը ամենակատարեալը կը համարէր ծիածանը, որ կը փայլէ երկրի բոլոր գոյներով. ուրիշ մը՝ թանկագին քարերը, երրորդը՝ ամպերը:

Յովհաննէս այն կարծիքը կը յայտնէր, թէ ամենէն գեղեցիկ բանը մանկան պայծառ ու անմեղ դէմքն է: Երուանի Պետրոս ըսաւ.



— Աշխարհի մէջ ի՞նչ բանի վրայ նայիք, կը տեսնէք, որ դեղեցիկ է :

Յուդա Իսկարիովտացի պատասխանեց .

— Ճիշդ է, որ մեր առջեւ ամէն բան հրաշագեղ է, բայց եւ այնպէս տարբերութիւն մը կայ անոնց միջեւ : Արդեօք արմաւենին իր ճկունութեամբ ու դեղեցկութեամբ չի՞ պերազանցեր հասարակ խոտը, որ որեւէ սպառող չի տար եւ հաղիւ գետնէն վեր կը բարձրանայ :

2

Փրկիչը, ընկողմանած, ահանջ կը դնէր այս խօսքերուն :

Յովհաննէս դարձաւ անոր կողմը ու ըսաւ .

— Ուսուցի՛չ, ես դիտեմ, որ յոյնած ես : Բայց քու աշակերտներդ կը վիճին սա բանին վրայ, թէ կարելի՞ է արդեօք մեր Հօր ստեղծադործութիւններէն մէկը ամենէն աւելի կատարեալ համարել :

Յիսուս նայեցաւ անոր ու ըսաւ .

— Այո՛, կարելի է :

Աշակերտները դարձեալ սկսան վիճիլ, չէին գիտեր, թէ Ուսուցիչը ո՛ր բանը ամենակատարեալ կը համարէ :

Անդրէաս ըսաւ .

— Տիրոջ ստեղծադործութիւններուն մէջ ամենակատարեալը աստղալից երկինքն է :

Յիսուս պատասխանեց .

— Երկինքի մէջ մի՛ փնտոեր այն բանը, զոր կըրնաս երկրի վրայ գտնել : Երկրի վրայ բան մը կայ, որ աւելի բարձր է, քան աստղերը :

Պետրոս ըսաւ .

— Ես ամենէն շատ կը դարմանամ լեռներուն վրայ : Կա՞յ բան մը, որ ապառաժեայ լեռնէն աւելի հզօր ու ահաւոր ըլլայ :

Յիսուս պատասխանեց .

— Այն բանը, զոր դուք կը փնտոէք, աւելի հզօր է : Յակոբ, Յովհաննէսին եղբայրը, ըսաւ .

— Ծովը աւելի հզօր է, քան լեռը : Մրրկալից ակիւնները կը փչրեն ապառաժը, մինչդեռ մէկը չկայ, որ չափէ ծովուն խորութիւնը :

Յիսուս պատասխանեց .

— Այն բանը, զոր դուք կը փնտոէք, աւելի խոր է, քան ծովը :

Պօսեցաւ Բարթողիմէոս, Յովհաննէս Մկրտչի նախկին աշակերտը .

— Ծաղիկներէն աւելի գեղեցիկ բան չկայ աշխարհիս մէջ : Չկայ բան մը, որ աւելի գեղեցիկ ըլլայ, քան չուշանը :

Յիսուս պատասխանեց .

— Այն բանը, զոր դուք կը փնտոէք, աւելի գեղեցիկ է :

Այն ատեն Փիլիպպոս ըսաւ .

— Դուք կը մոռնաք արեւը, որ իր ճառագայթնե-

բով կը լուսաւորէ ամբողջ աշխարհը եւ կը տաքցնէ
Երկիրը:

— Այն բանը, զոր դուք կը փնտռէք, աւելի տաք է:

Միւս աշակերտները լուռ նստած էին եւ չէին հա-
մարձակեր որեւէ կարծիք յայտնել:

Երկար լուռքենէ կաք նորէն խօսեցաւ Յովհաննէս.

— Ուսուցի՛չ, անշուշտ չես փափաքիր, որ մենք
խարխափինք անորոշութեան մէջ: Ըսէ՛, ո՞րն է ամե-
նակատարեալ բանը, զոր մենք չենք կրնար դոնել:

Յիսուս իր նայուածքը յառեց դէպի բարձրը եւ ը-
սաւ.

— Սի՛րար... .

ԱՌԱՄ.— Գէշին մերելը աղէկին վնասել է:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փրկիչ.— Յիսուս:

Հովանի.— Շուք, սառուեր:

Միածան.— Միբանի գօտի:

Մըրկալից.— Փոթորկոս:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ինչի՞ մասին կը վիճէին Յիսուսի աշակերտ-
ները: — Ո՞վ ինչ կարծիք յայտնեց: — Դուք որո՞ւն կարծիքը ա-
ւելի ճիշդ կը գտնէք: — Յիսուս ի՞նչ կը պատասխանէր իր աշա-
կերտներուն: — Ո՞վ էր ամենէն վերջ խօսողը: — Ի՞նչն է եղբր ա-
մենակատարեալ բանը: — Դուք ի՞նչ կարծիք պիտի յայտնէիք, ե-
թէ ձեզի հարցնէին, թէ ի՞նչ է ամենակատարեալ բանը:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Չայնարկութիւն կը կոչ-
ուին այն բառերը, որոնք վախ, ցաւ, բաղձանք, զրդ-
ջում կամ բարկութիւն կ'արտայայտեն, օրինակ՝ ո՛հ,
այս ալ պիտի տեսնէիմք, երանի թէ դատս պատրաս-
տած ըլլայի, ո՛հ, երանի թէ ձայնարկութիւն եմ:



58. Ժ Ա Մ Կ Ո Չ Ը Ե Ի Ո Ի Խ Տ Ա Ի Ո Ր Ը

Օրուան մէկը, կեռ պոչ շունը,
իր տիրոջմէն մեղացած,
Միտքը դրաւ ձրգել տունը,
Փայտչի՛ր, երբա՛ր, ա՛լ չգալ:

Բայց եկուր տես, զրտաւ ընկեր
Մեր շատախօս ափորը:
Չափեցին վար, չափեցին վեր,
Ինկան մամբայ միասին:

Գրտիմք մըտած՝ ափոր ու շուն
Ոտքի տուին լեռ ու ձոր.
Յերկն անցաւ, եղաւ իրկուն,
Վանքի մը մօտ կանգ առին:

— Ա՛լ հերիք է, եղբա՛յր ափոր,
Ըսաւ շունը խիստ յոգնած.
Եկուր պառկիմք, քնանամք որ
Ատտուն կանուխ արթնանք:

Ափորն ելաւ ու բառեցաւ
վանքի վերի տանիքը.
Շունն ալ փոքեց իր չորս բաքը,
Դըրան առջեւ երկնցաւ:

Մեր նամբորդներն այսպէս վատ, լաւ
Մութն անցուցին կիսափուն:
Լուսածագին՝ ափորն ելաւ,
Կանչեց իր սուր կուկլիկուն:

Ո՛րտեղէն ուր, այդ չար ժամուն,
Զայնը լըսեց աղուէսը.
Վագեց եկաւ, տեսաւ արթուն,
Մեր ափորին երեսը:

— Բարի լոյս քեզ, ափոր՛ր եղբայր,
Աղուէսն ըսաւ քիթը վեր;
Խնդրեմ, եկուր, շո՛ւտ դուռը բաց,
Վանքն աղօթել եմ եկեր:

— Բարով եկար, քաւոր՛ր աղուէս,
Աչքիս վըրայ տեղ ունիս,
Գալըդ բարի, աղէկ կ'ըսես,
Ինձի կու տաս աւետիս:

Բայց տե՛ս, վանքին դրանը քով
Մեր ժամկոչը պառկեք է,
Արքնցո՛ւր, որ բանայ դուռը,
Ըսաւ վարպետ ափորը:

Մեր աղուէսը, սուտ ուխտաւոր,
Վանքի դըրան մօտեցաւ.
Բայց երբ տեսաւ զամփոք խոշոր,
Ոտքը տակը ծալուեցաւ:

Շունն է յանկարծ հաջեց հա՛ֆ-հա՛ֆ,
Ցատկեց տեղէն մէկ կանգուն,
Վըրան հասաւ այն աղուէսին,
Սեւ ուխտ բերաւ իր գլխուն:

Լեղապատառ ու կաղնիկաղ,
Աղուէսն հագիւ հոգին փրկեց.
Երբ որջն հասաւ արիւնքաքախ,
Խոր շունչ առաւ ու ըսաւ.

— Ձէ՛, քանի այս վանքն այսպէս դեռ
Ժամկոչ ունի իր դուռը,
Աստուած վըկայ, իր կեանքին մէջ
Ա՛լ ուխտաւոր չի տեսներ...

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կեռ.— Մուռ, աղեղի ձեւով:


Հերիք է.— Բաւական է:

Կիսափուն.— Կէս քուն:

Լուսածագ.— Լոյսին ծագիլը, առաւօտ:

Քաւոր.— Կնքաճայր:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Օր մը ի՞նչ մտածեց շունը: — Ո՞վ ընկերա-
ցաւ իրեն: — Ո՞ւր գացին: — Աստուծո՞ւն ի՞նչ պատահեցաւ: — Ի՞նչ
խօսակցութիւն տեղի ունեցաւ աղուէսին եւ ափորին միջեւ: —
Աղուէսը ինչո՞ւ եկեր էր վանք: — Յանկարծ ո՞վ տեսաւ: — Ի՞նչ
եղաւ վերջը: — Ի՞նչ ըսել է «սեւ ուխտ բերաւ իր գլխուն»: —
Աղուէսը ի՞նչ եզրակացութիւն հանեց:



59. Բ Ա Ձ Է Ն

1

Ո՞ր թոշուներ կրնար խուսափիլ իշխանին որսկան բաղկի սրատես աչքէն ու հօր մագիլներէն:

Իշխանը հին որսորդ էր, սար ու ձոր որսի կ'երթար միշտ, և զեռ պատահած չէր, որ առանց որսի տուն վերադառնար:

Բաղէն դարձած էր իշխանին հաւատարիմ ընկերը:

— Ա՛յ, բաղէ է հա՛... երանի տիրոջը, — կ'ըսէին որսորդները:

Անգամ մը, իշխանը հետո տեղ որսի գնաց. կէսօրուան տաքին խիստ ծարաւ զգաց: Սիրտը կ'այրէր, բայց պուտ մը ջուր չկար, որ խմէր, դոխանար:

Հսկայ ժայռի մը տակէն անցնելու աստն տեսաւ, որ վերէն, ժայռին ճեղքուածքէն, ջուրի կաթիլներ կը կաթկթին: Փայլեցան իշխանին նուաղուն աչքերը,

մօտեցաւ, ափր պահեց ջուրի կաթիլներուն տակ: Այդ պահուն բաղէն յանկարծ թափահարեց թեւերը ու զետին թափեց հաւաքուած ումպ մը ջուրը:

Իշխանը զայրացաւ, մտրակով հարուածեց բաղէն և դարձեալ ափր պահեց ջուրի կաթիլներուն տակ:

Բաղէն, կատաղի յարձակումով մը, կրկին թափեց թանկագին հեղուկը:

— Ա՛խ դու, գիշատի՛չ, ևս ծարաւէն կը մեռնիմ, իսկ դուն չես ձղեր, որ ումպ մը ջուր խմեմ, — գոչեց զայրացած որսկանը և զետին զարկաւ արդէն վերաւոր թոշունը:

2

Հարուածը մահացու էր: Ծունչը փչելէ առաջ՝ թոյլ կոխնչ մը արձակեց խեղճ թոշունը, տակն ու վրայ ընկելով իշխանին այրած սիրտը:

Բայց ինչո՞ւ արդեօք բաղէն չէր թողուր, որ տէրը խմէր ջուրը: Իշխանը բարձրացաւ ժայռին վրայ, ուրկէ կը կաթկթէր ջուրի բարակ թելը: Կ'ուզէր տեսնել սկունքը և հոնկէ յաղեցնել իր պապակը:

Ժայռին վրայ կեցած՝ ուշադրութեամբ դիտեց շուրջը և վախէն քարացաւ: Վիթխարի օձ մը, խայթոցը դուրս հանած, թոյն կը կաթեցնէր ջուրին մէջ:

Իշխանը ամբողջ մարմնով սարսուաց. խոշոր քար մը վերցուց զետնէն և ջախջախեց իժին զլուխը: Ապա իջաւ վար, մօտեցաւ անշնչացած բաղէին, որուն կտուցէն արիւն կը կաթէր զեռ, և արձանացած մնաց հոն:

Հաւատարիմ թոշուներ իր կեանքին գնով փրկած էր տէրը մահէն:

ԱՌԱԾ.— Ծանր քարը իր տեղը կը մնայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բազէ.— Որսի թռչուն մը:

Խուսափիլ.— Խոյս տալ, փախչիլ:

Մազիլ.— ճիրան, վայրի թռչուններու ճանկ:

Նուազում.— Մարմրուն, մարեւու վրայ:

Գիշատիչ.— Գիշատող, յօշոտող, կտոր — կտոր, բզեկ — բզեկ
րնոյ:

Կռիւնչ.— Բազէններուն հանած մայնը:

Պապակ.— Սաստիկ ծարաւ:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ գիտէք բազէի եւ վայրի թռչուններու
մասին: — Անգամ մը ի՞նչ պատահեցաւ իշխանին, որսի առեմ:
— Ուրիշ հաւատարիմ յիենդանիի ամուսն գիտէ՞ք: — Օձի ո՞ր տե
սակները ծանօթ են ձեզի. ամենցմէ ո՞րը աւելի վտանգաւոր է:

60. Ա Ր Ջ Ը

1

Բրդոտ, սեւ արջ մը կեցած էր հսկայ ընկուզների
մը տակ: Իր շուրջը կը խաղային երկու սիրուն քոթոթ-
ներ, մէկը՝ մոխրագոյն, միւսը՝ սեւ: Մենք, քեռիս եւ
ես, հեռուէն կը դիտէինք քոթոթներուն խաղը:

— Եկեր են ընկոյզ ուտելու, — բացատրեց քեռիս:

Քիչ ետք մայր արջը բարձրացաւ ծառը եւ սկսաւ
ճիւղերը թօթուել: Ընկոյզները կարկուտի պէս գետին
կը թափէին: Սեւ քոթոթը բերանը կը նետէր հաւաքած
ընկոյզները, կը կտորէր, կճեպը կը հանէր եւ կ'ուտէր:
Միւսը, մոխրագոյնը, թափուած ընկոյզները չէր ու-
տեր, այլ տեղ մը կը հաւաքէր:

Ծառին վրայէն մայր արջը վար կը նայէր տես-
նելու համար, թէ քոթոթները ի՞նչ կ'ընեն: Երբ տես-
աւ, որ սեւ քոթոթը ձեռքը ինկած բոլոր ընկոյզները
կ'ուտէ, վար իջաւ ծառէն, բռնեց անհնազանդ սեւուկը
եւ լաւ մը տփեց: Յետոյ նորէն բարձրացաւ ծառը:

Բայց սեւուկը խելքի չեկաւ, չխրատուեցաւ կե-
րած ծեծէն: Այս անգամ մայրը ծառէն իջաւ բարկա-
ցած, կրկին ծեծ քաշեց եւ ահագին քար մը դրաւ խելճ
քոթոթի մէջքին վրայ:

— Կը տեսնե՞ս ինչպէս կը պատժէ անհնազանդ քո-
թոթը, — հազիւ լսելի մայնով ըսաւ քեռիս: — Արջն ալ
խրատելու իր ձեռն ունի:

Մայր արջը նորէն ծառ բարձրացաւ, խսկ սեւուկը
ծանր քարին տակ կը մրմռար, թաթերը կը շարժէր
եւ կ'աշխատէր վրայէն անդին հրել. բայց ի զուր:

Բաւական ընկոյղ թափելէ ետք, մայր արջը վար իջաւ ծառէն եւ զնաց վերցուց քարը սեւուկին վրայէն: Բայց սեւուկը անշարժ պառկած էր, տեղէն չէր շարժեր:

Անհանդիստ մայրը պահ մը ականջ դրաւ քոթոթի բերնին եւ յանկարծ այնպէս ոռնաց, որ սար ու ձոր դղրդացին:

— Վա՛յ, տունդ քանդուի, ա՛րջ... քոթոթը սատկեր է, — զոչեց քեռիս:

— Սատկե՞ր է, — վախով հարցուցի ես:

— Այո՛, վրայի քարը ծանր է եղեր: Է՛հ, ի՞նչ Ըսես, արջու զո՛րծ...

Ես քարացած կը նայէի ձորէն վար:

Մայր արջը ակոտնեռով կը քաշէր սեւուկին ականջները, կը լզէր, կը մրմուռ... Ի վերջոյ քոթոթը կենդանութեան նշաններ ցոյց տուաւ: Մայրը դրկեց զայն, վազեց դէպի գետը եւ մխրճեց ջուրին մէջ:

Քանի մը վայրկեան սեւուկը ջուրին մէջ պահելէ ետք, մայր արջը դուրս հանեց զայն ողջ ու առողջ: Թէ՛ մայրը եւ թէ՛ մոխրագոյն քոթոթը ուրախ-ուրախ կը վազվզէին սեւուկին շուրջ, կը լզէին թաց մարմինը եւ կատակներ կ'ընէին հետը:

Մայրն ու ձագերը այնքան ուրախ էին, որ ես ու քեռիս ալ սկսանք ուրախանալ:

Պահ մը ետք երեքն ալ հեռացան գետին մօտէն, հաւաքուած ընկոյղները հոն մ'ոռցած:

— Վա՛յ, տունդ քանդուի, ա՛րջ, թիչ մնաց սպաննէր խեղճ քոթոթը, — կ'ըսէր քեռիս ինք իրեն...

ԱՌԱԾ.— Ես աղա, դուն աղա,
Մեր աղունը ո՞վ աղայ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քոթոթ.— Արջու ձագ:

Քեռի.— Մօրեղբայր:

Կնեպ.— Ընկոյղին կեղեւը, վրայի հաստ պատեանը:

Տփեւ.— Ծեծել:

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ կ'ընէիմ մայր արջը եւ իր քոթոթները: — Արջերը ի՞նչ կը սիրեն ամենէն աւելի. ընկոյղ, մե՞զը, տա՞նն: — Մայր արջը ինչո՞ւ չէր ուզեր, որ քոթոթները ուտեն քափուած ընկոյղները: — Ի՞նչ պատիժ տուաւ ամենագանդ քոթոթին: — Ձղջա՞ց ըրածիմ վրայ: — Քամի՞ տեսակ արջ կայ. ո՞ւր կը բնակիմ արջերը ընդհանրապէս:

61. Ք Ա Ր Տ Է Ձ

— Տա՛տ, ակնոց դիր ու լաւ տես, Ամբողջ աշխարհն է վերան...
Ձե՞ս գարմանար, տատի՛ ման:

Տատը ինչո՞ւ գարմանայ,
Բայց կը փորձէ բռնն ահա՛.
— Կը գարմանամ, ի՛մ պունուր:

— Սա ցամաք է, իսկ սա՛ ջուր,
Լեռներ, ծովեր քով քովի,
Ջուրը շատ է աւելի,
Բայց թէ յանկարծ բարձրանա՛յ...
— Ձէ՛, իր տեղը բող մընայ:



- Է՛, լա՛ւ, նստի՛նք շոգե՛նաւ,
 Իջնե՛նք դէպի տա՛հ հարաւ.
 Արդէ՛ն հասանք Աֆրիկա,
 Ա՛լ ասկէ տա՛հ տեղ չըկայ:
 Նեղոսն ահա կը գոռայ:
 Կոկորդիլոսն է՛ կու լայ:
 Կեղծ լաց է, տա՛տ, չըխարուիս.
 Զըմօտե՛նա՛ս, կ՛ուտէ՛ քեզ...
 - Այդ ի՞նչ կ՛ըսես... ըզգոյշ եմ:
 - Տա՛տ, շուտ ըրէ, արտորա՛,
 Արդէ՛ն մըտանք Սահարա:
 - Այդ ի՞նչ բան է Սահարան.
 - Ըսեմ, ըսեմ, տատի՛ ման,
 Տա՛հ աւագ է ծայրէ ծայր,
 Ո՛չ ծաղիկ կայ, ո՛չ ալ ծառ.
 Անվերջ տօթ է, վառ արեւ,
 Ո՛չ գով քամի, ո՛չ անձրեւ...
 Ահա՛ քեզի անապատ:
 Շալըդ հանէ՛, տա՛հ է տա՛տ.
 Սահարայէ՛ն շիկացած

Հիմա ուղիդ իջնե՛նք ցած...
 Եկանք հասանք Հնդկաստան.
 Ի՞նչ ընկոյզներ ամըման,
 Դըղումի չափ, ա՛յսքան, տա՛տ.
 Համն ալ՝ ինչպէս քաղցր կաք...

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տատ, տատի.— *Մեծ մայր:*

Պուճուր.— *Փոքր, փոքրիկ (տղայ):*

Աֆրիկա.— *Աֆրիկէ:*

Արտորալ.— *Աճապարհլ:*

Սահարա.— *Ընդարձակ անապատ՝ Աֆրիկէի հիւսիսը:*

Տօթ.— *Սաստիկ տաք:*

Քամի.— *Հով:*

Շիկացած.— *Տաքէն կարմրած. այստեղ կը նշանակէ չափէն աւելի տաք:*

ՀԱՐՅՈՒՄՆԵՐ.— Ի՞նչ է քարտեզը: — Մեծ մայրիկն ու բոռը
 ի՞նչ բանի վրայէն կը մամբորդէին: — Ո՞ւր գացին: — Աշխարհի
 մէջ զո՞ւրը աւելի է քէ ցամաքը: — Քանի՞ մասի կը բաժնուի
 ցամաքը: — Որո՞նք են ովկիանոսները: — Ո՞ր ծովերը ծանօթ են
 ձեզի: — Ի՞նչ է հնդկընկոյզը. տեսա՞՞ծ էք զայն:

62. Ո՞Վ ԷՐ ԽԵԼ ԱՅԻՆ

1

Շատ դարեր առաջ բարի թագաւոր մը կ'ապրէր: Ան սովորութիւն ունէր ամէն իրիկուն հասարակ մարդու հագուստով շրջիլ քաղաքին մէջ, որպէսզի տեսնէ, թէ ինչպէս կ'ապրի իր ժողովուրդը:

Իրիկուն մը, իր սովորական պտոյտը ըրած ատեն, տեսաւ աղքատ մարդ մը, որ իր խրճիթին դրան առջեւ նստած կ'աղօթէր ու կ'ըսէր.

— Տէ՛ր Աստուած, տո՛ւր ինձի հարիւր ոսկի:

Թագաւորը լսեց ու անցաւ: Քիչ մը քալելէ ետք, տեսաւ ուրիշ աղքատ մը, որ նոյնպէս կ'աղօթէր ու կ'ըսէր.

— Տէ՛ր թագաւոր, տո՛ւր ինձի հարիւր ոսկի:

Հետեւեալ օրը, թագաւորը հրամայեց ամսէի մը վրայ հարիւր ոսկի դնել, ոսկին ծածկել փիլաւի տակ եւ զրկել այն աղքատին, որ թագաւորէն հարիւր ոսկի կը խնդրէր:

«Այն յիմարին ալ թող Աստուած տայ», — ըսաւ թագաւորը ինքն իրեն, միւս աղքատին մասին մտածելով:

Թագաւորին հրամանը կատարուեցաւ: Հարիւր ոսկին, վրան փիլաւով պատած, տարին դրին այն աղքատին առջեւ, որ թագաւորէն հարիւր ոսկի կը խնդրէր:

2

Նոյն օրը, Երեկոյեան, թագաւորը նորէն դուրս եկաւ պայտակն՝ տեսնելու համար, թէ ի՞նչ կ'ըսէ այն աղքատը, որուն հարիւր ոսկի զրկած էր:

Աղքատը, նորէն իր խրճիթին առջեւ նստած, կ'աղօթէր ու կ'ըսէր դարձեալ.

— Տէ՛ր թագաւոր, տո՛ւր ինձի հարիւր ոսկի:

Թագաւորը, այս օր լսեց, շատ դարմացաւ: Մօտեցաւ աղքատին եւ հարցուց.

— Ա՛յ մարդ, թագաւորին կողմէ այսօր քեզի համար փիլաւ չըբերին:

— Բերին, շնորհակալ եմ:

— Կերա՞ր:

— Կերայ:

— Ի՞նչ կար մէջը:

— Նուշ ու քիչմիշ:

— Ուրի՞շ:

— Գառան միս:

— Ուրիշ բան չկա՞ր:

— Ո՛չ:

— Բոլորը կերա՞ր:

— Ո՛չ, շատ էր. մնացածը տուի ինձի պէս աղքատ ու քաղցած զրացիիս:

Թագաւորը մօրուքը շփեց ու հեռացաւ: Քիչ անդին տեսաւ միւս աղքատը, որ իր աղօթքին մէջ կ'ըսէր.

— Տէ՛ր Աստուած, շնորհակալ եմ, որ լսեցիր աղօթքս եւ հարիւր ոսկի տուիր ինձի:

Թագաւորը համոզուեցաւ, որ խելացին այս աղքատն էր: Ան զիմած էր ո՛չ թէ թագաւորին, այլ Աստուծոյ:

ԲԱՌԵՐ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ


Շքշիլ:— Պարտիլ:

հրմիք:— Պզտիկ տուն, տնակ:

Քիշմիշ:— Առանց կուտի եւ շորցուած խաղող:

Քաղցած:— Անօթի:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ.— Երկու աղփամները ի՞նչ կ'ըսէին իրենց ա-
ղօքին մէջ: — Որո՞ւն խնդրամբ կատարուեցաւ: — Ի՞նչ եզրա-
կացութիւն կրնաք համել այս պատմութեան:



Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ Ց Ա Ն Կ

	ԴԱՍ	ԷՋ	ԴԱՍ	ԷՋ
1. Առաջին օրը դպրոցին մէջ	3	26. Ոգնին եւ օճը	66	
2. Առաջին բարեկամը	6	27. Արծիւն ու կաղնին	68	
3. Թռչունի մտածում	8	28. Դերամուն	70	
4. Մատիտը	10	29. Հաւատարիմ պահապանը	73	
5. Ի՞նչպէս կը գրէին հին ատեն	12	30. Կապիկն ու ակնոցը	75	
6. Ո՞վ ունի...	15	31. Առիւծին երազը	77	
7. Փոքրիկ հովիւը	17	32. Մեծ Արջը	79	
8. Խորամանկ գայլը	20	33. Գեղեցկութիւն	81	
9. Ամ չի գիտեր...	23	34. Աղփամն ու իր շունը	82	
10. Թուղբը	25	35. Շաքարը	83	
11. Կենդանիները եւ երաժշտութիւնը	28	36. Ի՞նչպէս կը պատրաստեն շաքարը	85	
12. Ճերմակ ծաղիկներ	31	37. Ազուէսն ու ագռուը	88	
13. Բարեկրթութիւն	33	38. Հայաստանի ֆարսէզը	90	
14. Ճափոնական անօթները	35	39. Արարատի վրայ	93	
15. Գայլը եւ արագիլը	38	40. Փոքրիկ հացագործը	96	
16. Յանցամբը իմա չէ	40	41. Գայլն ու իր ձագերը	97	
17. Մեր կատուն	42	42. Հերոս շունը	99	
18. Եկան ու գացին	45	43. Գանձը	103	
19. Գիճորը	46	44. Արաբատ եւ Արագած	104	
20. Նարինջ կերէք	50	45. Հայաստանի մեծ լիճները	107	
21. Սասունցի Դաւիթ կռուի կ'երբայ	52	46. Կաթիլ մը մեղր (Ա. մաս)	110	
22. Գիսաւորը	55	47. Կատուն եւ շունը	113	
23. Թագաւորը եւ հովիւը	58	48. Կօշկակարի խանութին մէջ	116	
24. Սասունցի Դաւիթի յաղթանակը	61	49. Կաթիլ մը մեղր (Բ. մաս)	120	
25. Խելացի շուներ	63	50. Արդարասէր դատաւորը	122	

ԴԱՍ	Էջ	ԴԱՍ	Էջ
51. Արաբը	125	57. Ամենակատարեալը	141
52. Կարիլ մը մեղր (Գ. մաս)	128	58. ժամկոչը եւ ուխտաւորը	145
53. Մեր Բասարը	130	59. Բազէն	148
54. Ծովուն ջուրը ինչո՞ւ ազի է	133	60. Արջը	151
55. Պանդուխտի երգ	136	61. Քարտեզ	153
56. Իմաստուն մանուկը	138	62. Ո՞վ էր խելացին	156

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԵՆ

Լ. Դ.

1. ՀԱՅԿԱՐԱՆ, Նախապատրաստական . . .	500
2. ՀԱՅԿԱՐԱՆ, Ա. տարի	500
3. ՀԱՅԿԱՐԱՆ, Բ. տարի	500
3. ՀԱՅԿԱՐԱՆ, Գ. տարի	600
5. ՀԱՅԿԱՐԱՆ, Դ. տարի	700
6. ՀԱՅԿԱՐԱՆ, Ե. տարի	800
7. ՀԱՅԿԱՐԱՆ, Զ. տարի	1000
8. ՀԱՅԿԱՐԱՆ, Է-Ը. տարի	1300

ԳԻՆ՝ 500 Լ. Դ.

Կեղրոնատեղի

LIBRAIRIE HAMASKAÏNE
10, Rue Hussein Beyhoum
Zokak el Blatt
Beyrouth — Liban

7802500